



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.


Դու կարող ես.

պատմենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



11 | 2880 | 26500002 51
2880 | 26500002 51





Հ Ա Խ Հ ԼՈՒՍԴՈՂԿՈՄԱՏ

ՍՈՅԻԱՎԱԿԱՆ ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՐՑՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՍԽԵԱՆ ԴՊՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

431.99-5

Դ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. Մ Ա Ս

ԴԱՄԱԳԻՐՁ ՅՈՅՆԱՄՅԱ, Ա ԱՍԽԵԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒ ՏԵԽՆԻԿՈՒՄՆԵՐԻ
ՅԵՎ ՈՒՂԵՑՈՒՅՑ, ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Գ. բարեփոխված ու լրացրած հրատարակություն

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ. ՅԵՐԵՎԱՆ 1928

Հր. № 833 Գրառեպիտը № 902 (բ) Տիրաժ 6000
Պետքատի առաջին տօպագան Վազարչապատում.
Պատվեր № 242

1-ԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԲԱՆԸ

Այս գրքի Ա. և Բ. մասն ել I աստիճանի դպրոցներում կառարվող լեզվական գործնական աշխատանքների ամփոփումն են՝ վորոշ սիստեմի վերածված, և II աստիճանի դպրոցների ստորին խմբերի դասաստունների համար ծառայելու լեն իրեն ուղեցուցից մերկու գիրքն ել գործնական նպատակ են հետամտում—աշակերտներին դիտել տալ այս կամ այն լեզվական լեզուովթը և այդ գիտողություններից հանած լեզրակացություններով լուրացնել տալ՝ հալոց լեզվի ուղղագրությունը, կետագրությունն ու, վորոշ չափով, վոճակ չետևապես միանգամայն խուսափելով գոզմաժիգմից ու քերեկանությանն առարկայական բնույթ տալուց, լեզվական վոչ մի կանոն կամ վորոշում ուսուցիչը պատրաստի չպետք ե տա աշակերտներին. այդ կանոններն ու սահմանումներն աշակերտների դիտողությամբ ու բանաձևումով պիտի լեռնանգան: Ինքնուրուցն գիտողությունն ու բանաձևումը զարգացնում են աշակերտի ակտիվությունը, հետաքրքրություն են առաջ բերում նրա մեջ, բարձրացնում նրա լեռանդը և արդյունքն ամրապնդում աշակերտի հիշողության մեջ:

Այս կամ այն դասի նրութ գարձած հողվածում վորեն նպատակ իրեն վորոշակի առաջադրելով, դասատուն առաջադրած նպատակին համապատասխան հատված պետք ե ընտրի այդ հողվածից (կարելի լեն նաև այս գրքի I մասի առաջադրություններից) և, աշակերտների ուղագրությունն իր առաջադրության վրա հրավիրելու համար, կենդանի զրույց ստեղծի նրանց հետ՝ հարց ուղատասխանի միջոցով, ընդ վորում, ուսուցչի հարցերը պիտի լինեն մտածված, հասկանալի ու վորոշ և համապատասխանեն այս կամ այն խմբի աշակերտների մտավոր զարգացման մակարդակին: Այսպես կոչված՝ հուշող հարցերից, հնարավոր չափով, պետք ե խուսափել:

Վորոշ նպատակով առաջարկած հարցերից հետո պետք է անցնել նրանցից բղխող լեզրակացության, վոր աշակերտներն

իրենք պիտի հանեն։ Ուսուցիչը շատ ել խստապահանջ չպետք է լինի կանոնների ու սահմանութերի բանաձեռութերի բառացի ճշտության նկատմամբ, քանի-վոր, առնասարակ, նման աշխատանքները գժվարին են, սակայն ուսուցիչը պետք է հետեւ, վոր բանաձեռութերի մեջ մտքի սխալներ չլինեն։ Վորովհետեւ բանաձեռում հետեւնք և վոչ միայն յուրացման, այլև սոեղծագործության, սինթեզի, իսկ աշակերտության վոչ բոլորի մեջ են դարդացած լինում այդ ունակությունները, ուստի դասատոնն պետք է աշխատի առաջ քաշել այդ ունակությունների տեսակերպից պակաս զարգացածներին։

Հատվածը գիտելով ու յերրակացություն հանելով՝ ամենինչ չպետք է վերջանա. ամենակարենորը—գործնականը՝ գեռ մնում եւ Բավական չե, վոր աշակերտը կանոններ կամ սահմանութեր յեղակացնի, բանաձեւ և իմանա. նա պետք է կարողանա այդ կանոնները գործնականորեն կիրարկել. Անա այդ նպատակով, դասատուն աշակերտներին գործնական աշխատանքներ պետք է առաջադրի, վորոնց կատարումից արդեն կերեա, թե աշակերտությունը կամ անհատ աշակերտն ինչ չափով են յուրացը լինվական այս կամ այն կանոնը։

Այս գրքերում բավականին թվով այդպիսի գործնական աշխատանքներ են առաջարկված. դասատուն կարող է նման հատվածներ վորոնել և լեզվի դասագրքում։

Հատկապես ուղղագրության ուսուցման նպատակով տրվող գործնական աշխատանքների նպատակահարմարության համար հանձնարարվում է կարգալ Գ. Եղիշյանի նոր կազմած «Ուղղագրության ուսուցման մեթոդիկան»։

Ավելորդ եմ համարել, շատ սակավ բացառությամբ, հարցեր դնել աշխատանքների համար, նախ՝ գրքի ծավալը չմեծացնելու նպատակով, յերկրորդ՝ ընդունելով, վոր ինքնին հասկանալի կլինի, թե ուսուցիչն ինչ հարցեր պետք ե տա, քանի վոր նա նախորոք ծանոթ պետք է լինի յուրաքանչյուր վարժության հաջորդող կանոնին կամ սահմանման, վորոնք ինքնին նշում են լեզվի դիտելիք յերեսությը, վորից և, ընականորեն, ծագում են հարցերը։

Քերականական վորոշ խնդիրներ մանրամասնորեն են դրված, հատկապես դասատուների համար։ Առնասարակ, աշակերտներին միայն վորոշ նպատակով տրված հատվածիկները պետք է դիտել առաջ ու գործնական աշխատանքներ առաջադրել այս գրքերի Ա.

մասից: Բ. մասն աշակերտների ձեռքը չպետք եւ տալ,—այդ մասը կազմված եւ սոսկ իրրե ուղեցուց դասատուների համար:


Հարկ եմ համարում հայտնել, վոր այս գրքերի տեսական մասի համար աղբյուր են ծառայել Մ. Արեգյանի կազմած քերականության դասագրքերը: Որինակներն ու վարժություններն ինքս եմ կազմել, կամ հայոց լեզվի՝ համապատասխան տարվա դասագրքերից վերցրել:

Հար. Պետրոսյան

2-ՐԴ ՅԵՎ 3-ՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

«Գործնական քերականության» Բ. և Գ. հրատարակությունները բարեփոխված են և անհամեմատ լրիվ, քան Ա. հրատարակությունը: Աշխատանքի դպրոցն, իր հարաճուն վերելքի ընթացքում, կիրառվող դասագրքերի նկատմամբ միշտ ել բարեփոխման պահանջ կդնի, մանավանդ իր սկզբնական—կազմակերպչական շրջանում: Այս հրատարակությունն իր բարեփոխություններով մասամբ բավարարում է այդ պահանջը, բայց հավակնություն չունի լիովին բավարար լինելու, վորովհետև «գործնական քերականության» համար մենք անցյալի վորձ չունենք:

Հ. Պ.



I. ԲԱՌ, ՀՆՉՅՈՒՆ, ՎԱՆԿ, ՏԱՌ

§ 1. Աշակերտ, դպրոց, գիլք, սպիտակ, գնաց, դռւ,
հիմա, ախ,—սրանք բառեր են:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 1. Ամեն մի բառ ունի վորեվել նշանակություն կամ իմաստ, վոր լսողը հասկանում ե այս կամ
այն կերպ, նայած ի՞նչպես ենք զործածում: Միյեվնույն
բառը տարբեր իմաստներով կարող ե զործածվել կամ
տարբեր առմունք կարող ե ունենալ. որ՝ յես հար ջար-
դեցի.—Նա հար սիրո ունի. առաջին գեպքում քար բառը
պահում ե իր բուն նշանակությունը, իսկ յերկրորդ գեպ-
քում մի այլ նշանակությամբ ե գործածվում, այն ե՝ անզգա:

§ 2. Գ-ի-ր-ք,—սրանք գիրք բառի ամենապարզ բա-
ղադրիչ մասերը կամ հեշյուններն են:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 2. Հեցյունները պարզ ձայներ են յեվ
ք սղաղրիչ մատերի չեն վերլուծվում: Հեցյուններն արտա-
սանվում ու լսվում են:

§ 3. Ա-շա-կերտ, դա-սա-րան, կար-դալ,—այս բա-
ռերը գծիկներով վանկերի յեն բաժանված:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 3. Վանկ կոչվում ե այն նշյունը կամ
յերկու յել ավելի հեշյունների կապակցությունը, վոր մի
անընդհատ շնչով ե արտասանվում (ու, ծու, քոն, վարդ):
Յեթե վանկը կամ վանկերի կապակցությունը նշանակու-
թյուն ունի, բառ ե կոչվում: Վանկերի թվին նայելով,
բառերը լինում են՝ միավանկ, յեվ բազմավանկ, վերջին-
ներս ել՝ յերկավանկ, յեռավանկ քառավանկ յեվ այլն, նա-
յած վանկերի թվին (տուն, կատու, աշակերտ, սեղանատուն...):

§ 4. Ա-սա, ա-րի, ե-մին, ե-գուց, ի-ջավ, ի-մաս-տուն,
ու-րախ, ու-տել:—Այս բառերի վանկերի բաժանումից յե-

ընում ե, վոր կան հնչյուններ, վորոնք մենակ վանկ են կազմում, և կան հնչյուններ, վորոնք մենակ վանկ կազմել չեն կարող:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 4. Այս հեշտունները, վորոնք մենակ կարող են վանկ կազմել, կոչվում են ձայնավոր նույուններ, դրանք են՝ ա, ե, ը, ի, ո, ու:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 5. Այս հեշտունները, վորոնք մենակ չեն կարող վանկ կազմել, այլ մենակ, կամ ուրիշ բաղաձանների հետ վորեցի ծայնավորի՝ առաջից կամ վերջից միանալով միայն կարող են վանկ կազմել, կոչվում են բադայն հնչյուններ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 1. Վորոշեցնք հնչյունների թիվը հետեւյալ հատվածի բառերի մեջ (որինակ՝ դուք=3, զոհվեցիք=8 և այլն),

Յուք զոհվեցիք պատքարի մեջ որհասական,
անշահ սիրով ժողովրդի գործի համար.

ինչ ունելիք՝ դուք բոլորը տվիք նրան,—
նրա պատվին, նրա կյանքին, ազատության,

(Կարմիր Արև, «ԹԱՂՄԱՆ ՔԱՑԼԵՐԻ»)

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 2. Հետեւյալ հատվածի բառերի մեջ ճայնավոր նշյունների տակը գծեցնք:

Ալոր ցնծում ենք մենք,

Ալոր ցնցում ենք մենք

աշխարհը հիմքից:

Հնկտեմքեր, մենք քո յերգն ենք,

Հնկտեմքեր, բռունցքված հին կյանքի դեմ:

(Կարմիր Արև, «ՀՈԿՑԵՄԲԵՐԱԿԱՆ»)

ՍԱՀՄԱՆՈՒՄ 6. Հնչյունների նշանները կոչվում են տառեր: Հնչյուններն արտասանվում են, իսկ տառերը գովում: Տառերը գրությամբ լինում են, փոքրատ յեվ մեծատառ: Տառերի ավանդական շարքը կոչվում է այլքեն: Մեր այլքենը ներկայումս հետեւյալ պատկերն ունի—Ա.ա, Բ.ը, Գ.դ, Դ.դ, Զ.զ, Ե.ե, Ը.ը, Թ.թ, Ժ.ժ, Ի.ի, Լ.լ, Խ.խ, Ծ.ծ, Կ.կ, Հ.հ, Զ.ձ,

Դ, Ռ, Շ, Մ, Յ, Ն, Շ, Զ, Պ, Ջ, Ի, Ս, Վ, Բ, Ռ, Ց, Փ, Ք, Ո, Ֆ:

Բացի այս տառերից, կան նայելու թել, և նշանագրերը.

Տառերը կարող են գործածվել իբրև դասական թվականներ։ Այս գեպօւմ գործ ե ածվում մեր հին այբուբենը և ստացվում հետևալլը։ — 1-ին — ա. 2-րդ — բ. 3-րդ — գ. 4-րդ — դ. 5-րդ — ե. 6-րդ — զ. 7-րդ — է. 8-րդ — ը. 9-րդ — թ. 10-րդ — ժ. 11-րդ — ժա. 12-րդ — ժբ. 20-րդ — ի. 30-ը. 40-րդ — իւ. ևալին։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 3. ա) Կազմեցե՞ք ձեր խմբի աշակերտների՝ անունների, հայրանունների, ազգանունների ցուցակը։

բ) Գրեցե՞ք ձեր խմացած գավառների, գյուղների, քաղաքները, յերկրների գետերի, լճերի, ծովերի, կղզիների, լեռների անունները։

գ) Գրեցե՞ք ձեզ հայտնի հմայլների, լրագրերի, հանդեսների, գրքերի անունները։

դ) Շարադրեցե՞ք դիմումներ՝ ուղղված ձեր դպրոցի վարչին, ՀԱԽԱ Կենտրոնական նախագահին յեվ այլն։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 7. Մարդկանց, քաղաքների, գյուղների, յերկրների յեվ այլ աշխարհագրական անուններ, այլեվ գըրքերի, լրագրերի, հիմնարկների յեվ այլն հատուկ անուններ ու քաղաքավարական գրության մեջ՝ Դուք, Ձեր, Ձեզ... յեվ պաշտոնի անունները դիմումների մոջ մեծատառ են գրվում։

II ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ա. ՅԵՐԿՐԱՐԲՍՐՆԵՐ

§ 5. Գյուղից գեպի հյուսիս, յոթ կիլոմետր այն կողմ, նույնական մի բարձրություն կա, վորի մյուս կողմից կը կին հարթավայր ե սկսվում, ուր նույն բույսերն են աճում...

ՍԱՀՄԱՆՈՒՄ 8. Եերկու ձայնավորի միացած արտա-

սանությունը մի շնչով՝ կոչվում է յերկրագրառ: Յերկրար-
քառի ծայնավորներից մեկը պահում է իր ծայնավոր հատ-
կությունը, իսկ մյուսը բաղաձայնի պաշտոն է կատարում
յեզ կոչվում է կիսածայն: Հայոց լեզվի մեջ կիսածայն և
յ նշչունը, վոր բաղաձայնի պաշտոն կատարելով, միանում
ե ծ այնավորների հետ սկզբից կամ վերջից, զանազան յերկ-
րագրառներ ե կազմում (այ, ոյ, եյ, իյ, ու, յա, յո, յե,
յի, ու), որինակ՝ հայ, խոյ, թեյ, գոյն, քարյա, յոթ, յեկ,
դայի: Իյ յերկրարբառ գործ ե ածվում ոտար բառերի
վերջը, որինակ՝ Վասիլիյ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 4. Հետեւյալ բառերի մեջ
ընդգծեցե՞ք յերկրարբառները.

1. Պայծառ, գույն, գլուղ, հուկս, մրջլուն, յերազ,
յերկաթ, յերկայն, արլուն, հլուսիս, հյութ, խոյ, բույս,
շննջուն, յոթ, վկայական, սենյակ, մանյակ, աղբյուր, աղ-
յուսակ, հույն, փալտյա, արդյոք, նյոււ-թորք:

2. Ո՛, կուր և նա, ով չի տեսնում
յերկինք հասած կրակը թեժ.
յեկեք, յեկեք, ով սիրո ունի
վողջակիզվող ու հրակեղ:

Կլանքս կմարի՝ հին, չնչին մի կալծ
քո վոսկի հրում,
բայց վառդի պիտի սիրոս մոխրացած՝
քո բոլոր գալիք արշալուկսներում...
(Կարմիր Արե, «Ո՛, ԿՈՒՅՑ և ՆԱ»)

Բ. յ ԶԱՅՆԱԿԱՄ

§ 6. Նայել, վկայել, կայարան, քաղաքային, հոռմե-
յական, եյակ, եյի, եյություն, շոյել, գոյություն, ձիալոր,
միակ, թիակ, Ասիա, Գարբիել, որիորդ:

ԿԱՆՈՆ 1. ա) ա, ե, ո, ծայնավորներին մի այլ ծայ
նավոր հաջորդելու դեպքում՝ յերկու ծայնավորների մեջ

մտնում ե յ կիսածայնը իբրեւ ձայնակապ (այս ըովե-
յական, Մարոյի):

Ոտարազգի այն բառերը, վորոնց մեջ արդ դեպքում
յ չի լսվում, գրվում են առանց յ-ի. որինակ՝ եղեա, իդեա-
լիստ, Մորեա, բուռ ոճ, նառում և աղն:

բ) Ի ժայնավորին այլ ծայնավոր հաջորդելու դեպքում
յ ժայնակապը չի մտնում (հիանալ, իտալիա):

Գ. Է ԶԱՅՆԱՎՈՐ

§ 7. Սկիզբ, սկսել, սպասավոր, ստանալ, ստորագրել,
սթափիվել, զգալ, զբոսնել, սփսփել, սքողել, շտապել:

ԿԱՆՈՆ 2. Սկ, սպ, սՏ, սք, սփ, շկ, շտ, սք, զբ,
զգ սկսվող բառերի սկզբամ՝ կարծ ը ե լսվում, բայց չի-
զրվում:

§ 8. Դասընկեր, նախընթաց, զուգընթաց, վերընտրել,
դըուրըմբոնելի, նորընտիր, հույրընկալ, գրել, ջրել, դրկվել,
բժիշկ, մկրատ, նկար, դմակ:

ԿԱՆՈՆ 3. Բարսդ բառերի մեջ, յերբ յերկրորդ բառն
սկսվամ լուսպ, այդ ը-ն պետք ե զրել (դասընկեր): Անտ-
ցած դեպքերում լ-ն կարող ե լսվել, բայց չզրվել (մկրատ):

§. 9. Արամը գնաց. Արամը կարդում ե, Արամը տե-
սավ. Արամն ասաց, Արամն ընկավ, Արամն իջավ, Արամն-
ուտում ե, Արամն սկսեց, Արամն զգաց:

ԿԱՆՈՆ 4. Բառավերիցի ը ծայնավորը ն-ի յե փոխ-
վում, յերբ հաջորդ բառը ծայնավորով կամ սկ, սպ, սՏ,
զգ, զբ, սք, սփ, շկ, շտ, շՏ-ով ե սկսվում.

Դ. ՎԱՆԿԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄ ՈՒ ՏՈՂԱԴԱՐՁ

§. 10. Գը-բեց, զըր-կանք, մը-նաց, քաղ-ցըր, բար-ձըր,
Մը-կըր-տիչ, դըպ-բոց, գըզ-գը-զել, ըս-կիզբ, ըզ-բոս-նել-

ՍԱՀՄԱՆՈՒՄ 9. Դրելիս, տողի վերջում՝ բառը չտե-
ղավորելու դեպքում, տողադարձ ենք անում:

ԿԱՆՈՆ 5. Տողադարձի ժամանակ բառը պետք է կանոնավոր վանկերի բաժանել կամ հեզել:

ԿԱՆՈՆ 6. Տողադարձի ժամանակ յերկու ճայնավորի միջև գոնվող մեկ բաղածայնը հաջորդ վանկն ե անցնում (առաջ, ար-առ, գար-գան):

ԿԱՆՈՆ 7. Յերկու բաղած սյնից մեկը նախորդ վանկում ե մնում, մյուսը հաջորդ վանկն ե անցնում (ապ-ըի, ար-ծան, Գար-պար):

ԿԱՆՈՆ 8. Յերեք բաղած սյնից յերկուսը նախորդ վանկում են մնում, իսկ յերրորդը հաջորդ վանկն ե անցնում (մարդ-կանց, զարթ-ներ, Փըռկ-վել, Չարդ-վել):

ԿԱՆՈՆ 9. Թե տողի վերջը մնացած յեվ թե հաջորդ տողն անցած վանկերի մեջ լովող լ-ն գրվում ե (ԳԸ-Ըիչ, ԲԸ-ԺԸ-Կի, Ըգ-Գալ),

ԿԱՆՈՆ 10. Յեթե բարդ բառի յերկորդ մասն ամբողջությունը տակի տողն ե անցնում, լ տառը չի գրվում (Դա-սա-գրքի, լրա-գրի, կարմրա-գրոշ):

ԱՌԱՋԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 1. Որինակներ բերելով ցուց տվեք, վոր բաղածայներից առաջ դ հնչյունը սովորաբար նշում ե իւ (ինչպես՝ լեղբայր, աղջիկ, կեդտ, գաղթել) յեվ գրվում ե, դ. բացառություն են կազմում մի քանի բառեր, ինչպես՝ ախտ (հիվանդություն,) բախտ ապերախտ, զըմբուխտ, ուխտ և այն սակավաթիվ բառեր:

Առը բարդվելու կամ ածանցվելու ժամանակ, յերբ յերկու բաղածայնի միջից մի ծայնավոր սղվում ե, կամ յերկու առանձին բաղադրիչ մասեր են միանում, իւ բաղածայնը կարող է ընկնել նայեվ ուրիշ բաղածայներից առաջ, որինակ՝ վախ բառից կազմվում ե վախկոտ, փախ բառից՝ փախչել և այն:

2. Ն բաղածայնից առաջ գրվում ե ո, իսկ մնացած բաղածայներից առաջ շ, ինչպես՝ 1) սառնություն, լեռնալին, գառնուկ, գառնալ, ամառնամուտ և այն. 2) վարձ, խորհած, կարծ-իք, մարդ կարդալ և այն:

3. Կրկնությամբ կազմված հետեւյալ տեսակի բառերի մեջ առաջին ո-ն բաղաձայնից տուաջ ընկնելով՝ բ-ի ի-փոխվում, ինչպես՝ գրգիռ, թրթուռ, մըմուռ, սալսուռ, Վար-վառե և այլն:

Այս տեսակի բառերը, նմանած սյություն արտահայտելու դեպքում, կարող են ո-ով յեվս զրվել. որինակ՝ ճոճոալ, գոգոալ, մոմոալ, (կամ՝ ճըոճըոալ...):

4. Ոտարաղգի բառերի իեվ անունների սկզբում, ինչ-պես յեվ ն բաղաձայնից առաջ, զրվում ե ո, իսկ մացած բոլոր դեպքերում՝ բ. որինակ՝ 1) ոռւբլի, ոեզին, Ռոբերտ, Ռոզալիա. 2) դրամա, բուլուս, Բուխարին, Լերմոնտով:

5. պ, կ, ս, ծ, ն, նշյունները ն, մ, յերեմեն և բ հնչյու-նից առաջ հաճախ արտասանվում են բ, գ, դ, ձ, որինակ՝ ամ զ, ըմկնել, ընտանի, հարկավոր, ճանճ:

6. Յերբ բ, գ, դ, ձ հնչյուններն ընկնում են բ, յեր-բեմն նայեվ ն, դ, բաղաձայններից հետո, սովորաբար ար-տասանվում են՝ փ, թ, թ, ց, չ, կամ պ, կ, ս, ծ, ն. որինակ՝ սուբր, վարդ, արջ, խուրծ, անգամ, կենդանի:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 5. Հետեւյալ բառերը գծիկ-ներւվ բաժանեցե՞ք վանկերի իեվ դիմացը զրեցե՞ք՝ բանից վանկ ե. որինակ՝ դաս-սա-բան=3 վ. (կանոն 6—10):

1) Տերրակ, քաղաք, կարմիր, բաժակ, դանակ, յերե-խա, ճանապարհորդ, յերիտասարդ, բժիշկ, գրիչ, դռնա-պան, մարդկություն, գործնական, յերգիչ, սանր, թանձր, զգալ, սպասել, ստանալ, բարություն, հիանալի, գոյություն, միակ, թևավոր, սեանալ, հյութառատ, սենյակ:

2) Հին, հաստաբուն խաղողենիների մեջ թագնված վաճառատան դռների առաջ, խաղողաթուփերի, շերեփու-կի և չինական մանր վարդերի ցանցապատ ծածկոցի հո-վանու տակ, սեղանի մոտ, գինու շիշն առաջներին, նստած-ելին ներկարար Վինչեցցոն և փականագործ Զորիվաննին:

(Կարմիր արև, «ՀեքիԱԹ»)

III. ԲԱՌԱԿՍԶՄՈՒԹՅՈՒՆ

(Պուրգ, բարդ ածանցավոր.—արմառ, նախածանց, վերշածանց)

§ 11. Հող, գործ—հող-ա-գործ. նավ, պետ—նավ-ա-պետ. քար, ժայռ—քար-ա-ժայռ. լուր, զիր—լր-ա-զիր. տիալ, զիր—տպ-ա-զիր. լուս, նկար—լուս-և-նկար. բույս, կեր—բուս-ա-կեր. մատյան, դարան—մատեն-ա-դարան. ատյան, կալ—ատեն-ա-կալ. մատյան, զիր—մատեն-ա-զիր. վեպ, զիր—վիպ-ա-զիր. սեր, տենչ—սիր-ա-տենչ. կես, բաց—կիս-ա-բաց. բժիշկ, պետ—բժշկա-ա-պետ. ամիս, վերջ—ամս-ա-վերջ. լուծ, կից—լծ-ա-կից լուր, զիր, վաճառ—լր-ա-դր-ա-վաճառ. մատյան, դարան, պետ—մատեն-ա-դարան-ա-պետ. աշխարհ, զիր, գետ—աշխարհ-ա-գր-ա-գետ. հեռու, զիր, տուն—հեռ-ա-զր-ա-տուն. զինի, գործ—զինե-գործ. վոսկի, զոծ—վոսկե-զոծ վորդի, սեր—վորդե-սեր. տարի, մուտ—տարե-մուտ: Զուր, աղաց—ջր-աղաց. ազդ, անուն—ազդ-անուն. լերկաթ, ուղի—լերկաթ-ուղի:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 10. Բարդ կոչվում են այն բառերը, վորոնք կազմված են յերկու կամ ավելի բառերի բաղադրությունից (թանաքաման—թանաք և աման բառերից. հեռագրատուն—հեռու, զիր և տուն բառերից):

10. Բարդ բառի գլխավոր իմաստը յերկրորդ բաղադրիչ մասի մեջ է գտնվում (թանաքաման—թանաքի աման):

ԿԱՆՈՆ 11. Բարդ բառերը կապվում են ա հողակապով (դաս-ա-զիրք):

ԿԱՆՈՆ 12. Բարդ բառի յերկրորդ բաղադրիչ մասը ծայնավորով սկսվելու դեպքում՝ ա հողակապը չի դրվում (դաս-ընկերը): Բացառություն են կազմում ամեն բառով բարդվածները—ամենապնիվ, ամենաիմաստուն, ամենաողտակար, ամենասուրախ, ամենաելական և այլն:

ԿԱՆՈՆ 13. Եեթե բարդ բառի առաջին բաղադրիչ

մասը վերջանում ե ի, այդ ին, միանալով ա հողակապին, տալիս ե և (գինի, գործ—գինի-ա-գործ=գինե-գործ):

ԿԱՆՈՆ 14. Բառն ամելու ժամանակ վերջին փակ—այսինքն բաղաձայնով վերջացող վանկի:

ա) Ե-ն կարող ե դառնալ ի (վեպ գիր—վ/-պա-գիր):

բ) ի և ու կարող են ը դառնալ (վոր չի գըվում), կամ դուրս ընկնել (սղվել), (ջոր, աղաց—ջր-աղաց, գարուն, մուտ—գարնան-ա-մուտ, գիր, գարան—զբ-ս-գարան):

գ) Յա կարող ե դառնալ ե (մատյան, գարան—մատին-ա դարան, հրյա—հրեյական, քրիստոնյա—քրիստոնեյական):

դ) Ույ դառնում ե ու. բույս, բան—բուս-ա-բան):

Բաց գանկի, այսինքն ձայնավորով վերջացող վանկի ո դառնում ե ոյ (կարո—կարոլի, գո—գոյական):

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 6. ա) Կազմեցե՛ք բարդ բառեր հետեւյալ բառերից ու գրի տոնեք.

Սար, լանջ.—անձրե, ջուր.—լերկիր, գործ.—դաշտ, վալր.—թանաք, աման.—գրիչ, աման.—ծաղիկ, աման.—բուլս, առաստ.—շոգի, մերքնա.՝տարի, մուտ.—լույս ար-ձակ.—ջուր, աղաց.—հուր, վառ.—հուր, բուխ.—ատյան, կալ.—հոգի, առ.—կես, բաղց.—գերի, վաճառ.—լույս, բաց.—վերջ, լույս.—իրիկուն, մուտ.—հեռու, գիր, տուն.—որ, գիր, մատլան.—լերկաթ, ուղի, գիծ.—բարի, գործ.—շոգի, կաթսա.—լուր, բեր.—սիրտ, կից.—բուլր, շատ.—ծամարիտ, սեր.—ձի, վարժ.—անասուն, պահ.—ժողովուրդ, սեր.—լեզու, գետ.—գույն, գեղ.—ամեն, աղնիվ.—բարի, արար.—լերկիր, չափ.—հանուր, հաշիվ—բուն, գետ.—հանդես, տես.—լույս, նկարիչ, տուն.—ջուր, վեժ.—հաց, թուլս.—ջուր, կիր:

բ) Դիտեցեք հետեւյալ տեսակի բարդ բառերը, վո-րոնք հոդակապ չուշնեն.

1. Ալստեղ, ալդտեղ, այնտեղ, այսպես, այդպես,

այնպես, տանուտեր, տանտիկին, մեկմեկու, այսուհետեւ, այնուհետեւ (սրանք անմիջապես կցված բառեր են):

2. Առուտուր, յերթեզեկ, յելեզեջ, աղուհաց, կերուխում, յելումուտ, նիստուկաց, այսեվալ (յեզ, ու շաղկապներով կցված բառեր):

3. Վալրիվերո, զլխիվալը, խոչընդու (նախդիրներով կցված բառեր):

4. Զընգզընգալ, վըշվըշալ, թափթըփել, ծըռմըռել, քըսմըսել, խազմըզել (կրկնավոր բարդ բառեր կամ բաղմապատկան բայեր):

Այսպիսի դեպքերում բառի արմատը կարող է՝

1. Նույնությամբ կրկնվել. որինակ՝ զընգզընգալ (զընգընգ):

2. Արմատի ձայնավորը կարող է փոխվել. որինակ՝ թափթըփել (թափ-թըփ):

3. Արմատի բաղաձայնը կարող է փոխվել. ծըռմըռել (ծըռ-մըռ):

4. Արմատի թե ձայնավորը և թե բաղաձայնը կարող են փոխվել. որինակ՝ խազմզել (խազ-մըլ):

5. Մեծ-մեծ, տաք-տաք, վառ-վառ, տեսակ-տեսակ, մանր-մունը, ծակ-ծուկ աման-չաման, գունդ ու կծիկ, ջարդ ու բուրդ, աս ու լիս, կեր ու խում (անջատ գրվող, ու շաղկապով կամ գծիկով միացած բարդ բառեր):

գ) Յուց տվեթ ու վերլուծեցեթ բարդ բառելը հետեւալ վոտանավորի մեջ.

Յեկ արել ծիրանավառ և յերեկոն ծծմբաշունչ,

յերեկոն ու արեգակը արնափրփուր, հրդեհավառ

կըտեսնեն, թե ինչպես ես դու կրում պատիժը անտրասունջ,

թե ինչպես լուռ կանչնչանան քո աչքերն ու դեմքը պայծառ:

Ու ամբոխը կրծքում պահած լոկ չարություն ոճագալար՝

իր ովկիանը ըմբոստ մահիդ առաջ լոին կխոնարհե

ու հարազատ մոր պես գթոտ, խանդազագին ու սիրաբար

քո անշունչ դին արյունաների դագաղի մեջ մեզմ կորորե..

(Կարմիր Արև, «Գլուհինք»)

§ 12. Տուն, անտուն.—գործ, անդործ.—ուշ, ապուշ.—
դես, սգես.—մարդ, սմարդ.—հաս, սհաս.—բախտ, ապա-
բախտ, դժբախտ.—գույն, դժգույն.—տես, չտես.—հաս,
չհաս,—ձայն, համաձայն:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 11. Ան, ապ, ս, դժ, և չ մասնիկները,
վորոնք առանձին վերցրած նշանակություն չունեն, բառերի
սկզբից զրվելով՝ նրանց մի նոր նշանակություն են տա-
լիս, կոչվում են բացասական նախածանցներ:

Նախածանցներից միայն ապ և համ մասնիկներն են
ա հողակապով միանում, յեթե բառը բաղաձանով և
սկսվում (ապաբախտ, համաձայն, բայց՝ ապերախտ, հա-
մերաշխ):

Սկզբից կամ վերջից մասնիկ ունեցող բառերը կոչ-
վում են ածանցավոր բառեր:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 7. Կազմեցեք բառեր՝ վե-
րահիշտալ նախածանցներով ու զրի առեք:

Կազմեցեք բառեր համ նախածանցով:

§ 13. Նավ, նավակ.—լիճ, լճակ.—տուն, տնակ.—չալկ,
չալկակ.—հավ, հավիկ.—շուն, շնիկ.—տիկին, տիկնիկ.—
Գուրգեն, Գուրգենիկ.—հորթ, հորթուկ.—ձագ, ձագուկ.—
հալր, հալրիկ.—մալր, մալրիկ.—քուլր, քուլրիկ:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 12. Ակ, իկ, ուկ վերջածանցները ցույց
են տալիս առարկայի փոքրությունը կամ փաղաքական
նշան սկզբյուն ունեն:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 8. Կազմեցեք բառեր՝ ակ,
իկ, ուկ, նվազական վերջածանցներով:

չ Ա. Բ 8.

Ի՞նչ նշանակություն են տալիս բառերին հետեւալ
ածանցները:

1. ակ, իկ, ուկ, (նավակ, չալկակ, մկնիկ, Սուրիկ, ձա-
գուկ):

2. ուհի, (դուխտ և անուշ բառերն ել—չալկուհի, չալ-
կանդուխտ, չալկանուշ):

3. ոց, անոց, արսն, ստան (ծաղկոց, խոտանոց, ճաշաբան, ծառաստան, չալաստան):

4. եղ, վետ (համեղ, թիկնեղ, թիկնավետ):

5. իշ, ող, ան (գրիշ, մատնիշ, մատնող, կռվան, սուտասան):

6. վոր, սնի (հնձվոր, գլխարկավոր, վոտավոր, լեռկոտանի, գեղանի):

7. եղեն (հողեղեն, վոսկեղեն, փափտեղեն, արծաթեղեն, մսեղեն):

8. ենի, ի (վայրենի, տանձենի, խոզենի, տանձի, վայրի):

9. յան, ունի, ենց, ունց (Գրիդորյան, արևմտյան, Յերեանլան, Արշակունի, Հալկունի, գեղունի, Զարենց, Ռւռենց, Բակունց):

10. ատ (պոչատ, տերեատ, կռնատ, գունատ):

11. ոտի (ծակոտի, փորոտի, սնոտի):

12. երորդ, րորդ (հրնգերորդ, չորրորդ):

13. ում, ություն, ոյթ, մոնք, (ուսում, թաղում, սովորություն, սովորուկթ, ուսմունք):

14. ուրդ, իկ, տի (արձակուրդ, ժողովուրդ, խորհուրդ, ընթացիկ, լկտի, անջրտի):

15. երեն (հայերեն, ռուսերեն):

16. ինց (Մակինց):

17. լի (ցանկալի, սիրելի):

18. ակի, ացի (շեշտակի, հանկարծակի, հոգնակի, կանացի, առնացի, տեղացի):

և 19. ան, ապ, տ, դժ նախածանցները (անտուն, ապուշ, տպետ, դժբախտ):

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 9. Կազմեցե՛ք բառեր՝ հետեւյալ վերջածանցներով ու զրի առե՛ք:

Իշ, ող, վոր, անի, ոց, անոց, ուրդ, կի, ստան, վետ, եց, երեն, ունի, ք, ուն, եղեն, յան, ենի, յան, ատ, ային, ական, տնք, գին, գույն, երորդ, յուն, կան, յաւ, նոց, ոյթ,

ություն, որդ, ոտ, ոտ, ում, ցի, ունի, իք, ին, ինց, ան, ուստ, ատ, ոտի:

Հետեւալ բառերի վրա ակ, իկ, ուկ ածանցներից վուրը կավելացնեք.—շուն, հավ, ձու, արջ, գալլ, հորթ, խող, քուլը, նավ, գավառ, առու, աղբյուր, ծաղիկ, վոտ, ձեռ, աչք, սիրտ, մարդ, վարդ, լուսին, աստղ, գետ, բուր, լեզու, խող, կոն, Շուշան, արծիվ, կոռոց, թաթ, գոմեշ, եշ, փուշ, զանդ, ջուր, փոս, ծով, լիճ, ինձոր, ձոր, թիթեռ, տատ, ծիս, տաշտ, տետր, արև, ձուկ:

ԴՈՒՇՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 10. Համեմատեցեք հետեւալ բառերի նշանակությունը յեվցուց տվեց նրանց կազմությունը.

Անտերե, տերեատ.—անպոչ, պոչատ.—անկուռ, կըռնատ.—անգետ, տգետ.—անմարդ, տմարդ.—անտուն, տնադուրկ.—անսեր, սիրազուրկ.—անգույն, դժգույն.—անբախտ, դժբախտ.—անկամ, չկամ, դժկամ.—անուշ, ապուշ.—անխելք, խելազուրկ.—գրիչ, գրող.—մատնիչ, մատնող.—քաղաքալին, քաղաքական.—ցեղալին, ցեղական.—ծաղկանոց.—վոսկեղեն, հողեղեն, կանաչեղեն.—խնձորենի, վալլենի:

§ 14. Ծուն, ան-տուն, —գործ, ան-գործ.—գործ-արան, գործ-ազուրկ, —գործ-ել, —գործ-իչ, —գործ-ուն-յա, —գործ-ող-ություն. —զարմ-անալի, զարմ-ացք.—զգ-ուշ, զգ-ալ, զգ-այուն:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 13. Բառի այն մասը, վոր քուրօ ձեվերի մեջ անփոփոխ մնում է, կոչվում է արմատական բառ (լեթե առանձին գործ և ածվում, որինակ՝ վերեկի որինակ-ների մեջ տուն և գործ բառերը), կամ արմա (լեթե առանձին գործ չի ածվում, որինակ՝ հիանալ բառի հի և զդալ բառի զգ արմատները, վորոնք առանձին գործածվել չեն կարող): Այն բառերը, վորոնք վոչ բարդ են ու վոչ ածանցավոր, կոչվում են պարզ բառեր (տուր, ջուր, ճանապարհ):

Յույց տվեք բարդ յեվ ածանցավոր բառերը հետեւյալ
վոտանավորի մեջ ու վերլուծեցե՛ք.

Գեղախոս թռչնոց լերգի փոխարեն
կլսես այնտեղ
ճախարակների ոնդալին վորոտ
և խենթ փոկերի համերգը ահեղ.
այնտեղ խեղդվում են շոգու ամպերեն.
պաղ աղբլուրի տեղ՝ քրտինք ամեն որ,
վարդի փոխարեն
ծորում, քամվում և արյուն սրտերեն,
և շուրջդ ըոլոր
շոինոց ու ժխոր
կտեսնես՝ ինչպես թանձրացած միով
ծխնելուզգները
լերկինք են ցցել ագահ լերախով
մրոտ պնչերը,
կարծես հրաշունչ վիշապի նման,
ուզում են շնչել
ու իրենց քաշել
անհուն բարձունքից փայլուն աստղերը,
վոր նրանց թաղեն մշուշ ծխի մեջ.
կտեսնես շարված սգավոր ու խեղճ
արհեստանոցի ալլուս պատերը՝
խոնավ ու թաց-թաց,
կարծես բանվորի քրտինքով թրջված...

(Կարմիր Արև, «ԳՈՐԾԱՐԱՆ»)

ԱՐՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

(Ամփոփում անցածի)

ա) ՅԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ (տես գլ. II):

Ըստգծեցե՛ք լերկը արքարքառները.

Հյուսիսից փշում եր քաղցրաբույր զեփլուռը: Զյու-
նապատ սարերը փայլում ելին արեգակի ճառագայթների
ներքո: Ճանապարհորդը մոտեցել եր գլուղին: Յուրաքան-

չուր հարլուր քայլի վրա նա կանդ եր առնում, դյուրությամբ վայր բերում իր բեռը: Բնությունը հիանալի յեր արևմուտքն արյուն եր կտրել. զեփուռը շոյում եր արտու արոտ: Դեպի հարավ ձգվող հարթությունը համուս եր բարձր լեռան սարրոտներին:

բ) յ ԶԱՅՆԱԿԱՓԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ (ա, ե, ո-ից հետո և ի ձախավորի բացառությամբ) (տես § 6, կանոն 1, 2):

Հնդգծեցե՛ք յ ծայնակապլ.

1. Ճանապարհորդը յերկար նայեց հիանալի տեսարանին. զեփուռը շոյում եր նրա դեմքը: Քաղաքի կայարանը հետդետե միախառնվում եր յերեկոյան մթնշաղի տակ քուն մտնող գորշ դաշտավայրի հետ:

2. Հինգ մայր ցամաքներն են՝ Յեվրոպան, Ասիան, Աֆրիկան, Ամերիկան և Ավստրալիան: Ասիան ու Ամերիկան բաժանված են Մեծ կամ Խաղաղ ովկիանոսով, իսկ Յեվրոպան և Ամերիկան՝ Ատլանտյան ովկիանոսով: Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան Յեվրոպայի պետություններից են:

3. Գաբրիելն ու Մանիան դպրոց ելին գնում. ճանապարհին պատահեցին Նատալիային: Յերեք ընկերները միասին զրուցելով, կատակներ անելով շարունակեցին իրենց ճանապարհը:

4. Մեր առջև Արարատյան լայնասփյուռ դաշտն ե, վորի հարավային կողմը հսկա Մասիսներն են բարձրանում ու նրանց շարունակությունը՝ Բարդողյան յեռնաշղթան: Հոյակապ Մասիսների դեմուդեմ, դաշտի հյուսիսալին կողմը բարձրանում ե Արագածը կամ Ալագյազը իր հարևաններով: Արայի լեռով ու Շամիրամով: Արևմուտքում կողբա գագաթն ե յերեսում հայտնի աղահանքը, իսկ արեկլքում՝ Գեղամա լեռները:

գ) ՎԱՆԿԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԿԱՄ ՀԵԴՄԱՆ ՈՒ ՏՈՂԱԴԱՄՐՁԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ (տես կանոն 6 – 10):

Արտազրեցե՛ք—բոլոր բառերը գծիկներով վանկերի բաժանելով.

Մայիսի յոթին, վաղ առավոտյան, յերբ լույսը նոր երբ բացվել, գլուղացին բանն ուսին դնաց արտը ջրելու. Յերբ նա արշալուսի շողերի տակտեսավ ալեծածան արտը, նրա սիրառ լցվեց ուրախությամբ:

Բնությունն այլևս քնած չեր. թոշունների դալլալը, առվակների խոխոջը հիացմունք եցին պատճառում մարդու.

ՔԱՐԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 11. Ընդգծեցե՛ք նախածանցները յեվ վերջածանցները նետեվյալ բառերի մեջ (աես վորոշում 11, 12, վարժություն 9).

Գործիչ, գործունյա, գործունելություն, անգործ, գործարան, գործավոր,—բախտավոր, գիբախտ, անբախտ.—գրիչ, գրող, գրավոր, անգիր.—գիտուն, տգետ, գիտնական, գիտակ, անգետ, գիտական.—գիտակ, գիտող, գիտաբան, գիտանոց, գիտավոր, գիտում, գիտումնավոր.—կայուն, կայան, կայարան, անկայուն, կայունություն:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 12. Միյեվնոյն արմատից կազմեցե՛ք միքանի բառեր ածանցներով.

Որ. գործ, գործիչ, գործունյա, անգործ.—փորձ... վարձ, գիր, շարժ, լույս, տող, հալլ, մալլ, յերգ, գեղ, հաս, բախտ, բուկժ, բուկս, մուղ, լուր, սեր, վերջ, սկիզբ, սուտ, գութ, թափ, նիշ, հուղ, սուղղ, բուլլ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 13. Արտազրեցե՛ք յեվ նշանակեցե՛ք պարդ, բարդ յեվ ածանցավոր բառերը՝ նշանակելով ամսպատախան բառերի վրա պ (պարզ), բ (բարդ), ա (ածանցավոր).

Հոկտեմբերյան հեղափոխության աւարեդարձին հանգիսավոր տոնակատարություն ե լինում: —Մենք տոնակատար հանձնաժողովի ընտրությամբ ելինք զբաղված: —Զու-

գընթաց խմբերն աջակցում ելին մեզ: —Մենք դասընկեր-ներով հանդիպակաց բլուրը բարձրացանք, դիտեցինք շր-ջակա լեռնաշղթաները, բարձրավանդակները, դաշտավայրը, ձորակները և մոտիկ քարաժայռերը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 14. Կազմեցե՛ք բարդ բառեր հետեւյալ ծեփով (տես վարժություն 6 բ.):

ա) Թափել, թափթափել. —ծոնել, ծոնոնել. —չափել, խա-զել, փոխել, ծակել, վազել, խշալ, զնդալ, քսել, կծել, պո-կել, կցել, փորել, կապել, տպալ, ճնդալ, թխկալ, փայլել:

բ) Մարդ-մորդ. —աման-չաման. —մանր-մոնր. —հաց... ջուր... կլոր ... ծակ... պարապ... ավալ. . սեիկ... փալաս... խաղ... ծուխ...

գ) Տակն ու վրա. —տուն ու տեղ. —ծառ ու... կեր ու... վեր ու... ներս ու... լաց ու... առ ու... անց ու... բաց ու... հավ ու... քար ու... մութ ու... որ ու... մեծ ու... լավ ու... չարն ու... տաք ու... ծանր ու... աս ու .. կար ու... թուք ու... բաց ու... մի և...

դ) Ա; ու զող. —ցիր ու ցան. —լաց ու... զունդ ու... խոսք ու... սուր ու... տըզ ու... կահ ու... ջարդ ու... ահ ու... հալ ու... ձախ ու...

IV. ԲԱՌԵՐԻ ԻՄԱՍՏԸ

§ 15. Գնալ, յերթալ. —մեկ, մի. —սևահեր, սևամազ. —շթունք, պոռշ. —այտ, թուշ. —հուր, կըակ:

ՍՍՀՄԱՆՈՒՄ 14. Այն բառերը, վորոնք զրաթյամբ տարբեր են, իսկ իմաստով բոլորովին նույնն են, կոչվում են նույնանիւ բառեր, ինչպես վերեվի բառերը:

§ 16. Մեծ, հսկա, ահագին, վիթխարի. —հպարտ, գոռող, սեղ. —գեղեցիկ, սիրուն, գեղանի. —ահոելի, ոռոկա-լի, սարսասելի, զարհուրելի. —համարձակ, խիզախ, հան-դուգն, ըմբոսա:

ՍՍՀՄԱՆՈՒՄ 15. Այն բառերը, վորոնք զրությամբ

տարբեր են, իսկ իմասով բոլորովին իրար մոտիկ են յեզ
գործածությամբ են տարբերվում, կոչվում են հոմանիւց բա-
ռեր, ինչպես վերեվի բառերը:

Յովյաց տվեք հոմանիշ բառերը.

Թովված, կախարդված, տարված այն յերգին,

վերացավ, թուավ իմ վշտու հոգին

դեպի յերջանիկ մի ուրիշ աշխարհ,

անհայտ ու հեռու, անծանոթ, ոտար...

(Հովհ. Թուանանդան, «ԴեՊԻ ԱՆՀՇՈՒՆԸ»)

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 15. ՀԵՏԵՎՄԱԼ ԲԱՌԵՐԻՆ
ՀՈՄԱՆԻՉՆԵՐ ՂՐԵՇՔ ՈՒ ԳՐԻ ԱԹԵՇՔ.**

Որ. պարզ, հստակ, ջինջ, վճիտ.—լայն,—կարծր,—
փափուկ, —այժմ, —աշխուզ, —գետակ, —բուլը, —տաք, —
սառ, —վախ, —ուղի, —անխվ, —թուչել, —կոկել, —աղմուկ, —
շշուկ, —նվազել, —քամի, —քաղցր, —յերիտասարդ, —մա-
նուկ, —ուժեղ, —լաց, —ավերել, —ճառագալթ, —հիվանդ, —
կոիվ, —լրագիր, —գլորց, —խանութ, —ծախել, —անխիղճ, —
զարմանաւ, —բարձր, —փոքր, —մեծ, —մառախուղ, —նիհար, —
դժգույն, —անհուն, —շոգի, —նվեր, —նստել, —նուրբ, —հով, —
սեդ, —չքնաղ, —լուռ, —փափաղ, —ժպիտ, —կտրիճ, —ափ-
սոս, —տխուր, —հառաչել, —հրաշալի, —չքանալ, —ընկղմել, —
լեռ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 16. ԿԱՐԵԼԻ* յե ասել.

Մեծ մարդ, մեծ խելք, —վիթխարի մարդ, վիթխարի
խելք, —տաք կոխվ, տաք խոսք, —ջինջ յերկինք, ջինջ
խոսք, —լայն դաշտ, լայն հոգված, —սիրուն դաշտ, սիրուն
խելք —մանր ավաղ, —մանր տուն, —խոշոր ժայռ, խոշոր
աղմուկ, —մութ զիշեր, մութ մարդ, մութ մտքեր, մութ
ամպ, —բարձր սար, բարձր միտք, —վսեմ գաղափար, վսեմ
տեսարան, վսեմ ծաղիկ:

**§ 17. Ակ (սալիք, աղբյուրի, մատանու), —փող (դրամ,
փշելու, հրացանի...), —մալլ (ծնող, ծառ) —ալլ (մարդ,
քարանձավ), —համար... տուն... կետ... գլուխ... վոտ...
շունչ... խաղ... ժամ... հոտ... մատ... հարկ... գրող...**

ՍԱՀՄԱՆՈՒՄ 16. Այն բառերը, վորոնք գրտթիամբ նման են, իսկ իմաստով բոլորովին տարբեր, կոչվում են նույնանուն բառեր, ինչպես վերեվի բառերը:

§ 18. **Մեծ, փոքր,** — խոշոր, մանր, — լավ, վատ, — բարձր, ցածր, — առողջ, հիվանդ, — թանգ, աժան, — լուսավոր, խավար, — հեռու, մոտիկ, — աջ, ձախ, — գեղեցիկ, տղեղ, — տաք, սառ, — հեշտ, դժվար:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 17. Այն բառերը, վորոնք իմաստով բոլորովին հակառակ են, կոչվում են հականիւ բառեր, ինչպես վերեվի բառերը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 17. Գտեք հետեւյալ բառերի հականիշները յեկ գրի առեց հետեւյալ ծեվով՝ ուզախտիւածք, հեռու-մոտ...

Ուրախ, — հեռու, — նեղ, — կուշտ, — յերջանիկ, — արագ, — մաքուր, — փակ, — նիհար, — ունկոր, — հարուստ, — մեղմ, — վառել, — ծանր, — դատարկել, — պարզ, — խորունկ, — ուղիղ, — հարթ, — բարի, — թաց, — սիրուն, — զվարթ, — վճիռ, — դառը, — խոնավ, — բարեկամ, — կանխիկ, — ձրի, — կորուստ, — ոգուտ, — լելք, — վեր, — աջ, — առաջ, — հին, — լուրջ:

Յուց տվեք հումանիւ, նույնանիւ և հականիւ բառերը հետեւյալում.

1. Ասես մի ահազնադղորդ ջրվեժ ե, վոր գահավիժում ե լեռան կատարից. կատաղի առկուծներ, վորոնք մոնչում են, մի փոթորիկ, վոր գոռնում ե, մի լեռ, վոր փուլ ե գալիս, կաղկանձող գազաններ, սրտաճաք լացողների ճիշեր, յեռուն կաթսաներ, ճարճատյուն, շառաչյուն, շաչյուն, դղրդյուն, և այս ամենը մերթ իրար խառնված, միաժամանակ, մերթ իրար յետեից, բարձր ու ցածր, մերթ խուլ, մերթ սուլք կերպով՝ գալարվում են, վեր բարձրանում անդունդից դեպի կատարը, ապա կրկին խորտակվում և գնում անդունդները...

2. Այդ աղմուկից, գոռում-գոչումից, ստորերկրյա վորոտմունքից շատ ավելի ճնշող, սասանեցուցիչ ե յերբեմն

վրա համնող լոռվթյունը. դա տեսում եւ միայն մի վարդկան, վորի ընթացքում մարդ շունչը բռնած, բերանաբաց, ամբողջապես լսողություն դարձած՝ սպասում եւ, թե ինչ մի աներեւակալելի բան, մի վոչնչացնող վորոտմունք պիտի լսե. և սկսվում են հանկարծ իրար լետեից այնպիսի ձալներ, այնպիսի դղրդյուն, վոր ծնկներդ ծալվում են, դողում, և մարդ ջնջված ու լեթերացած կորչում եւ չգիտես ուր:

(Կարմիր Արև, «Վեջ՛օ՛իՎի ԳԱԴԱԹԻՆ»)

Յույց տվեք հետեւալ խոսքերի մեջ՝

1. Սիր բառի նշանակությունը՝ նա սրտով մարդ ե.՝ նա թուզ սիրո ունի.՝ նա սիրո չունի խոսելու.՝ քո սրտով թող լինի.՝ նա սիրո չի անում այնտեղ գնալու.՝

2. Տուն բառի նշանակությունը՝ նա տուն չունի.՝ մի տուն վոտանավոր ասա.՝ նրանք տոնվ գնացին.՝ նրա վերնատունը դատարկ ե.՝ նա տուն դնող չի.՝ նա տան զավակ ե.՝ նա տան կատու լի.՝

3. Աչք բառի նշանակությունը.՝ նրա աչքը ցավում ե.՝ սեղանի աչք.՝ ջրաղացի աչք.՝ աչքով տալ.՝ մեկին աչք գնել.՝ մեկին աչքով անել.՝ աչքդ հանեցի.՝ աչքը լույս.՝ աչքդ խավարի.՝ աչքից ընկնել.՝ մեկի աչքը մտնել.՝ աչքածակ.՝

4. Բերան բառի նշանակությունը.՝ նա փոքր բերան ունի.՝ մի բան բերան անել.՝ նա բերան պատռող ե.՝ նա բերան չունի.՝ դուք քանի՞ բերան ունես, վոր խոսում ես.՝ նրանց տանը տասը բերան կա.՝ գետի բերան.՝ ձորի բերան.՝

5. Գլուխ բառի նշանակությունը.՝ մարդը գլուխ ունի.՝ նա գլխով մարդ ե.՝ դուք քանի՞ գլուխ ունես.՝ մեկի հետ գլուխ գնել.՝ հինգ գլուխ կով.՝ մի գլուխ շաքար.՝ սարի գլուխ, տարվա գլուխ.՝ մի բան գլուխ բերել.՝ մի բանի գլուխ կանգնել.՝ նա գլուխը կորցրել ե.՝ ինձ գլուխն ես բերել.՝ գլխի՞ վրա.՝ մի բան գլխի ընկնել.՝ մեկին գլուխ տալ.՝ յերդգում եմ նրա գլխով.՝ նա մեր գլուխն ե.՝ դե գլուխ մի տանի.՝ նա գլուխ ուստող ե.՝ գլուխդ թաղեմ.՝ գլուխդ մեռնի.

V. ԲԱՌԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՆՏ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ԿԱՄ ՄԱՍՈՒՆՔ ԲԱՆԻ

Ա. ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ ՑԵՎ ՆՐԱ ՀՈԼՈՎՈՒՄԸ

1. ԱՌԱՋԿԱՑՄԱՆ ԱՆՈՒՆԸ

§ 19. Մարդ, կով, ծի, շուն, հավ, ձուկ, քար, գող,
վոսկի, վարդ, միտք, ուսում, լերդ,—սրանք բոլորն առար-
կաների անուններ են:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 18. Առարկաները լինում են՝ ա. ցիզափոք
(մարդ, ծի), վորոնք իրենց կամքով շարժվում են, թ. ան-
ուունչ (քար, հող, բույս, ծառ, ծաղիկ), վորոնք իրենց կամ-
քով շարժվել չեն կարող:

Ապա՝ ա. նյուրական (մարդ, քար), վորոնք անկախ
գոյություն ունեն յեվ մատշելի յեն մեր զգայարաններին,
այսինքն՝ կարող ենք աշքով տեսնել, ականջով նրա ճայնը
լսել յեվ այլն, թ. վերացական (միտք, ուսում), վոր ան-
կախ գոյություն չունեն, բայց մտածվում են իրրեվ անկախ
գոյություն ունեցող յեվ հասկացվում են մտքով:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 18. Հետեւյալ բառերից
արտազրեցե՛ք նախ՝ չնշանվոր, ապա՝ անշոնչ առարկա ցույց
տվող բառերը.

Ձու, հավ, միս, ջուր, այծ, վոչխար, խոտ, կաթ, թի-
թեռ, մրջյուն, սալլ, ծուխ, քամի, հովիվ, կառք, վոտք,
ծառ, կաթակ, մրջյուն, ժամացուց, պղինձ, թանաք, մա-
տիտ, հանճ, մոծակ, ճիճուկ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՆԽԱՏԱՆՔ 19. Հետեւյալ բառերից ար-
տազրեցե՛ք նախ՝ նութական, ապա՝ վերացական առարկա
ցույց տվող բառերը.

Շաքար, ջուր, լերազ, տանճ, ող, միտք, կամք տախ-
տակ, արծաթ, խոտ, բարկություն, կրակ, տանջանք, վախ,
ձլուն, ամառ, սառուց, ծուխ, բարություն, հանգստու-
թյուն, աշխատանք, մուրճ, կացին, ուլժ, հիվանդություն,

աղ, ձմերուկ, համ, ախորժակ, փափադ, ձգտում, պետություն, ժամանակ, ամիս, տարի, ապակի, ավազ, դինի, ալլուր, տարածություն:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 19. Ան բառը, վորի ցուց տված զաղափարն անկախ գոյություն ունի (ձարդ, քար, ծաղիկ), կամ մտածվում ե իրթեվ անկախ գոյություն ունեցող (միտք, ուսում, գործ), կոչվում ե զոյական անուն կամ՝ անուն:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 20. Արտազրեցե՞ք յեզ ընդգծեցե՞ք գոյական անունները:

Հասանք Հրագդանին: Հեռավից դեռ յերեսում եր Մասիսը կամ Արարատը: Անցանք կամքջով: Ահա «Արարատ» գործարանը, ուր գինի և կոնյակ են պատրաստում: Մենք արդեն Յերևան քաղաքումն ենք: Ահա քաղաքի հրապարակը, կոմունարների ալղին, Աբովյան փողոցը: Քաղաքը բավականին փոխվել ե. միքանի տարի առաջ արդպես չեր: Ահա մի շենք, վորի ճակատին գրված ե՝ «Կինոնահիրի», մի ուրիշը՝ «Կինո Պրոլետար»: ահա «Խորհրդակին Հայաստանի», «Մաճկալի», «Ավանգարդի» խմբագրատունը...

Հ Ա Բ Ց Ե Բ Բ.

1. Բոլոր քաղաքներին Յերևան կարելի՞ յէ ասել:
2. Բոլոր քաղաքներին քաղաք կարելի՞ յէ ասել:
3. Բոլոր մարդկանց Արամ կարելի՞ յէ ասել:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 20. Ան անունները, վորոնք կարող են տրվել թե մեկ առարկայի ու թե նրա տեսակին պատկանող բոլոր առարկաներին, կոչվում են հասարակ անուն (որինակ՝ մարդ, սեղան, ջուր, ձուկ, աստղ, վարդ):

ՍԱՀՄԱՆՈՒՄ 21. Այն անունները, վորոնք ցուց են տալիս մի վրօշ անհատ, միայն մի հատ առարկա առանձին վերցրած, իսկ նրա տեսակին պատկանող բոլոր առարկաներին տրվել չեն կարող, կոչվում են հասուլ անուն (որ՝ Գրիգոր, Յերևան, Մասիս, Սևանա լիճ, Մարս):

ԿԱՆՈՆ 15. Հատուկ անունները մնաւտառ են գրվում
(աեւ վորոշում 7):

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 21. Արտազրեցե՛ք յեզ հա-
տուկ անուններն ընդգծեցե՛ք.

1. Անդրկովկասի նշանավոր քաղաքներն են՝ Թիֆլի-
սը, Բագուն, Բաթումը, Յերևանը. առաջինը Վրաստանի
Սխ հանրապետության ե, միենուին ժամանակ, ամբողջ
Անդրկովկասյան Սֆի Հանրապետության մայրաքաղաքն ե:
Թիֆլիսի միջով հոսում ե Քուռ գետը: Յերևանը Հայաս-
տանի մայրաքաղաքն ե, գտնվում ե Հրազդանի ափին: Բա-
գուն Արդքեջանի մայրաքաղաքն ե, գտնվում ե Կասպից
ծովի մոտ, Աղջերոնյան թերակզբու վրա, վոր հարուստ
ե նավթով:

2. Յելան, գնացին Ուրալից գետի Կարպատները լուրթ
ու Կարպատներից մինչև Երզրում ու Երզրումից՝ Տրիալի,
Հոռոմ (Կ. Ա.):

3. Յեզ ինչու միայն նա յերգի, միայն նա—Հովակիմը,
Կարսն, Սովոմոնը, Մարգարը կամ մի բիթլիսցի, վանեցի
Պողոս. իսկ Իվանը, Յուսուֆը, Զունկ-Ֆուն, վոր իրար
ճանաչում են վաղուց (Կ. Ա.):

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 22. Գրեցեք 5-ական հա-
տուկ անուններ՝ Տղամարդկանց, կանանց, պետություն-
ների, քաղաքների, գյուղերի, գետերի, լեռների, ծովերի:

2. ԳՈՅԵԱԿԱՆՆԵՐԻ ԹԽԱԳԸ

§ 20. Կով, կովեր. — ձի, ձիեր. — քար, քարեր. — միտք,
մտքեր: — Աշակերտ, աշակերտներ. — ճանապարհ, ճանա-
պարհներ:

ՍՍՀՄԱՆՈՒՄ 22. Գոյական անուններն ունեն յերկու
թիվ՝ յեզակի յեզ նոզնակի: Յեզակին ցուց ե տալիս մի
առարկա, հոգնակին ցուց ե տալիս նույն տեսակի՝ մեկից
ալելի առարկաներ:

ԿԱՆՈՆ 16. Միավանկ բառերից հոգնակի կազմելու

համար ավելացնում ենք Եր մասնիկը, իսկ ըազմավանկ բառերին՝ ներ մասնիկը:

Միավանկ բառերի ի, ու ծայնավորները կարող են փոխվել ը-ի, վոր չի զրվում (շուն, շներ.—տիկ, տկեր):

Ցույց տվեթ գոյականները յեվ նրանց թիվը.

1. Յելան, սահնեցին հանկարծ
փողոցի ամառվա փոշում—
բուրավոր բանակներ անահ—
զբանապատ բանակներ ուժի:
Շողացին սվիններ, սրեր,—
տերգեցին կրծքեր հզոր—
դրոշներ ծփացին արնավառ—
դրոշ կարմիր, բոսոր...
((Կարմիր Արև, «ԱՄԵՆԱՊՈԵՄ»))

2. Բոլոր ծովերի բոլոր ափերից,
բոլոր գետերի բոլոր լեզուներից
խոպոտ, ալլանդակ
և սպառնալից մոնչյուններով
մեծ արհավիրքի և ավերածի
վողը վոռնացին
շոգենավերի շակներն անվերջ.
խելահեղորեն լացին, ծվացին
բոլոր գյուղերի ու քաղաքների սուլիչները զիւ
լեռնալանջերի առապարներով,
մութ անտառների արահետներով,
խորաձրերի նեղ շավիղներով
շարժվում են ահա,
քայլում են ահա գեղի դաշտերը՝
բահ ու բրիչով,
գերանդիներով ու լեզաններով
արեառ խոժոռ թուխ գյուղացիներ,
դագանակներով զինված հովիժներ,
դուրով, սղոցով, նիգով ու լինգով:
((Կարմիր արև, «ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ»))

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 23. Կազմեցեք հետեւյալ
անոնների հոգնակին.

ա) Քար, հող, կավ, նավ, ծակ, սար, վարդ, սոխ,
բառ, տառ, կով, ալծ, ճանճ:

բ) Գիրք, միրք, միս, գիծ, կիր, թուր, ջուր, մուր,
խուրի, գունդ, թուղթ:

գ) Ատամ, տախտակ, գրիչ, պարտեզ, աշակերտ, տարի,
ըոսեց, վկա:

դ) Դասագիրք, սեղանատուն, ոդանավ, լրագիր, հե-
ռագիր, հողակուլտ, մանկատուն, դասատուն, սևահող, ավա-
զաթումբ, մորաքուլց, քարաժայու, անձեռաջուր:

ե) Զըկիր, հացթուխ, մարդակեր, լուսաբեր, լրատու,
դասատու, հեռախոս, թղթատար, յերկրագործ, զորավար,
լրտես, հաստավիզ, հաստափոր, հանքափոր, սիրունատես:

զ) Ակ, ձուկ, մուկ, նուռ, գուռ, հարս, լեռ, բեռ,
կուռ, գառ, թոռ, վոտ, փուռ, ձեռ:

է) Մարդ, կին, տղամարդ, անձ, զղացում, հուզում:

ը) Մուր, խշտիկ, նշտար, կշեռք, կրակ, ճրագ:

թ) Աստղ, կոճղ, սանր, յեզր, վազր:

ժ) Լու, ձու, բու:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 23 ա. Այն միավանկ բառերը, վոյոնք
զրաքարում և են վերջանում (ձուկն, մուկն, գառն), աշ-
խարհաքարի հոգնակիում, վերականգնելով ևն, վերջանում
են ներ (ձկներ, մկներ, գառներ):

ՍԱՀՄԱՆՈՒՄ 23 բ. Այն բարդ բառերը, վորոնց յերկ-
րորդ բաղադրիչ մասը միավանկ բառ և յեվ այդ միա-
վանկ բառը իր բուն (գոյական) իմաստը պահում և, հոգ-
նակիում վերջանում են եր (դասագիրք—դասագրքեր) իսկ
յեթե այդ միավանկ բառն իր բուն իմաստը չի պահում,
իր գոյական նշանակությունը կորցնելով, ածական իմաս-
տով և գործածվում (յերկրագործ=յերկիրը (հողը) գործող
կամ մշակող), այդ դեպքում հոգնակիում վերջանում և ներ
(յերկրագործներ, զորավարներ): Գաղտնավանկ բառերը
(մը-սուր, կո-ճըղ), վորոնց մեջ ը յեւ լսվում, բայց չի
գրվում, հոգնակիում ներ են վերջանում, յեթե ը-ն սկզբի

վանկում եւ լսվում (նըշտար=նշտարներ), մեծ մասամբ
եր են վերջանում, յեթե ը-ն վերջին վանկում եւ լսվում
(կոճլ=կոճղեր):

ՍԱՀՄԱՆՈՒՄ 23 գ. Միավանկ ու վերջացող բառերի
(յու, ձու, բու) ու ձախավորը, բացի սկզբնական ձեից,
մնացած բոլոր ձեերում վ-ի յե փոխվում. որինակ՝ ձվի,
չպից, ձվով, ձվում, ձվեր, ձվերի և այն:

Եերկավանկ ու վերջացող բառերի ու-ն միայն յեղա-
կիում եւ վ-ի փոխվում, իսկ հոգնակիում՝ վոչ. որինակ՝ կա-
տու, կատվի, կատվից, բաց՝ կատուներ, կատուների...

Բազմավանկ ու վերջացող բառերի ու-ն յեղակիում
կարող եւ փոխվել վ-ի, կարող եւ և չփոխվել (Ղամարլվից,
Ղամարլուից) — յերկումն ել գործածական են:

Յ. ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 21 ա) Ալսաեղ մի գիրք կա... զքեր կան: — Նա
հիսուն կոպեկ զրքի տվեց... զրքերի տվեց: — Այս թուղթը
գրքից եւ պոկել... զրքերից եւ պոկել: Նա դասը զրքով ե
պատրաստում... զրքերով եւ պատրաստում: — Այդ բոլորը
զրքում գրված ե... զրքերում կան:

բ) Արշակի գիրքը կորավ... զրքերը կորան: Նա սպա-
սում եւ գրքին... զրքերին:

ՀԱՐՑ. Գիրք բառն ի՞նչպես փոխոխվեց արդ խոսքե-
րում:

Դիրք (գիրքը), զրքի (գրքին), զրքից, զրքով, զրքում: —
Դրքեր (գրքերը), զրքերի (գրքերին), զրքերից, զրքերով,
գրքում: — ահա այն բոլոր ձեերը, վոր կարող եւ ունենալ
զրք գոյական անունը աշխարհաբար հայոց լեզվում. այդ
ձեերը հինգ են:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 24. Գոյականի ամեն մի փոփոխված
ձեւը կոչվում ե նոլով: Մի բառ նոլովել նշանակում ե՝
անել այն բոլոր ձեվերը, վոր նա կարող եւ ունենալ լեզվի
մեջ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 24. Լրացքիք Յետեվյալ նա-
խադասությունները.

ա) Քար բառով.—Այստեղ մի...կա: Նա կանգնած ե...
մոտ: Նա... հեռացավ: Այս պատը... ե շարած: Նա մնաց
սար ու...:

բ) Քարեր բառով.—Այստեղ շատ... կան: Նա կանգնած
ե...մոտ: Նա... հեռացավ: Այս պատը մեծ-մեծ: .Ե շարած:
Նա մնաց սարերում ու...:

գ) Զուր բառով.—Առուն...կա (*ի՞նչ կա*): Նա գնաց...
(ի՞նչի՞): Լվաց... (*ի՞նչնիլ*): Հանեց... (*ի՞նչից*): Խեղդվեց...
(ի՞նչնմւմ):

դ) Զրեր բառով.—Մեր լերկըում լավ-լավ... (*ի՞նչեր*)
կան: Այս տեսակ-տեսակ... (*ի՞նչերի՞ն*) շշեր են պետք:
Խմենք այս աղբյուրների պաղ-պաղ... (*ի՞նչերից*): Նա կաղ-
դուրվեց: (*ի՞նչերնիլ*): Տեսակ-տեսակ ձկներ կան այս...
(ի՞նչերնմւմ):

ե) Գինի բառով.—Այս կարասում... (*ի՞նչ*) կա: Նա
սպասում ե... (*ի՞նչի՞*): Նա հիվանդացավ... (*ի՞նչից*): Նա հար-
բել ե... (*ի՞նչնվ*): Թաղվեց... (*ի՞նչնմւմ*):

զ) Մարդ բառով.—Սենյակում մի... (*ի՞նչ*) կա: Նա
հանդիպեց մի...: Առա մի ... նրանց թիվն ավելի լե մի...
Սիրո չմնաց խեղճ...:

է) Մարդը բառով.—Ահա լեկավ... (*նվ*): Յես սպա-
սում եմ այն... (*նւմ*): Ստացա քեզ ծանոթ... (*ումից*):
Այս բանը լեղավ այն... (*ումնով*): Ել ուժ չմնաց իմ ծա-
նոթ... (*ումննմւմ*):

ը) Դուռ բառով.—Այս շենքում մի...փակ ե: Նա կան-
գնած ե... առաջ: Այս դուռն ավելի լայն ե այն...: Յես
ներս մտա հարավային...: Նա մենակ կանգնած մնաց բաց....

թ) Գույր բառով.—Ահա լեկավ Գուրգենի...: Հովհան-
նեսը մի գիրք ընծայեց իր...: Արշակը նամակ ստացավ
իր...: Այս բանը լեղավ նրա....:

ժ) Մայր բառով.—Նրա... բարի կին ե: Նա կարոտ ե

վիաղաքշող...: Թաղեսոն անջատվեց...: Նա պարծենում ե
իր...: Վոչ իր հորումն ե տեսել, վոչ ել իր...:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 25. Լրացրե՛ք հետեւյալ
նախադասությունները՝ համապատասխան փակագծեթում՝
դրված հարցերի.

Յես... (ի՞նչով)... (վճրտեղից) յեկա... (ժէր) :— Նա...
(ի՞նչով) կարեց... (ի՞նչը) :— Մենք... (ի՞նչից) ... (ի՞նչ) շի-
նեցինք:— Մեր... (ի՞նչում) մի... (ի՞նչ) կա:— Յերեկի... (ժվ) ...
(ժւմ) մոտից յեկավ... (ժէր) :— Նա շատ ե պարծենում
իր... (ումնվ) :— Իմ... (ովքե՞ր) շատ խերոք են:

§ 22. Ահա իմ առաջ մի գեղեցիկ տուն: Մտնում եմ
ներս: Ընդարձակ սենյակ, լախ լուսամուտներ, մաքուր
հատակ: Ահա տանտերը բարձրահասակ մի մարդ...

Այս հատվածում զոյականները (թե յեզակի թվով և
թե հոգնակի) դրված են անփոփոխ, ուղիղ ձևով և պա-
տասխանում են ո՞վ կամ ի՞նչ, ովքե՛ր կամ ի՞նչե՞ր հարցե-
րին:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 25. Գոյականի անփոփոխ, ուղիղ ձևով,
վոր պատասխանում ե ով կամ ի՞նչ հարցերին, կոչվում ե
ուղղական հոլով:

§ 23. Մոտեցա պատին. Նայեցի ժամացույցին. հենց
այդ ժամին պիտի գնալի, ներկա լինելի մի ժողովի:

Այս հատվածում զոյականները պատասխանում են
ի՞նչի (ն) կամ ո՞ւմը հարցերին ու դրված են տրական հոլով:

§ 24. Այդ բանն իմացա իմ ընկերներից՝ Արշակից,
Գրիգորից ու Սահակից: Նրանք ել փայտից են պատրաս-
տել:

Այստեղ զոյականները պատասխանում են ո՞ւմից,
ի՞նչից հարցերին ու դրված են բացառական հոլով:

§ 25. Սղոցով կորեցինք, ուրագով տաշեցինք, սոսնձով
կպցըինք: Մենակ Արամով չեր լինի, միասին աշխատե-
ցինք:

Ալստեղ գոյականները պատասխանում են ինչո՞վ,
ումո՞վ հարցերին ու դրված են զործիական հոլով:

§ 26. Այդ բանը զօքում կարդացի և տետրակում նշա-
նակեցի:

Ալստեղ գոյականները պատասխանում են ինչո՞ւմ հար-
ցին ու դրված են ներզոյական հոլով:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 26. Վորովինտեղ գոյական բառը հայե-
րենում ինք ծեվ կարող ե ունենալ կամ ինք տեսակ կա-
րող ե փոխվել (§ 21)՝ հաշվելով նայեվ նրա ուղիղ ծեվը,
այդ պատճառով հայերենում ինք հոլով կա. Վորոնցից
ամեն մեկը մի ծիվ ե ցուց տալիս: Ուրեմն հոլովը հիմնվում
է ձեի վրա. առանց ձեի հոլով չկա: Այդ հոլովները հե-
տեւվյալներն են.

ա) Ուղղական հոլով, վոր ցուց ե տալիս բառի ու-
ղիղ, սկզբական ձեւ և լեզակիում հատուկ վերջավորու-
թյուն չունի, իսկ հոգնակիում վերջանում ե եր կամ ներ,
որինակ՝ մարդ, ձի, կով, հող, ջուր, լերկիր, մարդիկ,
ձիեր, կովեր, հողեր, ջրեր, լերկիրներ:

բ) Տրական հոլով, վոր լեզակիում ունի հետեւալ վեր-
ջավորությունները.

1) Ի (կովի, ջրի, աշակերտի, լճի) կամ ին (կովին,
ջրին, աշակերտին, լճին – ն հոլով – տես § 27, 28, 29,
վորոշում 27—30):

2) Ու (գինու, ձիու, մատանու, սիրելու) կամ ուն
(գինուն, ձիուն, մատանուն, սիրելուն – ն հոլով):

3) ան, վան, յան, (գուան, լեռան, տարվան, վաղ-
վան, չարության, արլան:)

4) ոջ (քըռջ, կնոջ, տիրոջ):

5) որ (հոր, մոր, լեղբոր):

6) ց (միայն հոգնակիում – մերոնց, ձերոնց, վոմանց,
դրիգորենց):

Ե ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն 1.—Համապատասխան տրական հո-

լովի լեզակի թվի վեց վերջավորությունների՝ վեց տեսակի՝
հոլովում կա (տես ներքեւում «Հոլովումների պատկերը»):

գ) Բացառական հոլով, վոր վերջանում է ից, ուց
(կովից, լճից, գինուց, փոսկուց):

Բացառական հոլովը վորոշ ասուլիթներում վերջանում
է ե, որինակ՝ լերկը լերկիր, բարե քար, ծովե ծով և
այն:

դ) Գործիական հոլով, վոր վերջանում է ող (լճով,
գինով, փոսկով):

Գործիական հոլովը կարող է վերջանալ նաև ը, որին
նաև՝ բարությամբ, չարությամբ... այս գեպքում ը-ից առաջ
Ն հնչլունը մ-ի լե փոխվում — բարությանը = բարությամբ:

ե) Ներգոյական հոլով, վոր վերջանում է ու՛ (լճում,
գինում, փոսկում):

Մանություն 2.—Անհավորություն ցուց տվադ
բառերը (մարդ, կին, աշակերտ, լերպիչ և այլն) ում վեր-
ջավորությամբ ներգոյական, սովորաբար, չեն դրվում...
այդ բառերի ներգոյականը կազմվում է տրական հոլովից՝
մեջ բառն ավելացնելով (մարդու մեջ, կնոջ մեջ և այլն):

ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԸ

I

Յեղակի

Ուղղ.	հող	հողը	հողեր	հողերը
Տր.	հողի	հողին	հողերի	հողերին
Բաց.	հողից	(հողիցը)	հողերից	(հողերիցը)
Դործ.	հողով	(հողովը)	հողերով	(հողերովը)
Ներզ.	հողում	(հողումը)	հողերում	(հողերումը)

Հոգնակի

Հոգնակի	հոգնակի	հոգնակի	հոգնակի	հոգնակի
Հոգնակի	հոգնակի	հոգնակի	հոգնակի	հոգնակի
Հոգնակի	հոգնակի	հոգնակի	հոգնակի	հոգնակի
Հոգնակի	հոգնակի	հոգնակի	հոգնակի	հոգնակի
Հոգնակի	հոգնակի	հոգնակի	հոգնակի	հոգնակի

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 26. Հոլովեցե՛ք հոդ բառի
Նման հետեւյալ բառերը.**

Քար(ը), ծով(ը), ջուրը(ը), կով, ալծ, տետրակ, գլուխ,
խրճիթ, բանվոր, ուսուցիչ, ճանապարհ, գործարան, գա-

ասպէլք, յերգիչ, գրատախտակ, սևահող, լրագիլ, հեռագիր, հայթուխ, ջրկիր, ջրվեժ, Վարդան, Աշոտ, պարտեզ, լուլս, ուժ:

II

Յեղակի

Հոգնակի

Ուղղ.	գինի	գինին	գինիներ	գինիները
Տր.	գինու	գինուն	գինիների	գինիներին
Բաց.	գինուց	(գինուցը)	գինիներից	(գինիներիցը)
Գործ.	գինով	(գինովը)	գինիներով	(գինիներովը)
Ներգ.	գինում	(գինումը)	գինիներում	(գինիներումը)

ԴՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 27. Հոլովեցե՛ք զինի բառի նման հետեւյալ բառերը.

Մատանի (ն), կաշի (ն), ձի, թի, վոսկի, հոգի, տարի, գոտի, գարի, մարդ, վայրենի, խնձորենի, կաղնի, խողենի, գեղանի, Անի, Վանի, սիրելի, սեր:

III

Յեղակի

Հոգնակի

Ուղղ.	փուռ	փուռը	փոներ	փոները
Տր.	փուն	(փունը)	փոների	փոներին
Բաց.	փոից	(փոնից)	փոներից	(փոներիցը)
Գործ.	փով	(փոնով)	փոներով	(փոներովը)
Ներգ.	փում	(փոնում)	փոներում	(փոներումը)

ԴՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 28. Փուռ բառի նման հոլովեցե՛ք.

Զուկ, մուկ, լեռ, կուռ, դուռ, նուռ, գառ, յեղ, թոռ:—Ուսում, անկում, թաղում, բացում, բորբոքում, զառում, վճարում, ձուլում:—Գոյություն, միություն, արյուն, անկյուն:—Գարուն, ամառ, աշուն, ձմեռ:—Որ, շաբաթ, ամիս, տարի, վաղը, յերեկ, կեսօր, իրիկուն, հերու, հիմա, կերպակի:

IV

Յեզակի

Հոգնակի.

Ուղղ. քույր	քույրը	քույրեր	քույրերը
Տր. քրոջ	քրոջը	քույրերի	քույրերին
Բաց. քրոջից	(քրոջիցը)	քույրերից	(քույրերիցը)
Դործ. քրոջով	(քրոջովը)	քույրերով	(քույրերովը)
Ներգ. (չունի)	—	(քույրերում)	—

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 29. Յուրի բառի պես հոլովեցե՞ք.

Մորաքույր, հորաքույր, կին, տիկին, տանտիկին, ընկեր, տեր, տանուտեր, աներ:

V

Յեզակի

Հոգնակի

Ուղղ. յեղբայր	յեղբայրը	յեղբայրներ	յեղբայրները
Տր. յեղբոր	յեղբորը	յեղբայրների	յեղբայրներին
Բաց. յեղբորից	(յեղբորիցը)	յեղբայրներից	(յեղբայրներիցը)
Դործ. յեղբորով	(յեղբորովը)	յեղբայրներով	(յեղբայրներովը)
Ներգ. (չունի)	—	(յեղբայրներում)	—

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 30. Յեղբայր բառի պես հոլովեցե՞ք.

Հայր, մայր, նախահայր, նախամայր, հորեղբայր, մոռեղբայր, սանահայր, սանամայր:

VI

Հոգնակի

Հոգնակի

Ուղղ. մերոնք	Ասուենք
Տր. մերոնց(ը)	Ասուենց(ը)
Բաց. մերոնցից(ը)	Ասուենցից(ը)
Դործ. մերոնցով	Ասուենցով
Ներգ. (չունի)	(չունի)

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 31. Աեղոնիշյալ բարերէ պես հոլովեցե՞ք.

Զերոնք, իմոնք, քոնոնք, պապոնք, տատենք, հերանք,
Ներսեսենք, վոմանք, ումոնք, վորոնք:

Հ. Ա. Բ Ց.

Ենչպես կհոլովեք (յեզակի յեվ հոգնակի)

1. Մուր, ջուր, սուր, թուր, հուր:
 2. Գիր, կիր, բիզ, ցից, գիծ:
 3. Կես, եղ:
 4. Մակու, Բազու, Դակու, բու, լու, ձու:
 5. Ղամարլու, Բաջնալու, Ուլիխանլու:
 6. Կարկուտ, բրուտ, մռութ, յերգիչ, Մկրտիչ, գրիչ,
- սիրտ:*
7. Անձրևաջուր, քարարլուր, շղագիր, զրահակիր,
 - կուպըր:
 8. Ասո, Մկո, Գևո, Սաքո, Կարո:
 9. Յերգչուհի, Հայկուհի:
 10. Լրատու, հարկատու, վերարկու:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 32. Արտագրեցե՞ք յեվ զույականի վերեվ նշանակեցե՞ք իր հոյովի սկզբնատառը (Ու. Տ. Բ. Գ. Ն.):

1. Կապուլտ յերկնքով ամպեր են սահում: Արեփ ճառագալթները սփռվել են սարերում ու ձորերում: Դպրոցում պարապմունքներն արդեն սկսվել են: Մեր դասարանի աշակերտներից վսմանք բացակա լին: Մենք գպրոց ենք յեկել՝ գրքերով, տետրակներով, զասական բոլոր պիտուկքներով: Մեր ընկերներից՝ Թագեռու, Հովհաննեսը, Գաբրիելն ու Աննիկը չեն բերել իրենց պիտուկքները:

2. Լ Ե Ն Ի Ն Ի Մ Ա Հ Ը

Պրագի, Բերլինի գործավոր թաղերում,
Լոնդոնի, Պարիզի և Կոպենհագենի,
Բլուրավոր մուրճեր ծանրորեն զարկին.
«Լինինը մեռալ, մեծ ընկեր լինին»:

Վառվում են քաղաքներ՝ Մոսկվա ու Վիեննա,
Բուժբեր, Կապշտագ՝ դառնադին սրտով.
Վողը պոռթկում և վշտի անգունդից.
«Լենինը մեռավ, մեծ ընկեր Լենին».

(Կաբմիր Արե)

3. Հեղեղաաները

Ժայռեր են պոկում լեռնալանջերից,
և թնդուններով, զզրդուններով,
վորոտումներով և բոմբուններով
վար են գլորվում ժայռերն ամենի,
փորում են հողը,
ծառեր են քաշում,
ավեր տարածում։

Բայց ահա քամին դիպչում և ծովին...
ծովը նախ մեղմիկ մըմունջ և հանում,
տրտունջ և հանում,
հետո հուզվում և տակավ առ տակավ,
և բողոքում և, և բզավում և խռովուն ձայնով.
ապա՝ կատաղած՝ փքիում և, ուռչում,
թափահարում և բաշը փրփրած,
հազար ու հազար քաղցած վագրերի
ահեղադգորդ մոնչցուններով գարկում և ափին։

(Կաբմիր Արե, «ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ»)

ԳՈՐԾՆԱԿՁՆ ԱՇԽԱՏԱՆՔ 33. Արտ սգրեցե՛ք յեվ փակա-
գծերում դրած զոյականները հոլովեցե՛ք իմաստի համա-
ուլատասխան։

Արամը մոտեցավ իրենց տան... (գուռ): Բարձր...
(իրո) ստորոտում մի գրուղ կա: Մենք գնացինք... (ձուկ):
Նա պատահեց իր... (հալլ և մալլ): Յես իմ... (քույր)
Նամակ ստացաւ: Հոկտեմբերը... (աշուն) ամիսներից և:
Մենք սովորում ենք... (դպրոց): Այս ճանապարհն անց-
նում է... (սարեր և ձորեր): Իմ... (լեղբալլ) մի գիրք ստա-
ցաւ: Դու կոտրեցիր... (գինի) բաժակը: Հիվանդը... (տա-
քություն) մեջ է: Մենք գրում ենք... (գրիչ և մատիտ):

Մեր... (դրբեր) նկարներ կան: Դասարանի... (ջերմություն) աստիճանը բարձր ե: Մենք լեկանք... (կառք): Այս առնը բարձր ե ձեր... (տուն): Հալրս այժմ գտնվում ե... (քաղաք): Քամին փչում ե... (լեռներ): Գնա այս... (ճապարհ): Սևանա... (լիճ) շատ ձկներ կան: Նա քնել ե աջ... (կուռ) վրա: Սերոբը տնքում ե ծանր... (բեռ) տակ: Ազդ... (նուռ) գույն ունի: Բեր... (զինի և ողի) բաժակները: (Բուրդ)... գուլպա պատրաստեցին: Գնած իրերը փաթաթեց... (թուղթ): Զգուշացիր քացի տվող... (ձի): Ռու չգիտե... (գումարում) գործողությունը: Բոլորդ ներկարացերը բժշկական... (հետազոտում): Ամեն որ... (յեղանակ) որագիր կազմեցեք: Զափեցեք ջրի... (ջերմություն) աստիճանը: Մուկը վախենում ե... (կատու): Ճուռիկը դուքս լեկավ... (ձու), (Առու)... ափին մի ուռի կա, վորի... (սովեր) հոտաղները հանգստանում են... (ամառ) շոգին: Որքաթ... (որ) դասերը պատրաստել եմ, միայն... (թշարանություն) դասից յերկու խնդիր ե մնում:

Հ Ո Դ Ե Ր

§ 27. Աղջի, Վարդիշանդ, թե հոգիո սիրես,
մի գարիդ զցիր, տես՝ ինչ և ասում.
աչքս խավարի, տեսիլք դառնամ լես,
տեսիլք եմ տեսել գիշերս յերազում:
Մի գարիդ զցիր, թե վորդով խնդաս,
ես յերազ իսկի լես լավ չեմ փորձել...
Անրան գառները մութ ձորի միջին,
խաղ ելին կանչում ու ձենով լալիս:
(Կարմիր Արե, «Ան՛՛՛՛՛՛»)

ԱԱՀՄԱՆՈՒՄ 27. Գոյսկան անունների կամիքը զոյսկան անուն գործածվող բառերի վերը դրվող ս, դ, ն, (կամ լ) մասնիկները նոդեր են կոչում:

§ 28. Գիշերս (այս գիշեր) շատ անձրև լեկավ. գլուղիս (այս գլուղի) բանն ել կտրվի. վերջին որերս (այս վերջին որերը) միշտ այսպես ե...

ՍԱՀՄԱՆՈՒՄ 28 ա. ս հողը, վոր դրվելով անվան վերջը, այս գուցականի իմաստն և ավելացնում, կոչվում ե ցուցական հոդ:

Յերբ բառի վրա ստացական այս ցուցական վերադիր ե դրված, այդ գեպքում և ցուցական հոդ չի դրվում:

§ 29. Յերբ տեղ հասանք, յերկուսս (*մենք յերկուք*) մնացինք, յերեքդ (*դուք յերեքով*) գնացիք: Մնացողներս (*սենք մնացողներս*) ել չիմացանք, թե գնացողներդ (*դուք գնացողներդ*) ուր գնացիք:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 28 բ. ս, դ հոդերը, վորոնք դրվելով բառերի վերջը, յես, դու, մենի, դում բառերի նշանակությունն են ավելացնում յեվ այդպիսով բառին առաջին կամ յերկրորդ դեմքի նշանակություն տալիս, կոչվում են դիմուոց հոդեր:

§ 30. Ե՞լ, հին ծանոթներ, Ել, կանաչ սարեր,
ահա ձեզ տեսա ու միտս ընկան,
առաջս յեկան յերջանիկ որեր...

— Վախենում եմ յես... զամեզ տեղը դիր...
սիրոս գողում ե տերեսի նման:...

Մոսի ջան, Մոսի, զլիսովդ շուռ կամ...

— Արտասվելով, լալով եղափս
յետ չես դարձնի ել գերիդ.
ինչու իզուր հանդցնում ես
ջահել կրակն աչքերիդ:

(Կարմիր Արև, «ԱՆՈՒՇ»)

ՍԱՀՄԱՆՈՒՄ 29. ս, դ, ն (ը) հոդերը, դրվելով բառի վերջը յեվ վրան տվելացնելով իմ, նո, իր, մեր, ձեր, նրանց ստացականների նշանակություն, կոչվում են ստացական հոդեր: Յերբ բառն ունի իմ, նո, իր (յուր), մեր ձեր, նրանց ստացական վերադիրներից մեկնումեկը, այդ գեպքում ավելորդ ե բառի վրա ստացական հոդ գնել, որինակ՝ սովորական չե ասել— իմ գիրքս, քո գիրքդ:

§ 31. Ասում են՝ ուսոին
աղջիկ եր ինձ պիս,
մեռմ եր յարին,
ու չեկագ նա տես,
և էլքը գողալով
անհուկս կռացավ...
յրերի վրա
գլուխը կախած
դեռ գողում ե նա...

(Կարմիր Արև, «ԱՆՈՒԻՇ»)

ՍԱՀՄԱՆՈՒՄ 30. Ե (կամ ը) հոգը, վրա դրվելով բառի վերջը՝ նրա ընդիանուր յեվ անորոշ նշանակությունը սահմանափակում ե, վորոշ ու ծանոթ առարկա ցույց տալով, կոչվում ե վորուող նոդ: Զայնավորով վերջացող բառերի վրա դրվում ե ն վորոշող նոդ (ուսիրին, վկան, կատոն, բազեն, Մաքոն). բաղաժանով վերջացող բառերի վրա, յերբ հաջորդ բառը նույնպես բաղաժանով ե սկսվում, դրվում ն ը նոդը (քարը քարլվեց), իսկ յեթե հաջորդ բառը, ծայնավորով կամ սկ, սպ, սս, զզ, գր, սմ, սփ, եկ, շպ, ըս-ու ե սկսվում, ն վորոշող նոդն ե դրվում (քարն ընկավ, մարդն զգաց յեվ այլն. տես § 9, կանոն ‡):

Վորուող նոդ դրվում ե՝

1. Հաստուկիանունների վրա. որինակ՝ Արամն ու Հայկը դնացին:

2. Հսաւրակ անունների վրա, վորոնք ցույց են տալիս առարկայի սեռը՝ այսինչ կամ այնինչ տեսակը. որինակ՝ կովը կաթնատու կենդանի յե.՝ խնձորենին ծառ ե:

3. Խոսքի մեջ մի անգամ արդեն հիշված ծանոթ անունը, որինակ՝ մի աստղ ցոլաց յերկնքում. աստղը ցոլաց և անհայտացագ:

4. Այն բառերի վրա, վորոնց վրա դրված են՝ այս, այդ, այն, սույն, ցացականները. որինակ՝ այս բաժակը, այս գինին, այդ կատոն, սույն գրությունը և այն:

5. Ան բառերի վրա, մորոնց վրա դրված են՝ մյուս, մեկել, բոլոր, այսինչ, այնինչ անորոշները և վո՞յ հար-

շականը. որինակ՝ մլուս տետրակը, ձեկել կատուն, բոլոր
ծառերը, այսինչ մարդը, այնինչ տարին, վար գիրքը և ազն:

6. Այն բառերի վրա, վորոնց վրա դրված ե՛ իմ, քո,
իր, մեր, ձեր, նրանց, իրենց, սրա, դրա, նրանց,
դրանց, նրանց, վորի՝, վորո՞նց, ո՞ւմ բառերից մեկնումեկը.
որինակ՝ իմ անունը, քո աչքը, ում տետրակը և ազն:

7. Այն բառերի վրա, վորոնք փոխարինում են զեղչված
անվանը. որինակ՝ նա յերկու վորդի ունի. մեկը (մի վոր-
դին) գրագետ ե, մլուսը՝ (մլուս վորդին) անգրագետ։ Ազ-
պես նաև՝ իմը (իմ գիրքը), քոնը (քո գիրքը), նրանը (նրա
գիրքը), Արամինը (Արամի գիրքը), յերեկվանը (յերեկվա-
դասը):

Ազազիսի դեպքերում, յերբ բառը ծայնավորով ե վեր-
ջանում, նը կամ նն կրկնակի հողն ե առնում, իսկ յերբ
ըսղածսյնով ե վերջանում, միայն ը (ն) հողն ե առնում
(տես վերևի որինակները):

Բ. ԴԵՐԱՆՈՒՆ

32. Սուրիկը դպրոցից յեկավ տուն. նա նստեց նա-
խաճաշի։—Աշակերտները բակից հեռացան. նրանք ազնս
դասեր չունելին։—Աշխենը շատ ուրախացավ. նրան մայրը
գիրք եր նվիրել։—Իմ յեղբայրը քաղաքում ե ապրում.
Նրանից յերեք նամակ ստացա։—Ահա քո տված դրքերը.
սրանք կարդացել եմ։—Յես «Լուսաբճակ» եմ ստացել.
Նոր տպված գիրք ե այլ։—Տես՝ ինչ լավ մատիտ ե. այս
կտաս Վաշիկին։—Իմ «Կարմիր Արևը» կորել ե. լավ գիրք
եր այն։—Վեցցրն այս տետրակները. սրանք Մինասին
կտաս։—Այդ գրքերը թող մնան. դրանք ինձ պետք են։—
Այսոր յեկավ այն աշակերտը, վոր յերեկ հիվանդ եր։—
Մուկուչին գովում եր, ով տեսնում եր նրա արածը։—
Կատարիք այն բոլորը, ինչ քեզ ասացի։—Ահա այն գլուզը,
որ յես ապրում եմ։—Յեկա այն որը, յերբ դու բացակա
ելիք։

ՀԱՐՑ. — Ընդդժված բառերը (նա, նրանք և այն) ինչ
բառերի տեղ են դրված:

Ես, դու, նա, մենք, դոք, նրանք (նոցա), այս, այդ,
այն, սա, սրանք, դրանք, ով, ինչ, ար, յերբ — դեռա-
նուններ են: Դերանունները նշանակութիւնը գոյական
բառեր են:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 31. Դերանուն կոչվում են այն գոյական
բառերը, վորոնք դրվում են ծանոթ առարկաների անուն-
ների տեղ՝ այդ անունները նորից շկրկնելու համար. որ.
Սուրբիկը զպրոցից լեկավ տուն. նա (Սուրբիկը) նստեց նա-
խաճաշի. — այստեղ նա բառը դրված է Սուրբիկ անվան փո-
խարեն, նրա տեղ, վորպեսզի Սուրբիկ բառը մտտեմու-
շկրկնենք:

Գոյական անունները վորոշ, հաստատուն նշանակու-
թիւն ունեն (հաց, ջուր, վարդ), իսկ դերանունները փո-
փոխական նշանակութիւն ունեն, նայած թե ինչ բառի
տեղ են դրվում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 34. Արտագործե՛ք լեկ ընդ-
զեցե՛ք դերանունները.

Կանչեցնք Սերոբին, Աշոտին ու Բաբենին. Նրանք
սանցեռլակի անդամներ են: Աշոտն իմ ընկերն ե. լիս նրան
վաղուց եմ ճանաչում, մենք միասին աշխատում ենինք աշ-
կոռպում: Յեկեք գնանք Գուրգենի մոտ. նրանց տունը մոտ-
ե մեզ. նրան կվերցնենք հետներս, կգնանք դպրոց, միա-
սին կպատրաստենք մեր վաղվա աշխատանքները: Թե լիս,
թե դու, թե նա—աշխարհոդիմին պիտի հաշիվ տանք: Սրան
ձեզ հետ տարեք, իսկ նրան՝ թողեք այստեղ: Այս պիտի
կարդաս, իսկ այն՝ կարելի լր չկարդար: Յես այդ եմ ջար-
դել և վոչ թե՝ այն: Սրանով կդրես, իսկ դրանով՝ կչնջես:
Նրանք իմ ընկերներն են: Դրանք իմ գրքերն են. լիս
նրանցով եմ դաս պատրաստում: Նրանցից առա, սրանց
տվի: Բացի ինձնից, այնտեղ ելիք՝ դու, նա. սա միայն

քիչ ուշ յեկավ։ Ով տեսնի՝ կզարմանա։ Ինչ ուղես՝ կտեսնես։ Ուր ուղես՝ կդնաս։ Յերբ ուղես՝ կկարդաս։ Տուր այն գիրքը, վոր ստացար։ Տուր այն մատիտը, վորով գրում ես։ Մենք պետք ե ոգնենք միմյանց։ Ոգնեցնք մեկմեկու։ Զեռք տվեք իրար։ Ո՞վ ե այսոր բացակա։ Ի՞նչ ասաց նա։ Ո՞ւր գնաց ընկերդ։ Յերբ կորցրիր գիրքու։ Վարն ե լավ և զժը՝ վատ։ Ի՞մը վորն ե, քոնը վորն ե։ Մերը վորն ե, ձերը վորն ե։

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

§ 33. Յես գնում եմ, իսկ դու գալիս ես։ Նա չի ուղում մեզ հետ գալ։ Մենք կարդում ենք։ Դուք նկարում եք։ Նրանք գնացին։ Յես ալտեղ եմ։ Մենք այնուեղ չկալինք։

Յես, դու, նա, մենք, դուք, նրանք—դրված են անող կամ յեղող անձի անվան տեղ։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 32. Յես, դու, նա, մենք, դուք, նրանք, ինքս, ինքդ, ինքներդ, իրենք—կոչվում են անձնական դերանուններ, վորովիտեվվ դովում են անձի անվան տեղ։

§ 34. Այս իմ գիրքն ե, իսկ այդ՝ քոնը։ Այն վաղուց ե կորել։ Սրանք մեծերն են, իսկ դրանք՝ փոքրերը։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 33. Այս, այդ, այն, սա, դա, նա, որանք, որանք, նրանք—կոչվում են ցուցական դերանուններ, վորովիտեվվ առարկայութեան անվան փոխարեն դրվելով՝ արտահայտում են ծեռքով ցույց տալու կամ մտքով ակնարկելու գաղափար։

Այս, այդ, այն ցուցականները դրվում են իրի անվան տեղ, իսկ սա, դա, նա—անձի անվան տեղ. որինակ՝ մատիտը տուր, այդ ինձ պետք ե (չի կարելի ասել՝ դա ինձ պետք ե)։—Յես այդ գտել եմ (սխալ ե՝ յես դա գտել եմ).—Ահա այն տղան. սա լավ է կարդում։

§ 35. Աշխենն ու Վարդուշը միշտ ոգնում են միմյանց։ Նրանք լեռեք չեն մոռանում մեկմեկու։ Լավ գիտեն, վոր ընկերներն իրար պետք ե սիրեն և ոգնեն։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 34. Միմյանց, մեկմեկու, իրար,—կոչ վում են փոխադարձ դերանուններ։

§ 36. Ընտրության ժամանակ իմ ձայնը կստանա այն ընկերը, ով ամենից ավելի յեռանդուն եւ—կատարեցէք այն աշխատանքները, ինչ հանձնարարել ենք ձեզ։ Գնա մոտիկ գյուղը, որ մեր ընկերներն են այժմ։ Յեկ այն որը, յերբ յես ալստեղ կլինեմ։ Յեկավ մեր ընկերը, վոր յերեկ հիվանդ եր։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 35. Ո՞վ, ինչ, որ, յերք, վոր—կոչվում են հարաբերական դերանուններ։

§ 37. Ո՞վ գիտե նրա տեղը։ Արշակն ի՞նչ ասաց։ Ո՞ր գնանք։ Յեկավ նա։ Այս գրքերից վո՞րն ես ուզում։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 36. Ո՞վ, ի՞նչ, ո՞ր, յե՞րք, վո՞ր—կոչվում են հարցական դերանուններ։

§ 38. Յես ել մատիտ ունեմ, գու յել. իմը սե ե, իսկ քոնը՝ կարմիր։ Իմը թող չինի, իրենը լինի։ Մե՞րն ե լավ, թե ծերը։ Նրանցն ամենից լավն ե։ Յես գրում եմ իմով, գու գրում ես քոնով։ Իմոնք տար, քոնոնք բնը։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 37. Իմ, քո, իօ (յոր), մեր, ծեր, նրանց (նոցա)։ Կոչվում են ստացական դերանուններ։

§ 39. Յերեկ մի վոմն անցնում եր փողոցով. Թե իսչ ոքմին եր նա, չկարողացա իմանալ.

ՍԱՀՄԱՆՈՒՄ 38. վոմն, վոք, ոքմին—կոչվում են անուռու դերանուններ։

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

Յեղակի

Ուղղ.	յես,	ինքս	գու,	ինքդ	նա,	ինքը	նա
Տր.	ինձ		քեզ		իրեն		նրան
Բաց.	ինձնից		քեզնից		իրենից		նրանից
Գործ.	ինձնով		քեզնով		իրենով		նրանով
Ներգ.	ինձնում		քեզնում		իրենում		նրանում

Հոգնակի

Ուղղ.մենք,	ինքներս	դուք,	ինքներդ	նրանք,	իրենք	նրանք	
Տր.	մեզ		ձեզ		իրենց		նրանց
Բաց.	մեզնից		ձեզնից		իրենցից		նրանցից
Գործ.	մեզնով		ձեզնով		իրենցով		նրանցով
Ներգ.	մեզնում		ձեզնում		իրենցում		նրանցում

Յեղակի

Ուղղ.	սա	դա	ով	ինչ	վոր
Տր.	սրան	դրան	ում	ինչի	վորին
Բաց.	սրանից	դրանից	ումից	ինչից	վորից
Գործ.	սրանով	դրանով	ումով	ինչով	վորով
Ներգ.	սրանում	դրանում	—	ինչում	—

Հոգնակի

Ուղղ.	սրանք	դրանք	ովքեր	ինչեր	վորոնք
Տր.	սրանց	դրանց	—	ինչերի	վորոնց
Բաց.	սրանցից	դրանցից	—	ինչերից	վորոնցից
Գործ.	սրանցով	դրանցով	—	ինչերով	վորոնցով
Ներգ.	սրանցում	դրանցում	—	ինչերում	վորոնցում

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 35. ՀԵՌԵԼՋԱԼ ՆԱԽԱՐԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ այնպես փոփոխեցեր, վոր նրանց մեջ յեղած գերանունները հագնակի դվեն. — որ.՝ յերեկ ով յեկավ, — յերեկ ովքեր յեկան.

Յես յեկա դպրոց։ Դու ալսոր նրան տեսնել ես։ Արշակն ինձ գիրք տվեց։ Այս կտաս Գուրզենին։ Յերեկ ով յեկավ։ Սա յե այն աղան, զսրի մասին ասում ելի։ Թե յես, թե դու և թե նա ալսոր այնտեղ պետք ե լինենք։ Իմ, քո և նրա մասին ե խոսքը։ Ինձնից առար, նրան տվիր։ Ինձնում ել ուժ չմնաց։ Քեզնում ընկերական վոգի չկա։ Սրանով և դրանով կարելի յե կտրել։ Ինքն և այդ բանն արել։ Դիրքն իրեն կտաս։

Գ. Ա Ծ Ա Կ Ա Ն

§ 40. Մենք կանգ առանք զեղեցիկ և բարձր շենքի առջև։ Արևի պայծառ շողերով վողովզել ե կանաչ զաշտավայրը։ Թանձր ծուխը բարձրանում ե բարաշեն գործարանի հոկարական ծխնելույներից։ Տան յերրորդ հարկում յերեք սենյակ կա։

Գեղեցիկ, բարձր, պայծառ, կանաչ, թանձր, քարաշեն, յերրորդ, յերեք-բառերը առարկաների հատկանիշներ։ Տան յերրորդ հարկում յերեք սենյակ կա։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 38. Առարկայի հատկանիշ ցույց տվող բառերն ածական են կոչում, վորոնց ցույց տված գաղափարներն անկախ գոյություն շունեն կամ իբրեւ անկախ գոյություն ունեցող շեն մտածվում։ Ածականի արտահայտած գաղափարը մտածվում ե վորեվէ այլ գաղափարի հետ կապված։ որ՝ գեղեցիկ յեկ բարձր ըենի կապակցության մեջ գեղեցիկ և բարձր բառերի արտահայտած գաղափարները մտածվում են շենք բառի գաղափարի հետ կապված։

§ 34. Յես ունեմ մի լավ գիրք։ — Այդ լավ գրքին մի ոռւբի յեմ տվել։ — Այդ լավ գրքից արագգրիր միքանի տող։ — Այդ լավ գրքով պատրաստիր դասդ։ — Այդ լավ գրքում գրված ե։ — Այդ լավ գրքերը, — այս լավ գրքերի...

ԿԱՆՈՆ 14. Ածականը յերբ գործ ե ածվում գոյականի հետ, անփոփոխ և մնում, չի հոլովվում։

§ 41. Այդ մատիսներից մեծը տուր, իսկ փոքրը թող մնաւ: — Մեծով կզրեմ, փոքրով չեմ գրի: — Մեծին փող կտամ, փոքրին չեմ տա: — Մեծերից մեկը վերցրնւ:

ԿԱՆՈՆ 17. Ածականը, յերբ գործ եւ ածվում առանց գոյականի, փոփոխվում ե, հոլովվում ե գոյականի նման, ընդունելով ն (ը) հոդը:

Ա. Խ. Ա. Ն. Ե. Ր. Տ. Ե. Ս. Ա. Կ. Ա. Հ.

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 36. Արտազրեցե՛ք յեվ ընդ-
զեցե՛ք ածականները: —

Մենք գրում ենք սև թանաքով սպիտակ թղթի վրա: Ընդարձակ ու յերկար փողոցի յերկու կողմերում բարձր տներ են շարված: Վերին հարկից գեպի ստորին հարկը թեք սանդուղք ե դրված: Թանձր խավարը լուսավորվում է ճրագի աղոտ լուսով: Ահա մի վոսկե ժամացուց՝ արծաթե շղթալով: Պիոներական ակումբի թատերական դահլիճում յերեքշաբթի որը հետաքրքրական ներկայացում կար: Սանիտարական հանձնաժողովը յերբորդ և չորրորդ խմբերի աշակերտներից ե կազմված:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 39. Առարկայի վորակ (ինչպիսի լինելը) ցուց տվող ածականները կոչվում են վորակական ածականներ: որինակ՝ սիրուն մատիտ, կարմիր մատիտ, մեծ մատիտ, փոքր մատիտ, բարակ մատիտ, աժան մատիտ, թանգ մատիտ, լավ մատիտ, վատ մատիտ և այլն:

Ցուց տվեք վորակական ածականները հետեւյալում:

Մենության խավար զնդանից կրկին
յես վերադարձա հզոր ու հպարտ,
և ինձ վողջունեց աղմուկը զվարթ
ու նոր խնդությամբ ալրեց իմ հոգին:
Անխոս տանջանքիս գիշերում անքուն
իր հուրը վառեց մի պայծառ կարոտ, —
հոր սիրով յեցուն՝ դարձա յես ձեզ մոտ,
և նոր յերգեր են հնչում իմ հոգում:

§ 42. Ալս շենքն ընդամենը յով սենյակ ունի. յուրաքանչյուր սենյակ յերկու կամ յերեք լուսամուտ ունի. Զորբորդ ու հինգերորդ սենյակների լուսամուտները փողոցի կողմեան...

Ալս հատվածում ընդգծված լոթ, յերկու... չորրորդ, հինգերորդ... բառերը թվական ածականներ են:

ՍՈՀՄԱՆՈՒՄ 40. Առարկաների թիվ ու համար ցուց տվող ածականները թվական են կոչվում և յերկու տեսակ են լինում.

ա. Քանակական ածական, վոր ցուց եւ տալիս առարկայի հանի կամ վորքան լինելը. որինակ՝ յերկու բաժակ, շրջա մետք, հարյուր մարդ, տասներկու գրիչ:

բ. Դասական ածական, վոր ցուց եւ տալիս թե առարկան վորեվի շարքում քանիերորդ տեղն երնում. որինակ՝ յերրորդ հարկի չորրորդ սենյակը. հինգերորդ շարքի յերկորդ նստարանը:

ԿԱՆՈՆ 18. Դասական ածանցն երգի, վոր ավելանալով քանակական թվականների վրա՝ ստացվում ե՝ յերկրորդ=յերկորդ, յեր-ըորդ=յերրորդ, չոր-ըորդ=չորրորդ, հինգ-ե-ըորդ=հինգերորդ, այսպես նաև՝ վեցերորդ, յոթերորդ, ութերորդ, իններորդ, տասներորդ, տասնեմեկերորդ, քսաներորդ և այլն:

ՀԱՐՑ. Ինչու դասական թվականներից յերրորդ ու չորրորդ յերկու ը-ով են գրվում, իսկ մյուսները՝ մի ը-ով:

ՏԵՂԵԿԱՆՔ. — Յերրորդ բառի արմատն ե՝ յեր, չորրորդ բառինը՝ չոր:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 37. Կազմեցե՞ք խոսքեր, վորոնց մեջ թվականներն առանց գոյականների գործածված լինեն, այսինքն՝ գոյականները գեղջված:

Ի՞նչ փոփոխություն կրեցին թվականները:

ՍՈՀՄԱՆՈՒՄ 41. Առարկայի անորոշ քանակ ցուց տվող ած սկանները կոչվում են տնօրուս ածականնեթ. որի-

նակ՝ շատ մարդիկ, միքանի մարդ, թիւ հաց, սակավ ջուր, բավականին պաշար, վորեվե գիրք, ըոլոր գրքերը և ազն:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 42. Այն անորոշ ածականները, վորոնք հարցականով են գործածվում, նացական ածական են կոչվում որ՝ քանի՝ գիրք, վո՞րքան ժամանակ. ի՞նչպիսի սենյակ, քանի՞նը սենյակը և ազն:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 43. Ցուցակն ղերանունները (տե՛ս սահմանում 28) ղօվելով առարկաի անվան վրա՝ ցուցական ածականների նշանակություն են ստանում. որ՝ այս գիրքը, այդ գիրքը, այն գիրքը (տես կանոն 4):

ՅՈՒՐՅ տվեք ածականները.

1. Յելան, սահեցին հանկարծ
փողոցի ամառվա փոշում—
բլուրավոր բանակներ անահ—
զրահապատ բանակներ ուժի:

Շողացին սվիններ, սրեր,—
յերգեցին կրծքեր հզոր—
գրոշներ ծփացին արնավառ—
գրոշներ՝ կարմիր, բոսոր...
(Կարմիր Արև, «ԱՄԵՆԱՊՈԵՄ»)

2. Բարձրաբերձ սարերն ի վեր սողաց իմն ու փուլեց այնտեղ խոնավ կիրճի մեջ և կծիկ դարձած՝ դիտում եր ծովը. Բարձր յերկնակամարի վրա փալում եր արել, ու լեռները տոթագին շնչում ելին յերկնիքն ի վեր, և ցածրում ալիքները զարնում ելին ամրակուռ քարին... Դլխովին ճերմակ փրփուրի փոխված, ալեզարդ-հուժկու, ճեղքում եր սարը և ծովը թափվում՝ ցասկոտ կականով:

(Կարմիր Արև, «ԲԱԶԵՑԻ ՑԵՐԳԱՐ»)

3. Հազար ու հազար արնոտ լուսերով
ջահերն են վտափում ու դաշտերի մեջ.

բոցավաս նազիթը հուր կաթիլներով
թափում և գետին,
զետինը ներկում զեղին ու կարմիր
և նարնջագույն փալլուն բծերով:
Զահերի շուրջը
մկանուտ, հուժկու բազուկների մեջ
ցցվել են ահա ալ-կարմիր ու սև
դրոշակների յերկախն ձողերը:
(Կարմիր Արև, «ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ»)

ՀԱՅԿՈՒԹԵԱՆ Ա.ՍՅԻՃԱՆՆԵՐ

§ 43. Մեր գասարանն ավելի մեծ դասարան ե, քան
ձեր գասարանը: Այս գասարանը գպրոցում ամենամեծ դա-
սարանն ե: - Ավելի մեծ, ամենամեծ - հատկության աստի-
ճաններ են ցուց տալիս:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 44. Հատկության աստիճանները յերկու
յեն.

ա) Բաղդատական, յերք հատկությունը համեմատվում
ե մի այլ առարկայի հատկության հետ յեվ մեկի մեջ
ավելի կամ պակաս. ե նկատվում, որ՝ ավելի լավ, ավելի
վատ, ավելի մեծ, պակաս խելոք:

բ) Գերադրական, յերք համեմատության մեջ մի ա-
ռարկայի հատկությունը զերազանցում ե այդ առարկայի
հետ հատկությամբ համեմատվող բարոր առարկաների հատ
կությանը. որ՝ ամենալավ (ամենից լավ), ամենավատ
(ամենից վատ) և այլն:

Յերք առարկայի հատկությունը չի համեմատվում և
չի սաստկացվում, ածականը դրական աստիճան ե դրվում:

Յերք առարկայի հատկությունը բարձրացվում կամ
իջեցվում ե առանց համեմատության, հատկության աստի-
ճանը ստանկական ե կոչվում. որ՝ խիստ ցուրտ՝ շափա-
զանց տաք:

ԿԱՆԱՆ 20 ա. Դերադրական աստիճանն արտահայտող ըստ բառերի իրելու բաղադրիչ մասերը (ամեն բառով բարդված) միասին են գրվում, իրենց մի բարդ բառ, որ՝ ամենալավ, ամենամեծ, բայց՝ ամենից լավ, ամենից մեծ:

ԿԱՆԱՆ 20 բ. Յերբ զերադրական աստիճանն արտահայտող ըստ բարդության առաջին բաղադրիչ մասը (ամեն) դրվում և ծայնավորով սկսվող բառի վրա, հակառակ հոդակապի տվորական կանոնի (տես կանոն 9) ա հոդակապ դրվում ե. որ՝ ամենազազիվ, ամենախմաստուն, ամենառուրախ, ամենալընդունակ և այլն:

§ 44. Յես յերեք տեսակի մատիտ ունեմ՝ սև, կարմիր և կապույտ: Ամենից շատ սեվով եմ գրում. կարմրով ու կապույտով նկարում եմ: Այսոր կարմիր մատիտով վարդ նկարեցի, իսկ կապույտ մատիտով՝ մանուշակ:

ՀԱՐՑ. Յերբ են ածականները հոլովվում, յերբ չեն հոլովվում:

Ի՞նչպես են հոլովվում ածականները:

ՍՍՀՄԱՆՈՒՄ 45. Յերբ ածականները դրվում են գոյականի հետ, անփոփիս են մնում (բարի մարդ, բարի մարդու, բարի մարդկանցից). յերբ գոյականը զեղջվում է, չի դրվում, նրա ածականը, գոյականաբար գործածվելով ու համապատասխան հոդ ընդունելով (ս, դ, ն (ը)), հոլովվում ե (բարի, բարու, բարիներից.—կարմիրս, կարմիրս, կարմիրներիցուց):

Ածականների հոլովվումը նման է գոյականների հոլովման:

Դ. Բ Ա Յ

1. ԱՍ.Զ, ԹԻՎ, ՑԵՎ, ԴԵՄՔ

§ 45. 1. Մայրու վերջին անդամ զրկեց ինձ, համբուրեց և ասաց.

— Գնա՞ս բարով...

Հայրս չամբուրեց... Յես գնում ելի մի արդյունաբերական բաղաք, ուր ծգտում եյին ամենքը:

(Կարմիր Արե, «ԴեՊԻ ՊԱՆԴԱԽՈՒԹՅՈՒՆ»)

2. Յես Նկարում եմ, դու կարդում ես, իսկ Միլուշը
խաղում ե: Փոքրիկ Վաչիկը հիմանդ ե. Նա պառկած ե
անկողնում:

Դրկեց, համբարեց, զնաս, զնում եյի... բայեր են:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 46. Բայ կոշվում են այն բառերը, վո-
րոնք ցուց են տալիս, թե այս կամ այն առարկան ի՞նչ ե
անում, ի՞նչ ե լինում, ի՞նչ դրության մեջ ե, ու մենակ կա-
րող են խոսք կազմել:

Բացի բայից, մյուս բառերը մենակ խոսք կազմել չեն
կարող:

ԴՈՒՇՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 38. Արտագրեցե՛ք յեվ ընդ-
գծեցե՛ք բայերը.

Լույսը դեռ նոր եր բացվել, յերբ յես քնից արթնա-
ցա, զգեստներս հագա ու լվացվեցի: Թելը պատրաստ եր:
Նախաճաշեցի, զբքերս վերցրի, քաղերս դեպի դպրոց ուղ-
ղեցի: Աշակերանները խաղում եյին բակում: Սպասում եփ,
վոր զանգը հնչի, վորից հետո դասարան հավաքվելինք,
ուսուցիչը գար, պարապմունքն սկսվեր:

§ 46. 1. Թեկավ վիթխարի ծերունի մի մարդ,
կանգնեց, վրդովված տղերանց միջին,
մատը դեպի ձոր մեկնելով հանդարա՝
հսպես նա պատմեց, զոռ տալով չիրխին...

2. Ես վոր լսեցին, դես ու դեն ցրված
տղերքը ճեպով ձորը ներս մտան
ու մտի տակին, ճամպիցը ծոված,
յերկու մարդու թարմ վունատեղ գտան:

(Կարմիր Արև, «ԱնՈՒՇ»)

ՍԱՀՄԱՆՈՒՄ 47. Բայերը յերկու թիվունեն - յեզակի
յեվ նոզնակի: Եեզակի բայը ցույց ե տալիս մի առարկայի
կատարած զործողությունը կամ դրությունը, նոգնակի բայը՝
մեկից ավելի առարկաների:

§ 47. Յես գրում եմ. դու գրում ես. Նա գրում ե:
Մենք կարդում ենք. դուք կարդում եք. Նրանք կարդում են:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 48. Յես (ինքու), դու (հնքու), նա (ինքու), մենի (ինքներու), դուք (ինքներու), նրանի (իւենք) ըայի արտահայտած դեմքերն են, վորոնցով անող կամ յեղող առարկայի գաղափարն ե արտահայտվում:

Դեմքից անքաժան ե թվի գաղափարը:

Յես—առաջին դեմք կամ խոսող անձը.

Դու—յերկրորդ դեմք կամ խոսակիցը.

Նա—յերրորդ դեմք կամ վոչ խոսողը և վոչ խոսակիցը:

ՄԵՆՔ—առաջին դեմք կամ խոսողը և իր հետ լեղածները:

Դուք—յերկրորդ դեմք կամ խոսակիցը և նրա հետ լեղածները.

Նրանք—յերրորդ դեմք կամ վոչ խոսողները և վոչ խոսակիցները:

2. ԲԱ.ՑԻ ԺԱ.ՄՑ.ՆԱԿ.ՆԵՐԸ.

§ 48. Աշակերտը կարդում ե (այժմ, խոսելու բոպելին):—Աշակերտը կարդում եր, կարգալու յեր, կարդացել եր, կարդացած եր, կարդաց, կարդար, կկարդար, պիտի կարդար (անցյալում, խոսելու բոպելից առաջ):—Աշակերտը կարդալու յե, կարդա, կկարդա, պիտի կարդա (հետատագալում, խոսելու բոպելից հետո):

ՍԱՀՄԱՆՈՒՄ 49. Բայի արտահայտած գաղափարներից մեկն ե նայել ժամանակը, վոր ցույց ե տալիս, թե բայի յեղելությունը կառարվում ե խոսելու բոպելին (կարդում եմ, դրում ես):

Բայը յերեք ժամանակ ունի.

1. Ներկա ժամանակ, վոր ցույց ե տալիս, թե բայի յեղելությունը կառարվում ե խոսելու բոպելին (կարդում եմ, դրում ես):

2. Անցյալ ժամանակ, վոր ցույց ե տալիս, թե բայի յեղելությունը խոսելու բոպելից առաջ ե կատարվել, կամ առաջ եր կատարվում (յես գնացի, գնում եմ):

3. Ապառնի ժամանակը վոր ցոյց և տալիս, թե բայի յեղելությունը խոսելու բովելից հետո յե կատարվելու (գնալու լեմ, գնամ, կգնամ, պիտի գնամ):

Բայերը փոփոխվում են դեմքով, թվով, ժամանակով:

Ցոյց տվեց բայերի ժամանակները հետեւալ հատվածներում.

1. ամպի տակից ջուր և զալիս,
դոշ և տալիս, փրփրում,
հն ժւմ լարն և նստած լալիս
հոնզուր-հոնզուր են սարում:

2. Ուռին
աղջիկ եր ինձ պես,
մնում եր լարին,
ու չեկավ նա տես...
Խեղճը դողալով՝
անհույս կուացավ,
դարդից չուացավ,
ուռինի զարձավ:

3. Յես կվառվեմ, հուր կդառնամ,
յես կհալվեմ, ջուր կդառնամ:

(Կարմիր Արև, «ԱՆՈՒՇ»)

3. ԱՄ. ԵԵՂ. ԱՆՍԱԿՆԵՐԸ

ա. Հրամայական յեղանակ

§ 49. 1. Արամ, առավոտյան շուտ վե՛ր կաց, լվացվե՛ր, նախաճաշդ արա՛, վերցրո՞ւ մեր զամբյուղը և զնա՛ շուկա, ճաշի համար անհրաժեշտ մթերքներ գնի՛ր, տնեւն ըեր. ճանապարհին մի՛ ուշանա, սրա-նրա հետ յերկար մի՛ խոսլ: Հետո Շուշիկի հետ զնացե՛ք դպրոց, դասից յերբեք մի՛ ուշանաք, դասից հետո տնեւն վերադարձեք: Գալիս, լրագրի ալտորվա համարը վերցլե՛ք: Ասածներս մի՛ մոռանաք, ճշտությամբ կատարեցե՛ք:

2. Վոչխարն են սարով
ոռ՛ւռ օռւր, օռւե արի,
Փախիր գիշերով
ու թագուն արի'...

(Կարմիր Արև, «ԱՆՈՒՇ»)

3. Ընկեր բանվորներ, բաց արե՛ք ձեր տէքերը, նայեցե՛ք
ձեր շուրջը, դո՞նե մի հայացք զցեցե՛ք ալս քաղաքի փողոցների
վրա:

(Կարմիր Արև, «ԿԱՊԻՏԱԼԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ»)

4. Զա՞րկ, թմրնեկ, զա՞րկ ուժգին, փշի՛ր, փռի, օեփորի՛ր,
նե՞րս բափվե՞ք դռներից ինչպես զորք մոլեղին
լեկեղեցին—հեռացե՛ք, աղոթողներու
դպրոցները—հեռացե՛ք, աշակերտներ:

(Կարմիր Արև, «ԶԱՌԿ, ԹՄԲՈՒԻԿ»)

Այս հատվածների մեջ բոլոր բայերը նրամայական
յեղանակով են դրված:

ԵԵՂՄՆԱՌԸ բայի արտահայտած գաղափարներից մեկն
ե, վորից յերեվում ե, թե խոսողն ինչ կերպ ե խոսում
յեղելության մասին: Ուրեմն բայի արտահայտած գաղափար-
ներն են՝ թիվ, դեմք, ժամանակ, յեղանակ ու յեղելություն:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 50. Հրամայական յեղանակը գույց ե
տալիս, վոր խոսողը խոսակցին հրամայում ե կամ հոգդո-
րում մի բան անելու կամ չանելու. վերջին տեսակի հրա-
մայականը (մի խոսի կամ մի խոսիք) արգելական նրա-
մայական ե կոչվում: Հրամայականի վրա հաճախ դրվում
ե նայեվ մի մեղմական մակրայք, վոր շպիտի շփոթել մի՛
արգելական մակրայի հետ. որ՝ մի գնա, նըան ասա՝ թող
գա: — Մի մեղմական մակրայը շեշտ չունի:

Հրամայական յեղանակն ունի յեզակի յեվ հոգնակի
թիվ ու միան մի դեմք (2-րդ գեմք կամ խոսակիցը), վո-
րովինետեվ հրամայել կարելի յե միան խոսակցին կամ խո-
սակիցներին:

ԿԱՆՈՆ 21. Հրամայական յեղանակով արտահայտված
բայի վերջին վանկի ժայնավորի վրա շեշտ ե դրվում. որ՝
գնա, ստացիք, հարցընեւ:

ԿԱՆՈՆ 22. Արգելական հրամայականի շեշտը դրվում
ե արգելական մի բարի ծայնավորի վրա. որ՝ մի գնա, մի
ստանա, մի հարցնի:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 39. Հետեւյալ նախադասությունների ըայերը փոխեցե՞ք հրամայական յեղանակի ու զրի առե՞ք. որինակ՝ գնաս, գիրքս բերես — գնա, գիրքս բեր.

ա) Այս նամակը կարդաս: — Գնաս, ինձ համար ջուր բերես: — Մի գնաս, Արամին տեսնես և այս գիրքը նրան տաս:

բ) Այս շնորհ լցնես ու բերանները փակես: — Այդ մասին Արշակին մեկ հարցնես: — Փողն ինքդ ստանաս ու ինձ բերես:

գ) Կուտես ու համը կտեսնես: Կգաս ու կիմանաս: Այս բանը կանես ու կդառնաս: Կդնես այնաեղ, կթողնես ու կգաս: Կփախցնես, կբերես:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 40. Հետեւյալ նախադասություններում հրամայական ըայերը փոխեցե՞ք արգելական հրամայականի ու զրի՝ առեք: Որ՝ նամակն ստացիր և ինձ բեր՝ նամակը մի ստանա և ինձ մի բերի: Սեղանը մոտեցրու պատին: — Հարցը և իմացիր պատճառն ու ինձ ասան: — Նստիր և դասերդ պատրաստիր: Վեր-վեր թոփր ու ձայն տուր: — Կորիր այստեղից: — Փախիր շուտով: Սառիր ցրտից: — Կեր ու կշտացիր: Կարդա ու մարդ դարձիր:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 41. Հետեւյալ նախադասություններում հրամայական ըայերը փոխեցեք արգելական հրամայականի՝ վոչ բառը բայերի վրա գնելով. որ՝ կեր ու կշտացիր, — վոչ կեր, վոչ կշտացիր, կամ՝ վոչ կեր, վոչ ել կշտացիր:

Առ ու գնա: Հասիր, տես, ստացիր ու բեր: Գրիգորին ել ասա, Տիգրանին ել, Հովհաննեսին ել: Հաց ել կեր, գործդ ել արա: Արամ, աթոռը մոտեցրու, վրան բարձրացիր, նկարը պատին կախ տուր:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 42. Գտենք հետեւյալ ըայերի հրամայականը յել արգելականը.

Գնալ, մնալ, կարդալ, գրել, սրել, յերգել, նկարել,

գարմանալ, սասանալ, մեծանալ, հոգարտանալ, կոտրատել,
ջարդուել, փշտել, մոտեցնել, հարցնել, կորցնել, փախցը-
նել, թռչել, թռցնել, սառչել, սացնել, տեսնել, հասնել,
մտնել, լենել, տանել, ուտել, կարդացնել, կոտրվել, հագ-
նըվել, սանրվել, գալ, տալ, լար, պար գալ, թափ տալ,
սիրտ անել, վեր կենալ, ականջ դնել, ծափ տալ:

բ. Յենթադրական յեղանակ

§ 50. 1. Այս շենքի բարձրությունը մոտավորապես
հինգ մետր կլինի. Երկարությունը տասնհինգ մետր կլինի:
Այս շենքի դահլիճը հարյուր հիսուն մարդ կտանի: Մեր
ընթերցարանում մեր բոլոր լրազերը կգտնես:

2. Ձեզ կույտին ու կծաղրեն, կստեն ու կուլածեն,
ձեզ համար մարակներ, գնդակներ ու բանտեր կպատրաս-
տեն:

(Կարմիր Արև, «ԿԱՊԻՏԱԼԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ»)

3. Գլխատության մոալլ ժամին գլուխդ վայր կբերես,
և զանգերը կզողաճշեն, և դաշտունը կփաղփաղի,
ու մկանունք կաղաղակեն և կլինի շքեղ հանդես,
մեծապայծառ տոն ու հանգես կարմիր արլան և մետաղի:

(Կարմիր Արև, «ԳԼՈՒԽԸ»)

Այս հաշվածներում բոլոր քայիրը դրված են յենթա-
դրական յեղանակ:

ՍՍՀՄԱՆՈՒՄ 51. Թենթեղական յեղանակը ցուց ե
տալիս, վոր խոտողը քայի յեղելության մասին յենթադրա-
ը սր ե ար ոսնայտվում, յենթադրում ե, կամ կասկած ե
հայտնում:

ՅԵՆԹԱԴՐԱԿԱՆ յեղանակով դրած բայր միշտ ապառնի
յե և ունի ապառնի ներկա և ապառնի անցյալ: Ապառնի
ներկան ցուց ե տալիս մի յեղելություն, վոր ներկալի
նկատմամբ ապառնի յե. որ՝ նա կդնա: Ապառնի անցյալը
ցուց ե տալիս մի յեղելություն, վոր անցյալի նկատմամբ
ապառնի յե. որ՝ նա կդնար: ՅԵՆԹԱԴՐԱԿԱՆԸ բոլոր դեմ-
քերն ել ունի:

ԿԱՆՈՆ 23. Յենթաղբականի վրա դրվող կ-ն ընդունված եւ բային կպած գրել—կգնա, կասի:

Յենթաղբական յեղանակը, բացի իր բուն նշանակությունից, կարող եւ ցուց տալ՝

1. «Առածական ներկա»—առածների և ասացվածների մեջ. որ՝՝ ձուկը ծովում կմեծանա, —կուշտը քաղցածին մանը կրբդի:

2. Սովորության ներկա յեվ անցյալ. որինակ՝ ամեն որ վեր կկենա ու կլվացվի, —նա լավ կերակուր կեփի:

3. Կրկնության ներկա. որինակ՝ որենը հինդ անգամ կդնա, կդա:

Պ Ա Տ Կ Ե Ր

Յենթ. ապ. ներկա

Յենթ. ապ. անցյալ

Յես կասեմ մենք կասենք յես կասելի մենք կասելինք դու կասես դուք կասեք դու կասելիք դուք կասելիք նա կասի նրանք կասեն նա կասեր նրանք կասելին

ԿԱՆՈՆ 24. Յենթաղբականի բացասական ծեվը կազմելու համար գործ են ածվում վոչ չ. որ՝՝ վոչ կգնամ և վոչ կասեմ, կամ՝ չեմ գնա և չեմ ասի:

գ. Հարկադրական յեղանակ

§ 51. Դուք բոլորդ վաղը դպրոց պետք եւ գաք: Դըպրոցի ճակատը զարդարված սկիոթ եւ լինի: Ամենքս կարգ պետք եւ կանգնենք: Բոլորս պետք եւ մասնակցենք առական թափորին: Վոչ վոք չպետք եւ բացակայի: Վոչ պետք եւ խուեք, վոչ շսրից դուրս գաք, վոչ իրար հրեք: Որինակելի կարգապահություն պետք եւ լինի: Թափորն առավարան ժամը տասին պետք եւ սկավի:

Այս հասվածում բոլոր բայերը դրված են հարկադրական յեղանակով:

ՍՍՀՄԱՆՈՒՄ 52. Հարկադրական յեղանակը ցոյց ե

տալիս, վոր խոսողը յեղելության մասին խոսուս ե իբրև կամ անհրաժեշտության կամ մի անհրաժեշտ բանի մասին, կամ անհրաժեշտ ու ստիպողական ե գոնում, վոր բայի յեղելությունն այս կամ այն կերպ լինի:

Հարկադրական յեղանակով գրված բայը միշտ ապառնի յե և նույնպես ունի ապառնի ներկա և ապառնի անցյալ ձևերը. որ՝ յես պետք ե գնամ. յես պետք ե գնալի. — յես չպետք ե գնամ. յես չպետք ե գնալի: — Յես վոչ պետք ե գնամ և վոչ ել պետք ե տեսնեմ. — յես վոչ պետք ե գնալի և վոչ ել պետք ե տեսնելի: — Ունի բոլոր դեմքերը:

ԿԱՆՈՆ 25. Հարկադրական յեղանակի վրա դրվում ե պիտի և կամ պիտի բառերից մեկն ու մեկը. իսկ յեթե բայը բացասական ե, այդ դեպքում չպիտի և կամ չպիտի. որ՝ չպիտի գնամ, չպետք ե գնամ. կարելի յենակ՝ պիտի չգնամ, պետք ե չգնամ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 43. Կազմեցե՛ք ինքներդ հարկադրական ապառնի ներկայի յեվ հարկադրական ապառնի անցյալի խոնարհման պատկերը, թե դրական յեվ թե բացասական:

Դ. Ըղձական յեղանակ

§ 52. 2. Աշնտ, գնաս Ռննիկի մոտ, ասես՝ գիրքը տա, վոր դասս պատրաստնմ. թե դու չկարողանաս, խնդրեմ՝ Մինասին ասես՝ նա բերի. դե, սիրելիս, չմոռանաս, միտդ լավ պահես: Բան ե՝ թե Մինասին ել շտեսնես, ինձ իմաց անես:

2. Կորչեմ բեզար, դադարգուն,
քար-սարեսար, դադարգուն,
մեռնեմ, պրծենմ ևս որից,
բալքի ոռնեմ դադար, քուն:
... վայ թե հանկարծ իմանա,
յես ազատվեմ ևս ցավից,
տչքը լալով նա մեա:

(Կարմիր Արև, «ԱՆՈՒՆ»)

Այս հասավածում բոլոր բայերը գրված են լղական
յեղանակ:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 53. Ըղական յեղանակը ցույց ե տալիս, վոր ասողը կամ խոսողը ցանկանում ե՝ այս կամ այն յեղելությունը կատարվի, լինի. ըղօճականն իր նշանակութամբ հակառակ ե հրամայական յեղանակին. որ՝ ըղձական—գնաս՝ ջուր բերես, հրամայական՝ գնա, ջուր բեր։

Ըղձականը հաճախ իր հետ կարող ե ունենալ ցանկություն արտահայտող մի բառ, որինակ՝ յերանի, գոնե, ուր ե թե, և ալին։ Ըղձականի վրա հաճախ դրվում ե մի մեզմական մակրալը (լշփոթել մի՝ արգելականի հետ). որինակ՝ մի գնաս, նրան ասես։

Ըղձական յեղանակն ունի ապառնի նշանակություն և յերկու ձե՝ ըղօճական ապառնի ներկա, ըղօճական ապառնի անցրալ (որ.՝ գնամ, գնալի)։ Ունի բոլոր դեմքերը։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. 44. ա) Խնդներդ կազմեցե՛ք ըղօճական սպառնի ներկայի յեվ ըղօճական ապառնի անցրալի լրիվ պատկերը, վորեվե բայ վերցնելով իրերե որինակ. ձեր կազմած պատկերը զրի՝ առեք։

բ) Ցույց տվեք, թե ըղձական, յենթադրական և հարկադրական յեղանակների մեջ ձեվ ակն յեվ իմաստի ի՞նչ տ սրբերություններ կան (որ.՝ տաս ոռւբլի լինի, տաս ոռւբլի կլինի, տաս ոռւբլի պիտի լինի)։

ը) Կազմեցե՛ք վորեվե բայի բացասական ըղօճականի պատկերը՝ չ, վոչ ավելացնելով այդ բայի վրա։

Ըղձականի վեր ձեն ե գործածված հետեւյալ վոտանավորներում։

1. Այս, յես յերանի
կայծակ լինեյի,
վորոտ-ճայթյուռով
մռալլ ամպերից
ծայրեյի ըմբռսա,
զարկեյի ուժգին,
պատեյի խավար
կամարը յերկնի...

(Հովհ. Թում., «ԲԱՆԱՏԱՆ»)

2. Կուղելի՝ հենցեր լմ փողն ահարկու,
թնգացներ սրտեր յուր ձախով հուժկու,
քնածը զարբներ, թուլն արիանար՝
կովելու մինչ մահ՝ սուրբ գործի համար:

(Հովհ. Հովհ., «ԲԱՆԱՍՏ.»)

Ե. Սահմանական յեղանակ յեվ նրա ժամանակները

§ 53. Այսոր արեւը պայծառ ժպտում ե. ամեն ինչ վողողված ե նրա շողերով։ Առավոտյան դեռ շատ վաղ վեր եմ կացել. ահա նախաճաշում եմ, վորից հետո գնալու յեւ դպրոց։ Ժամի չոթը խփեց։ Թաղերս ուղղում եմ դեպի դպրոց։

Այս հատվածում բոլոր բայերը դրված են սահմանական յեղանակ։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 54. Սահմանական յեղանակը ցույց ետ սլիւ, վոր ասողը յեղելության մասին խոսում ե իրքեվ իրական, ճիշտ մի բանի մասին։ Այսպիսով, սահմանական յեղանակը խիստ տարբերվուս ե քոլոր մրտա յեղանակներից, վորոնք կամ յենթաղություն ու կառկած, կամ անհրաժեշտություն, կամ ցանկություն յեվ կամ հրաման են արտահայտում։

§ 54. 1. Յես կարդում եմ, դու զրուս ես, նա նկարում ե։ Մենք կարդում ենք, դուք զրում եք, իսկ նրանք նկարում են։

2. Անլոելի Վեգում ե

պղտոր ջուրը Դերետի,
նրա ափին կանաչում ե
մենակ շիրիթն իգիթի...
Ու հոսում ե գիշեր-ցերեկ
արցունքն անբախտ աղջկա,
բայց իր սիրած տղեն յերեք
չկա՛, չկա՛, ու չկա՛...

(Կարմիր Արե, «ԱՆՈՒՄ»)

Այս հատվածներում բոլոր բայերը դրված են սահմա-

նական յեղանակի ներկա ժամանակ (անկատար կամ բուն ներկա):

ՍԱՀՄԱՆՈՒՄ 55. Անկատար ներկան (կամ բուն ներկան) ցուց ե տալիս մի յեղելություն, վոր տեղի յե ունենում խոսելու ըովելին յեվ դեռ շարունակվում ե: Ունի բոլոր դեմքերը:

Անկատար ներկան, բացի իր բուն նշանակությունից, կարող ե ցուց տալ՝

1. «Մշտակատար ներկա», ամեն ժամանակի համար ընդունելի ճշմարտություններ. որ՝ Յերևանը քաղաք ե... ներկիրը պատվում ե արեի շուրջը:

2. «Առածական ներկա», —խոսք ու կարծիք՝ ամեն ժամանակի համար արժեք ունեցող. որ՝ ճտերն աշնանն են համբում:

3. «Սովորության ներկա», —որ՝ հարսանիքներն աշնանն ու ճմեռն են անում:

4. «Կրկնության ներկա», —որ՝ նա առավոտները լողանում ե:

5. «Պատմական ներկա», —յերբ անցած բանը ներկայով ենք պատմում, վոր կենդանի լինի. որ՝ վերցնում ե իր զորքը, գնում ե կովի դաշտ, ջարդում թշնամուն:

ԿԱՆՈՆ 26. Անկատար ներկայուած ես, ես, ե, ենի, եի, են,—միշտ առանձին են գրվում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 45. Ինքներդ կազմեցե՞ք վորեվե ըայի անկատար ներկայի պատկերը, դրական յեվ քացասական:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 46. Գտե՞ք հետեւյալ բառերի անկատար ներկան.

Խոսել, տանել, նստել, նստեցնել, հարցնել, փախչել, փախցնել, ուտել, գալ, տալ, լալ, ջարդվել, կտրվել, թափ տալ, պար գալ, սիրտ անել, լինել:

§ 55. 1. Յես գնում եյի դպրոց, դու զալիս ելիր դե-

պի տուն. Աշոտը քեզ հետ եր: Մենք գնում եյինք, դուք գալիս եյիք, նրանք յերգում եյին:

2. Նստում եր Հասոն ժայռերի գլխին: Յեվ նվազում եր: Վոշխարները լսելուն պես՝ թողնում եյին ամեն ինչ, անցնում ամեն բան, գալիս, Հասովի շուրջը հավաքվում:

(Կարմիր Արև, «ԼՈՒՐ-ԴԱ-ԼՈՒՐ»)

3. Կեսորվա ժամի մեկն եր: Ճաշի գնացած բանվորներին ճշտապահ շվին նորից գործի. յեր կանչում...

Բանվորները խումբ-խումբ քայլում եյին դեպի գործարանը, մի պահ խոնվում դարպասի առաջ ու, ներս մտնելով, ցրվում ամեն մեկն իր տեղը:

(Կարմիր Արև, «ՄԱՐՏԱԿՈՉ»)

Այս հատվածներում բոլոր բայերը դրված են սահմանական յեղանակի անկատար անցյալ ժամանակի:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 56. Անկատար անցյալը գույց ե տալիս մի յեղելություն, վոր սկսված ե յեղել անցյալում (խոսելու ըոսեյից առաջ) յեվ չի վերջացել: Ունի բոլոր դեմքերը:

ԿԱՆՈՆ 27. Անկատար անցյալում՝ Եյի, Եյիր, Եր, Եյինք, Եյիք, Եյին—միշտ առանձին են գրվում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 47. Խնջներդ կազմեցեց վորեկի բայի անկատար անցյալի խոնարհման պատկերը, դրական յեվ բացասական:

Խոսքեր կազմեցեք, վորոնց մեջ անկատար անցյալը ցույց տա:

1. «Մովորության անցյալ».

2. «Կրկնության անցյալ»:

§ 56. Մեր կոլեկտիվի վորոշման համաձայն, վաղը մենք գնալու յենք եքսկուրսիա: Մեզ հետ լինելու յի մեջ ուսուցիչը: Հետազոտելու յենք կաշվի գործարանը: Ուսուցիչը ցույց ե տալու և բացատրելու յի կաշվի պատրաստելու ձեերը: Մեր եքսկուրսիան շարադրության նյութ ե լինելու:

Այս հատվածում բոլոր բայերը դրված են սահմանական լեզվանակի ապառնի ներկա ժամանակ։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 57. Սահմանական լեզվանակի ապառնի ներկան ցույց ե տալիս մի յեղելություն, վոր խոսելու վայրկյանից հետո յե կատարվելու իրենք իրական մտադրություն, վորոշում կամ համոզում, հակառակ յենթադրականի (տես § 25, վորոշում 45)։

ԿԱՆՈՆ 28. Ապառնի ներկայում՝ յեմ, յես, յե, յենք, յեն՝ առանձին են զրվում։ Յ ավելանալու պատճառն այն ե, վոր նախորդ բառը վերջանում ե ծայնալորով (գնալու յեմ)։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 48. Ինքներդ կազմեցե՞ք վորեկի բայի ապառնի ներկայի խոնարհման պատկերը, դրական յեվ բացասական։

§ 57. Յերեկվա վատ լեզվանակի պատճառով մեր հետաձգած եքսկուրսիան լինելու յեր առավոտյան։ Սասնակցելու յեր մեր ամբողջ կոլեկտիվը Բոլորս մեր հուշաերթերը վերցնելու եյնք մեզ հետ։ Հետազոտելու եյնք կաշվի դորժարանը և ապա շարադրության նյութ եյնք դարձնելու։

Այս հատվածում բոլոր բայերը դրված են սահմանական լեզվանակի ապառնի անցյալ ժամանակ։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 58. Սահմանական ապառնի անցյալը ցույց ե տալիս մի յեղելություն, վոր տեղի յեր ունենալու անցյալում իրենք իրական մտադրություն կամ համոզում, վորս, սակայն, զանազան պատճառներով տեղի չի ունեցել։ Ունի բոլոր դեմքերը։

ԿԱՆՈՆ 29. Ապառնի անցյալում՝ եյի, եյիր, եր, եյինք, եյիք, եյին զրվում են առանձին։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 49. Ինքներդ կազմեցե՞ք անկատ անցյալի խոնարհման պատկերը, դրական յեվ բացասական։

§ 58. 1. Պետրոս, այսոր դասից ուշացել ես. զանգը վաղուց տվել ե. ընկերներդ հավաքվել են դասարան, ուսուցիչը ներս ե մտել, դամն սկսվել ե.

2. Յեվ դարերը, վոր անցել են մեր Նալիբրյան փոշոտ ճամպով. կարծես վոչինչ չեն եացրել գալիքների թափին տենդոտ.— անց են կացել նրանք խոժոռ ու չեն նայել լիտե լերեր. ու բողել են հյուղեր փոշոտ ու սրտամաշ մշուշ ու մեզ, ու բողել են ժամեր անդեմ ու զանգերի լերազը ծեր, ու բողել են թոփչք անթև ու հողագուլն դիմագծեր:

(Կարմիր Արև, «ԳՅՈՒԽՀԻ ՑԵՐԳԸ»)

3. Ամաված ե մեռել, լերկի՞նք ե Փիել,
Յերկի՞րն ե նեղվել, թե ովկիանուն ե տեղահան լեղել:
(Կարմիր Արև, «ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ»)

Այս հատվածներում բոլոր բայերը դրված են սահմանական լեզանակի վաղակատը ներկա:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 59. Վաղակատը ներկա ցույց ե տաւիս մի լեղելութուն, վոր ավելի վաղ ե կատարվել, քան խոսելու բովելին կատարվող մի որիշ յեղելութուն (գուայդ գիրքը նոր ես կարդում, իսկ նա.արդեն կարդացել ե):

ԿԱՆՈՆ 30. Վաղակատը ներկայում եւ, ես, ե, ենք, եմ, են—զրվում են առանձին:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 50. Ինքներդ կազմեցե՞ք վորեվե քայի վաղակատը ներկայի խոնարհման պատկերը, կրական յեվ բացասական:

§ 59. 1. Արևը դեռ չեր ծագել, մեր կոյլեկտիվը յասել եր սարի ստորոտը: Ընկերներից միքանիսն արդեն սարն եյին քարծրացել, աեղ եյին ընտրել:

2. Ծները հալածել, խեղդուտել ելին նրան, անողորմ կերպով բղկտել նրա մորթին, մանուկները քարկոծ ելին արել:

(Կարմիր Արև, «ՓՈՂՈՑՈՒՄ»)

Այս հատվածներում բոլոր բայերը դրված են սահմանական յեղանակի վաղակատար անցյալ:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 60. Վաղակատար անցյալը ցույց ե տալիս մի յեղելություն, վոր խոսելու վայրկյանից առաջ ե կատարվել յեվ ավելի վաղ, քան անցյալում կատարվող վորեվելու ուրիշ յեղելություն (գու կարդում ելիք, իսկ նա արդեն կարդացել եր):

ԿԱՆՈՆ 31. Վաղակատար անցյալում՝ Ելի, Ելիր, Եր, Ելինք, Ելիք, Ելին—առանձին են գրվում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 51. Ինքներդ կազմեցեք վորեվել բայի վաղակատար անցյալի խոնարհման պատկերը, զրական յեվ բացասական:

§ 60. Մեր դպրոցի շենքն ալսոր մաքրված ե, ամեն ինչ կարգի յե ըերված։ Դասարաններում պատերից նկարներ, քարտեզներ ու դիագրամներ են կախ տված։ Դպրոցի մուտքի մոտ ազդ ե կացուած՝ վոտքերը մաքրելու և ապա ներս մտնելու մասին։

Այս հատվածում բոլոր բայերը դրված են սահմանական յեղանակի հարակատար ներկա ժամանակ։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 61. Հարակատար ներկան ցոյց ե տալիս մի յեղելություն, վոր ավելի վաղ ե կատարվել, քան ներկայում կատարվող մի ուրիշ յեղելություն։ բացի այդ, յեղելությունը հարատեվում ե մինչեւ խոսելու վայրկյանը (գու նոր ես նստում, իսկ նա արդեն նստած ե. — գու նոր ես քնում, իսկ նա արդեն քնած ե):

ԿԱՆՈՆ 32. Հարակատարի ած վերջավորությունը զրվում ե ծով (գրած, գրված, ջարդած ջարդված):

ԿԱՆՈՆ 33. Հարակատար ներկայում՝ Եմ, Ես, Ենք, Եմ, Ենք—առանձին են գրվում։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 52. Ինքներդ կազմեցեք վորեվել բայի հարակատար ներկայի խոնարհման պատկերը, զրական յեվ բացասական։

§ 61. Հըապարակի մեջտեղը շինված եր մի բարձր ամբիոն՝ ճառախոսների համար։ Ահագին բազմություն եր հավաքված։ Շենքերի ճակատները զարդարված ելին կարմիր գրոշակներով, հեղափոխական գործիչների նկարներով, ծաղիկներով ու կանաչներով։ Մենք կանգնած ելինք ամբիոնի մոտ։

Այս հատվածում բոլոր բայերը դրված են սահմանական յեղանակի նարակատար անցյալ ժամանակ։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 62. Հարակատար անցյալը ցույց ետալիս մի յեղելություն, վոր անցյալում մի ուրիշ յեղելությունից ավելի վաղ ե կատարված, բացի այդ, հարատեվում ե մինչեւ անցյալի մի ուրիշ յեղելություն (դու յերեկ քնում ելիք, իսկ նա արդեն քնած եր)։

ԿԱՆՈՆ 34. Հարակատար անցյալում՝ Եյխ, Ելիր, Եր, Եյինք, Եյիմ, Եյին՝ առանձին են գրվում։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 53. Ինքներդ կազմեցեք վորեվե քայի հարակատար անցյալի խոնարհման պատկերը։

§ 62. 1. Դպրոցի դահլիճում տեղի ունեցավ աշխարհագործություն ժողովը։ Նախագահը կարդաց որակաբուր։ Մի քանի լրացումներ յեղան։ Յուրաքանչյուր հարց առանձին-առանձին քննության առարկա դարձավ։ Բոլոր վորոշումները քարտուղարն արծանազրեց։

2. Բակի լայն դռները բացվեցին, կառքն ու ձին անհետացան, ներս մոավ և ինքը տան տերը, դռները փակվեցին։

(Կարմիր Արև, «ՓՈՂՈՑՈՒՄ»)

3. Շոգենավը կես ժամի չափ կանգ առավ Հըգուընի առջև։ Շոգեշարժ նավակներով յեկան ինչ-վոր պաշտոնյաներ, կատարեցին ինչ-վոր ձևականություններ։ Այդ միջնոցին նայեցի դեպի ովկիանոս և զարմացա։

(Կարմիր Արև, «ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ»)

Այս հատվածներում բոլոր բայերը դրված են սահմանական յեղանակի անցյալ կատարյալ։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 63. Անցյալ կատարյալը ցույց ե տալիս
մի յեղելություն, վոր խոսելու վայրկյանից պարզապես
առաջ ե կատարվել:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 54. Կազմեցե՞ք վորեվե
բայի անցյալ կատարյալի խոնարհման պատկերը՝ դրական
յեվ քացասական:

ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐԺՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

(Ընդհանուր պատկեր)

ա. ուտել. բ. ուտելիս (ուտելու, կերտծ) լինել

I. ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ՑԵՂԱՆԱԿ

1. Անկատար ներկա

ուտում եմ	ուտելիս եմ լինում
-----------	-------------------

ուտում ես	ուտելիս ես լինում
-----------	-------------------

ուտում ե	ուտելիս ե լինում
----------	------------------

ուտում ենք	ուտելիս ենք լինում
------------	--------------------

ուտում եք	ուտելիս եք լինում
-----------	-------------------

ուտում են	ուտելիս են լինում
-----------	-------------------

չեմ ուտում	ուտելիս չեմ լինում
------------	--------------------

չես ուտում	ուտելիս չես լինում
------------	--------------------

չի ուտում	ուտելիս չի լինում
-----------	-------------------

չենք ուտում	ուտելիս չենք լինում
-------------	---------------------

չեք ուտում	ուտելիս չեք լինում
------------	--------------------

չեն ուտում	ուտելիս չեն լինում
------------	--------------------

2. Անկատար անցյալ

ուտում ելի	ուտելիս ելի լինում
------------	--------------------

ուտում ելիր	ուտելիս ելիր լինում
-------------	---------------------

ուտում եր	ուտելիս եր լինում
-----------	-------------------

ուտում ելինք	ուտելիս ելինք լինում
--------------	----------------------

ուտում ելիք	ուտելիս ելիք լինում
-------------	---------------------

ուտում ելին	ուտելիս ելին լինում
-------------	---------------------

չելի ուտում ուտելիս չելի լինում
 չելիք ուտում ուտելիս չելիք լինում
 չեր ուտում ուտելիս չեր լինում
 չելինք ուտում ուտելիս չելինք լինում
 չելիք ուտում ուտելիս չելիք լինում
 չելին ուտում ուտելիս չելին լինում

3. Ապառնի ներկա

ուտելու յեմ	ուտելիս եմ լինելու
ուտելու յես	ուտելիս ես լինելու
ուտելու յե	ուտելիս ե լինելու
ուտելու յենք	ուտելիս ենք լինելու
ուտելու յեք	ուտելիս եք լինելու
ուտելու յեն	ուտելիս են լինելու

չեմ ուտելու	ուտելիս չեմ լինելու
չես ուտելու	ուտելիս չես լինելու
չի ուտելու	ուտելիս չի լինելու
չենք ուտելու	ուտելիս չենք լինելու
չեք ուտելու	ուտելիս չեք լինելու
չեն ուտելու	ուտելիս չեն լինելու

4. Ապառնի անցյալ

ուտելու ելի	ուտելիս ելի լինելու
ուտելու ելիք	ուտելիս ելիք լինելու
ուտելու յեր	ուտելիս յեր լինելու
ուտելու ելինք	ուտելիս ելինք լինելու
ուտելու ելիք	ուտելիս ելիք լինելու
ուտելու ելին	ուտելիս ելին լինելու

չելի ուտելու	ուտելիս չելի լինելու
չելիք ուտելու	ուտելիս չելիք լինելու
չեր ուտելու	ուտելիս չեր լինելու
չելինք ուտելու	ուտելիս չելինք լինելու

**չելիք ուտելու ուտելիս չելիք լինելու
չելին ուտելու ուտելիս չելին լինելու**

5. Վաղակատար ներկա

կերել եմ	ուտելիս եմ յեղել
կերել ես	ուտելիս ես եղել
կերել ե	ուտելիս ե յեղել
կերել ենք	ուտելիս ենք յեղել
կերել եք	ուտելիս եք յեղել
կերել են	ուտելիս են յեղել

չեմ կերել	ուտելիս չեմ յեղել
չես կերել	ուտելիս չես յեղել
չի կերել	ուտելիս չի յեղել
չենք կերել	ուտելիս չենք յեղել
չեք կերել	ուտելիս չեք յեղել
չեն կերել	ուտելիս չեն յեղել

6. Վաղակատար անցյալ

կերել ելի	ուտելիս ելի յեղել
կերել ելիք	ուտելիս ելիք յեղել
կերել եր	ուտելիս եր յեղել
կերել ելինք	ուտելիս ելինք յեղել
կերել ելիք	ուտելիս ելիք յեղել
կերել ելին	ուտելիս ելին յեղել

չելի կերել	ուտելիս չելի յեղել
չելիք կերել	ուտելիս չելիք յեղել
չեր կերել	ուտելիս չեր յեղել
չելինք կերել	ուտելիս չելինք յեղել
չելիք կերել	ուտելիս չելիք յեղել
չելին կերել	ուտելիս չելին յեղել

7. Հարտկատար ներկա

կերած եմ	—
կերած ես	—
կերած ե	—
կերած ենք	—
կերած եք	—
կերած են	—

չեմ կերած	—
(կամ կերած չեմ)	—
չես կերած	—
չի կերած	—
չենք կերած	—
չեք կերած	—
չեն կերած	—

8 Հարտկատար անցյալ

կերած ելի	—
կերած ելիր	—
կերած եր	—
կերած ելինք	—
կերած ելիք	—
կերած ելին	—

չելի կերած	—
(կամ կերած չելի)	—
չելիր կերած	—
չեր կերած	—
չելինք կերած	—
չելիք կերած	—
չելին կերած	—

9. Անցյալ կատարյալ

կերա	ուտելիս յեղա
կերար	ուտելիս յեղար
կերավ	ուտելիս յեղավ
կերանք	ուտելիս յեղան
կերաք	ուտելիս յեղաք
կերան	ուտելիս յեղան

չկերա	ուտելիս չեղա
չկերար	ուտելիս չեղար
չկերավ	ուտելիս չեղավ
չկերանք	ուտելիս չեղանք
չկերաք	ուտելիս չեղաք
չկերան	ուտելիս չեղան

II. ԸՆԴՀԱԿԱՆ ՑԵՂԱՆԱԿ

1. Ապառնի ներկա

ուտեմ	ուտելիս լինեմ
ուտես	ուտելիս լինես
ուտի (ե)	ուտելիս լինի
ուտենք	ուտելիս լինենք
ուտեք	ուտելիս լինեք
ուտեն	ուտելիս լինեն

չուտեմ	ուտելիս չլինեմ
չուտես	ուտելիս չլինես
չուտի	ուտելիս չլինի
չուտենք	ուտելիս չլինենք
չուտեք	ուտելիս չլինեք
չուտեն	ուտելիս չլինեն

2. Ապառնիւ անցյալ

ուտելի	ուտելիս լինելի
ուտելիր	ուտելիս լինելիր
ուտելը	ուտելիս լիներ
ուտելինք	ուտելիս լինելինք
ուտելիք	ուտելիս լինելիք
ուտելին	ուտելիս լինելին

չուտելի	ուտելիս չլինելի
չուտելիր	ուտելիս չլինելիր
չուտելը	ուտելիս չլիներ
չուտելինք	ուտելիս չլինելինք
չուտելիք	ուտելիս չլինելիք
չուտելին	ուտելիս չլինելին

III. ՑԵՆԹԱԴՐԱԿԱՆ ՑԵՂԱՆԱԿ

1. Ապառնիւ ներկա

կուտեմ	ուտելիս կլինեմ
կուտես	ուտելիս կլինես
կուտի (ե)	ուտելիս կլինի
կուտենք	ուտելիս կլինենք
կուտեք	ուտելիս կլինեք
կուտեն	ուտելիս կլինեն

չեմ ուտի(լ)	ուտելիս չեմ լինի(լ)
չես ուտի	ուտելիս չես լինի
չի ուտի	ուտելիս չի լինի
չենք ուտի	ուտելիս չենք լինի
չեք ուտի	ուտելիս չեք լինի
չեն ուտի	ուտելիս չեն լինի

2. Ապառնի անցյալ

կուտելի	ուտելիս կլինելի
կուտելիր	ուտելիս կլինելիր
կուտեր	ուտելիս կլիներ
կուտելինք	ուտելիս կլինելինք
կուտելիք	ուտելիս կլինելիք
կուտելին	ուտելիս կլինելին

չելի ուտի(լ)	ուտելիս չելի լինի(լ)
չելիր ուտի	ուտելիս չելիր լինի
չեր ուտի	ուտելիս չեր լինի
չելինք ուտի	ուտելիս չելինք լինի
չելիք ուտի	ուտելիս չելիք լինի
չելին ուտի	ուտելիս չելին լինի

IV. ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿ

1. Ապառնի ներկա

պետք ե	ուտեմ	ուտելիս	պետք ե	լինեմ
պետք ե	ուտես	ուտելիս	պետք ե	լինես
պետք ե	ուտի(ե)	ուտելիս	պետք ե	լինի
պետք ե	ուտենք	ուտելիս	պետք ե	լինենք
պետք ե	ուտեք	ուտելիս	պետք ե	լինեք
պետք ե	ուտեն	ուտելիս	պետք ե	լինեն

չպետք ե	ուտեմ	չպետք ե	լինեմ
(պետք ե չուտեմ)	(չպետք ե ուտելիս	լինեմ)	
չպետք ե	ուտես	չպետք ե	լինես
չպետք ե	ուտի(ե)	չպետք ե	լինի
չպետք ե	ուտենք	չպետք ե	լինենք
չպետք ե	ուտեք	չպետք ե	լինեք
չպետք ե	ուտեն	չպետք ե	լինեն

2. Ապառնի անցյալ

պետք ե ուտելի	ուտելիս պետք ե լինելի
պետք ե ուտելիր	ուտելիս պետք ե լինելիր
պետք ե ուտեր	ուտելիս պետք ե լիներ
պետք ե ուտելինք	ուտելիս պետք ե լինելինք
պետք ե ուտելիք	ուտելիս պետք ե լինելիք
պետք ե ուտելին	ուտելիս պետք ե լինելին

չպետք ե ուտելի	ուտելիս չպետք ե լինելի
(պետք ե չուտելի	(չպետք ե ուտելիս լինելի)
չպետք ե ուտելիր	ուտելիս չպետք ե լինելիր
չպետք ե ուտեր	ուտելիս չպետք ե լիներ
չպետք ե ուտելինք	ուտելիս չպետք ե լինելինք
չպետք ե ուտելիք	ուտելիս չպետք ե լինելիք
չպետք ե ուտելին	ուտելիս չպետք ե լինելին

V. ՀՐԱՄԱՑԱԿԱՆ ՑԵՂԱՆԱԿ

կեր ուտելիս լեզիր կերեք ուտելիս լեզէք
մի ուտի ուտելիս մի լինի մի ուտեք ուտելիս մի լինիք
Ուտելիս լինել բայի պես խոնարհեցեք
Ուտելու լինել և կերած լիներ:
գնալու լինել և գնացած լինել:

ԿՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 55. Արտազրեցե՛ք՝ դրական քայերը բացասական դարձնելով թվ, ընդհակառակը, բացասական քայերը՝ դրական:

Որ՝ հարցրու Տիգրանին, նա քեզ կասի այդ մասին։
Մի հարցնի Տիգրանին, նա քեզ չի ասի այդ մասին։

Ստացիր այդ գրությունը և Արշակին տար։—Միսաք,
գնաս՝ ջուր բերես։—Արամը յեկել ե, արդյոք։—Նրան ենք
սպասում։—Յեկել ե, տեսել ու գնացել։—Թե տեսել ե և
թե հետը խոսել։—Վոչ կարդացել ե, վոչ ել միաքը հաս-
կացել։—Յես այդ բանը նոր եմ իմանում։—Գրիգորը գլուղ

կղնար, յեթե կառք լիներ: — Յերանի գնայի և նըան տես-
նելի: — Հերթը քոնն ե, դու պիտի գնաս: — Վոչ Շուշիկն ե
յնկել, վոչ ել Վարսիկը: — Մենք հաճախ տեսնում ելինք
նրանց: — Դուռդը քաղաքից հեռու յեւ: — Նա կարոտ չի ոգ-
նության: — Ենէ և այս բանը տես: — Յեթե գրադարան գնաս,
արդ գիրքը կստանաս: — Լավ կանես, յեթե գնաս: — Մի
փախցնի, արդ իմն ե: — Մի հարցնի, պատասխանը չես
ստանա: — Այդ տղան հինգ տարեկան կլինի: — Մեր գնացած
ձանապարհը տաս կիլոմետր կլիներ:

Ցույց տվեց բայերը՝ խոսքերը լրացնելով.

Ոխտն ազրուրից ջուր ե տռել,
կույս սափորով, լուռ ու մունջ,
ոխտը ծաղկից ծաղկե քաղել,
կապել սիրո ծաղկեփունջ.
Ջուրն ու ծաղկունք աստղունք դրել,
խնդիրք արել աստղերին,
փափազ սրաով խնդիրք արել՝
բարի ժպիտն իր սերին...:

(Հովհ. Թումանյան, «ԱնՌիՇ»)

ՀԱՐՑ. — Ի՞նչն ե պակասում խոսքերի մեջ:

Ի՞նչ ժամանակ են զբած բայերը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 56. Արտագրեցե՛ք հետեւ-
յալ հատվածը. ներկա ժամանակը փոխելով անցյալ կա-
տարյալի.

Որ.՝ Արամը գնում ե տուն, տեսնում ե մորը: — Արամը
գնաց տուն, տեսավ մորը:

Լուսը բացվում ե: Փոքրիկ Սուրիկը զարթնում ե
քնից, լվացվում ե, նախաճաշ անելուց հետո, դպրոց ե
շտապում: Ճանապարհին պատահում ե իր ընկերոջը՝ չա-
րաճնի Լեիկին. յերկուսը միասին, կատակներ անելով,
գնում են դպրոց:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 57. Արտագրեցե՛ք հետեւ-
յալ հատվածը. բայերի առաջին դեմքը յերրորդ դեմքի
փոխելով.

Որ.՝ յես վեր կացա և գնացի. — նա վեր կացավ ու դնաց:

Յես դեռ շատ փոքր ելի, յերբ առաջին անգամ ավտոմոբիլ ու յերկաթուղի տեսա: Հիշում եմ, թե վերը անզարմացա. չելի կարողանում հասկանալ նրանց շարժվելու պատճառը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 58. Արտազրեցե՞ք հետեւյալ հատվածը, ըղձական յեղանակը հրամայականի փոխելով.

Որ.՝ այս գիրքը տանես ու տաս նրան. — այս գիրքը տար և տուր նրան:

Սուրբիկ, առավոտը շուտ վեր կենաս ու շուկա գնաս, ճաշի մթերքն ինքդ առնես, տուն բերես. ճանապարհին չուշանաս, սրանրա հետ չխոսես, շուտ տուն գաս, մթերքները մարդիկիդ հասցնես:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 59. Պատմեցեք անցյալում տեղի ունեցած վորեե գեղք ներկա ժամանակով. ձեր պատմածը գրի առեք:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 60. Պատմեցեք ձեր կենսագրությունը, շատ համառոտ և վաղակատար ներկայով (որ.՝ յես ծնվել եմ...): Ձեր պատմածը գրի առեք:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 61. Պատմեցեք անցյալում հաճախ կրկնվող մի բան (որ.՝ յես ամեն որ զնում ելի լողանալու): — Ի՞նչ ժամանակով եք պատմում: — Նույնը պատմեցեք անկատար ներկայով:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 62. Նկարագրեցեք մեր դպրոցը, ձեր տունը, գլուղը, քաղաքը, ձին.... Առարկաների նկարագրության մեջ բաւերն ի՞նչ ժամանակ եք զնում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 63. Ձեր գլուղում ի՞նչ առածներ եք լսել, ասացեք: Ի՞նչ ժամանակներ են գործածվում այդ առածներում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 64. Ձեր գլուղում ի՞նչ սովորություններ կան, պատմեցեք. պատմածը գրի առեք: —

Ի՞նչ ժամանակով եք պատմում ձեր գլուղի սովորությունները:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 65. Ի՞նչ կուզելիք դուք դասնալ, ասացեք: — Ի՞նչ ժամանակով եք հայտնում ձեր ցանկությունները և ի՞նչ լեղանակով:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 66. Առողջապահական միքանի կանոններ շարադրեցեք: — Բայերն ի՞նչ լեղանակ և ի՞նչ ժամանակ եք դնում.

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 67. Թվաբանական, յերկրաչափական... միքանի որենքներ ասացեք: — Բայերը ի՞նչ լեղանակ և ի՞նչ ժամանակ եք դնում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 68. Բնութագրեցեք ձեր կարդացած պատմվածքների հերոսներից մեկին: — Բնութագրության մեջ բայերն ի՞նչ ժամանակ եք դնում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 69. Խոնարհեցեք՝ գնալիս լինել, գնալու լինել, գնացած լինել:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 70. Գտեք ստորև հիշատակված բայերի լեղանակներն ու ժամանակները:

Յերեք շաբաթ կյինի, վոր նա հիվանդ պառկած եւ: — Ասա նրան, վոր յես գնում եմ տուն: — Գաս ինձ մոտ՝ խոսենք: — Կառք պիտի լինի, վոր գնամ: — Մենք միասին գնում ելինք, Գուրգենին հանդիպեցինք: — Դու գրում ես, իսկ յես արդեն գրել եմ: — Դու ուտում ելիր, իսկ յես արդեն կերել ելի: — Մալրը քնում ե, իսկ յերեխան արդեն քնած ե: — Դու հագնվում ելիր, իսկ յես հագնված ելի: — Մի կառք լիներ, այնտեղ գնալի: — Սահակը գնացած պետք ե լինի: — Յերը դու դախս ես ինձ մոտ, յես գնացած եմ լինում: — Յերը ալստեղ եմ համնում, դու միշտ ալստեղով անցնելիս ես լինում: Յեթե գնալու լինելի, կառք կկանչելի:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 71. Լրացրեք հետեւալ բայերը՝ ստորև ցուց տված ձեռվ.

1. Անկատար 2. Վաղակի 3. Անցյալ 4. Հրամ 5. Արգել.

ներկա	ներկա	կատ.	հրամ.
Գնում եմ	գնացել եմ	գնացի	գնա
Ուտում եմ	կերել եմ	կերա	մի ուտի
Տեսնում եմ	տեսել եմ	տեսա	մի տեսնի
Հասնում եմ	»	»	»
Մտնում եմ	»	»	»
Խմանում եմ	»	»	»
Խմացնում եմ	»	»	»
Թռչում եմ	»	»	»
Փախչում եմ	»	»	»
Կորչում եմ	»	»	»
Գալիս եմ	»	»	»
Տալիս եմ	»	»	»
Փախցնում եմ	»	»	»
Կորցնում եմ	»	»	»
Կարդացնում եմ	»	»	»
Կարդալ եմ տալիս	»	»	»
Գրել եմ տալիս	»	»	»
Սիրտ եմ անում	»	»	»
Գնալիս եմ լինում	»	»	»
Գնալու լիմ լինում	»	»	»
Գնացած եմ լինում	»	»	»
Առնում եմ	»	»	»
Զեմ ուտում	»	»	»
Զեմ մտնում	»	»	»
Զեմ փախչում	»	»	»
Սիրա չեմ անում	»	»	»
Ճաշած չեմ լինում	»	»	»

§ 63. ա) 1. Այն աշակերտը, վոր կարդում եր, լեկավ:

2. Կարդացող աշակերտը լեկավ:

բ) 1. Այն նամակը, վոր գրեցիր, տուր:

2. Քո զրած նամակը տներ:

- Դ) 1. Այն գիրքը, վոր պիտի կարդաս, կրերեմ:
2. Քո կարդալու գիրքը կրերեմ:

Կարդացող, զրած, կարդալու — ղերբայներ են:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 64. Դերբայ կոչվում են բարի այն ձեռները, վորոնք ղերմը չունեն:

Դերբայները հետեւյալ վերջավորություններն ունեն.

ա) ալ, ել — կարդալ, գրել — ալս գերբայը կոչվում ե անօրոց գերբայ, վոր բայի գործողության անունն ե ցուց տալիս, գործ ե ածվում իբրև բայանուն (գրել, գրելու, գրելուց, գրելով) և գերմք ու թիվ չունի:

բ) ում, իս — կարդում, կարդալիս — անկատար դերբայ, վոր ցուց ե տալիս ախպիսի յեղելություն, վոր շարունակվում ե, դեռ չի վերջացել ու վոր կարող ե գործածվել իբրև բայական մակրայ (յես նրան կարդալիս (կարդալու ժամանակ) տեսա), և վորից կազմվում են անկատար ներկան և անկատար անցյալը (գրում եմ, գրում եցի):

գ) ու, ի՛ — գրելու, գրելից — ապառնի դերբայ, վոր ցուց ե տալիս հետո կատարվելիք յեղելություն. — ու վերջավորությամբ ապառնի ղերբայից կազմված են սահմանական յեղանակի ապառնի ներկան և ապառնի անցլալը (գրելու յեմ, գրելու ելի). կարող ե գործածվել իբրև բայածական (գրելու թուղթ), իսկ իթ վերջավորությամբ ապառնի դերբայը գործ ե ածվում կամ իբրև գոյական (յես գրելիք ունեմ — ինչ ունեմ) և կամ իբրև բայածական (իմ գրելիք նամակը):

դ) ած, ել — գրած, գրել, կարդացած, կարդացել. — ած վերջավորությամբ ղերբայը կոչվում ե հարակատար անցյալ դերբայ. նրանով կազմվում են հարակատար ներկան և հարակատար անցյալը (կարդացած եմ, կարդացած ելի). կարող ե գործածվել իբրև ածական (կարդացած գիրք). Ել վերջավորությամբ ղերբայը կոչվում ե վաղակատար

դերբայ. նրանով կազմվում են վաղակատար ներկան և վաղակատար անցյալը:

Ե) ող—գրող, կարդացող—յենթկայական դերբայ, վոր ցույց ե տալիս անողի կամ լեզողի գաղափար և կարող ե գործ ածվել իբրև քայածական (կարդացող աշակերտ):

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 72. Բացատրեցե՛ք աև, ուս, և միջածանցների նշանակությունը հետեվյալ անորոշ դերբայների (կամ նրանցից կազմվող դիմավոր բայերի) մեջ:

կոտրել	կոտրատել	նստել	նստոտել
կտրել	կտրատել	պառկել	պառկոտել
ջարդել	ջարդոտել	փշրել	փշրտել
ծակել	ծակոտել	պատռել	պատռոտել:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 65. Աև, ուս, և միջածանց ունեցող դերբայները յեվ բայերը բազմապատկանան են կոչվում յեվ ցույց եւ տալիս գործողության կամ իերքեմն նայեվ գործող անձերի բաշմապատկություն (ցարդոտել=միթանի տեղից ջարդել. նստոտել=մեկից ավելի նստողներ):

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 73. Բացատրեցե՛ք ացն, եցն, ցն միջածանցների նշանակությունը հետեվյալում:

կարդալ	կարդացնել	մոտենալ	մոտեցնել
խաղալ	խաղացնել	կորչել	կորցնել
նստել	նստեցնել	փախչել	փախցնել:
Վերո՛իշյալ	ծեփով ածանցեցե՛ք	հետեվյալները.	

Խոսել, խմանալ, սառել, հասնել, պրծնել, դառնալ, լալ, ուտել:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 66. Ացն, եցն, ցն միջածանցներով դերբայները յեվ բայերը պատճառական են կոչվում, վորովհետեվ ցույց են տալիս, վոր մի առարկա պատճառ ե լատոնում, վոր մի ուղիշն աւս կամ այն գործողությունը կատարի. որ՝ Հայկը նստեցրեց Աշոտին=Հայկը պատճառ դարձավ, վոր Աշոտը նստի:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 74. Բացստրեցե՞ք վ միջա-
ժամկի նշանակությունը.

կտրել — կտրվել հեռանալ — հեռացվել
սպանել — սպանվել ներկալանալ — ներկալացվել
տանել — տարվել վերանալ — վերացվել
գողանալ — գողացվել լուրացնել — լուրացվել:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 67. Վ միջածանց ունեցող դերբայները
յեկ բաւերը կրավորական են կոչվուա, վորովհետեւ ցուց
են տալիս այնպիսի գործողություն, վոր նախադասության
մեջ անող կամ յեղող առարկան (յենթական) մի որիշից
կըսամ ե իր վրա:

Դերբայները կազմությամբ յերկու տեսակ են լինում:
1. ուսրգ. 2. ածանցական.

Պարզ կոչվում են այն դերբայները, վորոնց ալ, ել
վերջավորություններն ավելանում են բայի հիմքի վրա,
վոր կարող ե լինել մի արմատ, մի պարզ, բարդ կամ ա-
ծանցական բառ. որինակ՝ կարդալ (կարդ արմատ), յերգել
(յերգ պարզ բառ), նկարազարդել (նկարազարդ բարդ բառ),
շնորհավորել (շնորհավոր ածանցավոր բառ):

Ածանցական կոչվում են այն դերբայները, վորոնց
հիմքի և լծորդի մեջ վորեւ միջածանց ե մտնում. այդ մի-
ջածանցները հետեւալաներն են, վորով և դերբայներն ու բա-
յերն են կոչվում.

1. *Սոսկածանց դերբայներ* (բայեր) — ան, են, ն, չ,
սոսկածանց միջածանցներով. որինակ՝ ուրախ-ան-ալ, մոտ-
են-ալ, տես-ն-ել, փախ-շ-ել:

2. *Բաշմապատկական* — աս, ոս, ս, բազմապատկական
միջածանցներով:

3. *Պատճառական* — ացն, եցն, ցն, պատճառական մի-
ջածանցներով:

4. *Կրավորական* — վ կրավորական միջածանցով:

Ե. ՄԱԿՐԱՅ

§ 64. Բանվորներն արագ գործի կպան, բրիչներն ուժգին. շեշտակի մխվում ելին յերկրի կուրծքը: — «Հիմա կդորենք», — խրոխտ հնչեց մեկի շատ ուժեղ ձայնը:

Ուժգին, շեշտակի, հիմա, խրոխտ, շատ բառերը մակրայներ են:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 68. Մակրայ կոչվում են այն ածական բառերը, վորոնց արտահայտած գաղափարներն անկախ զուրծյուն չունեն, կամ իրենց անկախ գործություն ունեցող չեն մտածվում, այլ կախված վորեվե որիշ գաղափարից, որ՝ խրոխ հնչեց կապակցության մեջ խրոխ բառի արտահայտած գաղափարը մտածվում է հնչեց բառի արտահայտած գաղափարի հետ կապված: Մակրայները բայի, կամ ածականի վրա դրվելով, ցույց են տալիս հատկանիշի հատկանիշ, կամ բայի գործողության զանազան պարագաները, այսինքն, թե բայի գործողությունը վնասեղ ե կատարվում (տեղի պարագա—տմենուրեք լեղել եմ), չերը ե կատարվում (ժամանակի պարագա—հիմա կդա), ինչպես կամ ինչ կերպ ե կատարվում (ծեզի կամ վորակի պայտագա—հաջարաց կովեց), ինչ չափով, վնասան, քանի անգամ ե կատարվում (քանակի պարագա—կրկնակի ու յեռակի մեծացակ), ինչու համար, ինչ նպատակով ե կատարվում (նպատակի պարագա), ինչու, ինչ պատճառով ե կատարվում (պատճառի պարագա):

Ածականները, բայի վրա դրվելով, մակրայ են դառնում յեվ վորեվե պարագաս յեն ցույց տալիս: Ածականն ածականի վրա դրվելով՝ նույնակես մակրայ ե դառնում, հատկության վորեվե աստիճան ցույց տալով (տես վորոշում 44):

Այսպիսով ածականները կիրառությամբ կարելի յետք խմբի բաժանել.

1. Մականուններ, վորոնք դրվում են անունների վրա—
լավ մարդ, մեծ տուն.

2. Մակրայներ, վորոնք դրվում են բայի վրա—լավ
խոսեց:

3. Մակածականներ, վորոնք դրվում են ածականների
վրա—լավ գրած նամակ.—շատ լավ գրած նամակ:

Մակածականը կարող ե հատկության աստիճան ցուց
տալ (§ 43, 44, վորոշում 44, 45, կանոն 20 ա. բ.):

Հայերենում բուն մակրայներ շատ քիչ կան. պակասը
լրացվում ե ածականներով կամ տեղի, ժամանակի անուն-
ներով և չափ ու քանակ, նպատակ ու պատճառ արտա-
հայտող բառերով: Բար, պես, որեն, ակի վերջացող բառե-
րը գործ են ածվում և իրեւ մակրացներ (բայի հետ), և
իրեւ ածականներ (յեթե գոյականի վրա յեն դրվում) (շեշ-
տակի խփեց—մակրայ. շեշտակի հարված—ածական):

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 75. Արտազրեցե՞ք յեվ
ընդգծեցե՞ք մակրայները.**

1. Արդեն յերեկո յե. արկի հրավառ ճառագալթներն
առատ սփովել են լայնորեն առարածված դաշտավայրի վրա:
Հըեղեն դունդն արագ գեպի իր մուտքն ե դիմում: Յեր-
կընքի վրա աստ և անդ յերեւում են ամպի շատ փոքրիկ
կտորներ՝ վերջալուսի շողերով առատորեն վողողված ու
կարմիր ներկված:

2. Հողմերն են վոստի մեր գլխին ճախրում,
ծանր ճնշում են ուժեր դժնդակ.

վոստիների գեմ պալքար ենք մղում,
մեր դիմաց գեռ կա մի անհայտ վիճակ:

Մակալն մենք խիզախ, բարձր կրոնենք
մեծ բանվոր դասի դրոշը կարմիր,

դրոշը կույի համայն մարդկության
վսեմ մի կյանքի և ազատության:

(Կարմիր Արև, «ՎԱՐՇԱՎՅԱՆ ՅԵՐԳ»)

Զ. ԿԱՊ

ա. 'ՆՅԱՍ.ԴՐՈՒԹՎՈՒՆՆԵՐ ՈՒ ՀԵՅԱԴՐՈՒԹՎՈՒՆՆԵՐ

§ 65. Գնացքը Յերեանից մեկնեց դեպի Թիֆլիս:— Վաղարշապատից մինչեւ Յերեան տասնութիւն վերստ եւ:— Բոլորը լեկան, բացի Աննիկից:— Առողջ լինելու հասար պետք եւ պահել առողջապահական կանոնները: Կոխվ առանց սպանության: Կոխվ հացի հասար:

Դեպի, մինչեւ, բացի, առանց, համար—անփոփոխ բառեր են և կոչվում են կապ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 76. Լուացրեք հետեւյալ նախադասությունները՝ փակագծերում դրած բառերը համապատասխան հոլով դնելով: որ՝ մենք այսոր մնացինք առանց... (հաց և ջուր) — մենք այսոր մնացինք առանց հացի և ջրի:

Մենք շատ ենք լսել... (Արամ) մասին: — Նա լեկավ աղբյուրից... (ջուր տանել) համար: — Բոլորը կատարել են, բացի... (Արշակ, Մինաս, Վաչիկ): — Յես կանգնած եմ մի բարձր... (շենք) հանդեպ: — Հստ ալդ... (կարգադրություն), դու գյուղ պիտի մեկնես: — Սուրբիկը կովել ե... (Գրիգոր) հետ: — Յերեք անդամ... (գալ) հանդերձ, յես չկարողացաք քեզ տեսնել:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 69. Կապ կոչվում են այն բառերը, վորոնք անփոփոխ են, դրվում են գոյականից առաջ կամ հետո յեվ այդ գոյականը իբրեւ լրացու կապում են մի ուժի բառի, գլխավորապես բայի հետ, իբրեւ նրա իննդիր: Գոյականից առաջ դրվող կապերը կոչվում են նախողիրներ, իսկ գոյականից նետո դրվողները՝ նետապիրներ: Գոյականի այս կամ այն հոլով դրվելը կախում ունի նախողիր կամ հետադիր կապից:

Բ. Ա.Պ.Պ.Ա.Վ.Ն. ԲԱՌԵՐ

§ 66. Մենք կանգնած ենք մի բարձր շենքի առաջ:— Դիբըն ընկել ե սեղանի տակ:— Կանգնեց քո դիմաց:— Նա փախավ քո դիմացով:— Դիբըը վերցրու սեղանի տակից:— Նո փախավ սեղանի տակով:— Յետ այստեղ ելի կռվի ժամանակ:

Առաջ, տակ, դիմաց, ժամանակ և այն փոփոխվող բառերը (տեղի անուններ) կարող են գործ ածվել իբրև կապական բառեր, մի ուրիշ գոյականից հետո դրվելով:

§ 67. Մենք մնացինք առանց հացի և ջրի:— Մենք անհաց և անջուր մնացինք:— Առանց վշտի—անվիշտ:— Առանց կամքի—անկամ—կամազուրկ:— Առանց սիրո—անսեր—սիրազուրկ.

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 77. Վերոհիշյալ ծեվով, ի՞նչպես կլինի՝ Առանց հանգստի... Առանց դադարի... Առանց ազմուկի... Առանց զարդարանքի... Առանց ուրախության...

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 78. Արել մտնելու ժամանակ—արևամտոցին:— Լույսը բացվելու ժամանակ—լուսաբացին:— Հավը խոսելու ժամանակ... Կալսելու ժամանակ... Ցերկիբը շարժվելու ժամանակ... Որը մթնելու ժամանակ... Նահանջելու ժամանակ... Գոմեշները կռվելու ժամանակ... Հորթերը թողնելու ժամանակ... Ազգին քաղելու ժամանակ... Օրգին թաղելու ժամանակ... Ծառերը տնկելու ժամանակ... Գարունը մտնելու ժամանակ... Ամառը, աշունը, ձմեռը մտնելու ժամանակ...

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 79. Պատերազմից առաջ— նախապատերազմիան, — հեղափոխությունից առաջ— մինչ- հեղափոխական, — ջրհեղեղից առաջ... մարդուց առաջ... պատերազմից հետո— հետ-պատերազմիան, — հեղափոխությունից հետո...

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 80. Ըստ այդ կարգադրության՝ համաձայն։ Ըստ կուսածողկոմատի կարգադրության... Ըստ Ժողովրդական Կոմիսարնենի Խորհրդի գեկրետի... Ըստ ԽՍՀՄ որենսդրության և ըստ կենտգործկոմի գեկրետի...»

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 81. Ցառեսություն՝ մինչև տեսություն։ Ցառուր... Ցոր կարգադրություն... Ցայժմ...

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 82. Նա զնաց մինչև հինգ կիլոմետր՝ հինգ կիլոմետրի չափ՝ շուրջ հինգ կողմետր։ Մինչև հինգ ոուրիշի... Մինչև յերեք ամիս... Մինչև մի ժամ... Մինչև տաս կիլոդրամ...

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 83. Վերլուծեցեք հետեւյալ բառերի կազմությունը, ցո՞ւց տվեք նրանցում ընդ յեվ ըստ նախդիրները՝ իջրեվ բաղադրիչ մասեր։ Ընդհանուրը՝ ընդհանուր։ Ընդարձակ... ընդզրկել... անընդհատ... որըստորե... ընդհատակյա... ընդծովյա... մեջընդմեջ...»

Է. ՇԱՂԿԱՊ

§ 68. Արշակն ու Սուրբիկը տուն գնացին։ Ցես յեվ դու այնտեղ մնացինք։ Ցես ե՛լ զնացի, դու ե՛լ զնացիր։ Թե՛ յես զնացի, թե՛ դու գնացիր։ Սուրբիկը յեկավ, բայց քեզ չտեսավ։ Ցես գալիս եմ, իսկ դու զնում ես։ Մենք հավաքվեցինք, վոր միասին աշխատենք։ Մենք կառաջադիմենք, յեթե աշխատենք։

Ու, յեվ, եւ թե, ըսյց, իսկ, վոր, յեթե բառերը շաղկապներ։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 70. Շաղկապ կոչվում են այն բառերը, վոր կապում են բառ բառի կամ նախադասով յուն նախադասության հետ։ որ։ Արշակն ու Սուրբիկը տուն գնացին։ Նախադասության մեջ Արշակն, Սուրբիկը բառերը կապված են իրար հետ ու շաղկապով։ Ցես գալիս եմ, իսկ դու

գնում ես—այստեղ՝ յես զալիս եմ նախադասությունը լու գնում ես նախադասության հետ կապված ե իսկ շաղկապով:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 84. Արտագրեցե՛ք յեվ ընդ-գծեցե՛ք շաղկապները:

Վարդան, տար իմ գիրքը, բայց չուշացնես, վորով-հետեւ ինքս ել դեռ չեմ կարդացել:—Յեթե գալիք, կտտա-նալիք:—Նստենք ու խոսենք:—Թե դու և թե նա պետք ե աշխատեք:—Գնանք, վոր բերենք:—Կամ դու պիտի գաս, կամ նա պիտի գա:—Ուշացար, ուստի և քեզ բաժին չնա-սավ:—Լավ չեմ զգում ինձ, սակայն պիտի աշխատեմ:—Արագ վազեցի, բայց և այնպես չհասա:—Կամաց գնացի, այնուամենայնիվ հասա:—Յերբ միասին ենք աշխատում, ավելի արդյունքի բնագ համնում:—Տուր այն գիրքը, վոր խնդրել եմ: Կատարիք, ինչ վոր քեզ ասել եմ:—Պատաս-խանատու կլինի նա, ով կիսախտի կանոնադրությունը:—Գնա, ուր ուզում ես:—Յեկ, յերբ կամենաս:—Թեև հոգ-նած ելի, բայց և այնպես աշխատեցի:—Նախ յեկանք, ապա գնացինք:—Մասիսը կամ Արարատը մեզնից հեռու չի:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 85. Շաղկապներով կալ-ված նախադասությունները փոխեցե՛ք ցույց տված ծեվով (առանց շաղկապների) ու զրի՝ առեք:

1. Գնա տուն, վոր դասդ պատրաստես. գնա տուն՝ դասդ պատրաստելու:

Յեկ մեր տուն, վոր գիրքդ ստանաս....

Կուժն աղբյուրը տարավ, վոր ջուր բերի....

2. Յես դասի չեկա, վորով ինտեվ հիվանդ ելի—յես դասի չեկա՝ հիվանդ լինելու պատճառով. կամ հիվանդ լինելով, յես դասի չեկա:

Դու հանցավոր ես, վորով ինտեվ այդ բանն արել ես....

Սառուցը հալվեց, վորով ինտեվ լեղանակը տաքացավ....

3 Մենք վեր կացանք, յերբ լուսը բացվում եր—լու-

սաբացին մենք վեր կացանք. կամ՝ լուսը բացվելիս մենք
վեր կացանք:

Յես վախենում ելի, յերբ ամպը գոռում եր....

Դու յեկար, յերբ արել մտնում եր....

Մենք վեր թռանք, յերբ հրացանը տրաքեց....

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 86. Ինքներդ հորինեցե՞ք
իետեվյալ ծեվի կապակցություններ յեկ՝ փոխեցե՞ք առանց
շաղկապի (ցուց տված ձեռվ)։—

4. Այն մարդը, վոր ուրիշի աշխատանքով ե ապրում,
նա շահագործող ե—ուրիշի աշխատանքով ապրող մարդը
շահագործող ե։

5. Յեկավ այն աշակերտը, վոր զնացել եր դժուղ—
գյուղ գնացող աշակերտը յեկավ։

6. Ով գիրք չունի, նա չի կարող այդ պատրաստել—
գիրք չունեցողն այդ պատրաստել չի կարող։

7. Ով չի աշխատում, նրա տունը կքանդվի—չաշխա-
տողի տունը կքանդվի։

8. Ինչ վոր քամին բերում ե՝ քամին ել կտանի—
քամու բերածը քամին կտանի։

Ը. ԶԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

§ 69. Ե՞ն, Գրիգոր, բավական ե:—Պա՛ պա՛ պա՛,
մեծ-մեծ մի խոսիր:—Վ՝ ս՛, միթե կարելի յեր այդ անել:—
Ամեն ինչ կորավ, ափսո՞ս:—Յես ի՞նչ դիտեմ, տո՛թե դա-
նակը վհրտեղ ե:—Դե՛ն, բավական ե, գնանք:—Հապա՛,
վեր կենանք:—Դե՛, գործի կպչենք:—Զը՞նգ զը՞նգ, հնչեց
գանդը:

Ե՞ն, պա՛ պա՛ պա՛, ափսո՞ս, տո՛, դե՛ն, դե՛, հապա՛,
զը՞նգ բառերը ձայնարկութուններ են:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 71. Զայնակրություն կոչվում են այն

բառերը, վորոնք մի ձև յնով կամ բացուկանչությամբ ցույց են տալիս խոսողի զգ սցմունքը կամ կամքը, կամ վորոնք նմանածայնություն են արտահայտում:

ԿԱՆՈՆ 35. ա) Զայնարկությունների վրա դրվում են Երկար կամ բացականշական նշան (՝), կամ շհշտ (՝):

բ) Զայնարկությունները նախադասության մրտա բառերից բաժանվում են ստորակետով, յեթե նախադասության սկիզբը կամ վերջն են լնկնում յեվ ստորակետով (սկզբից յեվ վերջից), յեթե նախադասության մեջն են ընկնում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 87. Արտագրեցե՞ք յեվ ձաւ- նարկությունների տակն ընդգծեցե՞ք.

Լեիկն ու Աշխենը դասամիջոցին կոռպերատիվ ելին հաղում (յերկուսն ել նույն խմբում ելին սովորում):

— Ե՛լ, Լեիկ, մի կիլո մեղր տուր:

— Ե՛, Աշխեն, փող-մող ումես վոր:

— Տո՛, բա չունեմ,—պատասխանեց Աշխենը:

— Պա՛, պա՛, պա՛ պա՛, ինչ մեղր ե, հա՛, լազաթ:

— Վայ, ափսոս, ծոր տվեց գետին: Քշա, անտե՞ր հավ, քո ուտելու բանը չի:

Ճը՞նդ ճը՞նդ ճը՞նդ....—խփեց ժամի տամը:

Ճը՞նդ զը՞նդ զը՞նդ... խփեց դպրոցի զանգը:

— Դե՛, բավական ե, Լեիկ,—ասաց Աշխենը, --գնանք դասի, հետո կոռպերատիվը կշարունակենք:

— Ուռա, կեցցե՛ մեր կոռպերատիվը,—բացականչեց Լեիկը՝ Աշխենի հետ դեպի դասարան վազ տալով:

ՀԱՐՑ.—Դիտեցե՞ք այս հողվածի մեջ պատահած նշան- ները:

ԼԵԶՎԻ ՆՇԱՆՆԵՐԸ

Լեզվի մեջ չորս տեսակի նշաններ են գործ ածվում.

1. Տառեր, վորոնք հնչունների նշաններն են և լինում են մեծատառ (գլխագիր, գլխատառ) և փոքրատառ։ Տառերն իրենց ձևով լինում են՝

ա. Գլխագիր. որինակ՝ Ա, Բ, Գ և այլն։

բ. Բոլորագիր. որինակ՝ ա, բ, գ և այլն։

գ. Եղագիր. որինակ՝ ա, բ, գ և այլն։

Բոլորագիրը գործ եւ ածվում տպագրության համար։ իսկ նուրագիր ու եղագիր տպվում են այն բառերը, վորոնց վրա առանձնապես ուշադրություն պետք եւ դարձնել։

ՀԱՐՑ. Ինքներդ ասացեք՝ յԵՐՔ եւ մեծատառ գործածվում։

2. Տրոհության նշաններ.

ա. Վերջակետ (։)

բ. Միջակետ (.)

գ. Ստորակետ (,)

դ. Բութ (՞)

Տրոհության նշանները ցույց են տալիս, թե վորտեղ պետք եւ մենք կանգ առնենք, խոսքերը, յերըեմն նայել բառերն իրարից բաժանենք, վոր մեր արտահայտում մըտքերը շշփոթենք։

3. Առօգանության նշաններ.

ա. Շեշտ (')

բ. Հարցական նշան (՞)

գ. Թերկար կամ բացականչական (՞)

Առօգանության նշանները բառի ճայնավորի վրա գրվելով՝ ծայնի յեղանակավորումն են արտահայտում, վորով իմացվում են, թե վորտեղ առանձնապես ուժեղ պետք եւ արտասանել, կամ յերկարացնել յեվ այլն։

4. Բացահայտության նշաններ.

- ա. Զակերտներ՝ բաց և փակ « » „):
 բ. Փակագծեր՝ բաց և փակ ()
 դ. Կախման կետեր կամ յերեք կետ (...)
 դ. Բազմակետ (չորս կամ ավելի կետ (...))
 ե. Դիմ (—):
 դ. Դժիկ կամ միության զիմ (-, որինակ՝ մանը-մունը):
 է. Տողադարձի նշան կամ յենթամեա (-):
 ը. Ժանոթության նշան (* կամ ¹⁾, ²⁾):

Բացահայտության նշանները գրվածքի միտքը զլիսավորապես տեսությամբ են բացահայտում:

ԱՄՓՈՓ ՊԱՏԿԵՐ

ԲԱՌԵՐԻ ՏԵՍԱԿՆ ԸՍՏ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ

(Մասունք բանի)

1. Գոյական անուն—1. հատուկ, 2 հասարակ:
2. Գերանուն—1, անձնական, 2 ցուցական 3. վլխադարձ, 4. հարաբերական, 5. հարցական, 6. ստացական, 7. անորոշ:
3. Ածական—1. վորակական, 2. թվական, ա. քանակական, բ. դասական, 3. հարցական, 4. ցուցական, 5. անորոշ:
4. Բայ
5. Մակրայ:
6. Կապ (նախդիր ու հետազիր) և տաղկապ:
7. Չայնարկություն:

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բ. ՄԱՍ

ՈՒՂԵՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԴԱՍՏՈՒԹՅԵՐԻ ՀԱՄԱՐ

Բ. բարեփայնված ու լրացրած հրատացակուրյան

Կազմեց ՀԵՐՈՒԹՅՈՒՆ ՊԵՏՐՈՎՅԱՆ

Ա 662

Գրառելով Ա 456 (Բ)

Տիրած 5000

Պետհրատի առաջին ապարան Վաղարշապատում

VI. ԽՈՍՔԻ ԿԱՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ

Ա. ԲԱՌԵՐԻ ՊԱՇՏՈՆԸ ԽՈՍՔԻ ՄԵջ

§ 70. Աշակերտը կարգում եւ՝ Զավենը հաց կերավ։ — Յեսլեկ դպրոցում տեսա Մուկուչին։ — Գնաց։ —

Մրանք խոսմեր կամ նախադասություններ են։

ՎՈՐՈՇՈՒՄ 72. Խոսքը կամ նախադասությունը բառերով արտահայտված միտք ե, վորով մի առարկայի վորեվեն հատկանիշ ե վերագրվում. որ՝ ‘աշակերտը կարդաւու գործողություն կամ կարդալու հատկանիշ ե վերագրվուս, իսկ աշակերտը ժիր ե խոսքի մեջ աշակերտ առարկային ժիր լինելու հատկանիշ ե վերագրվում։ Խոսքն ամենակարճ ծեվով՝ մի բայ ե (որ՝ ‘գնաց’):

Առանց բայի խոսք չի կարող լինել. բայը կարող ե չդրվել, բայց մտքով հասկացվել. որ՝ ‘հասկացողին’ մին, չհասկացողին՝ հազար ու մին, — ուր չի դրված ասա բայը, բայց մտքով հասկացվում ե, թե՝ հասկացողին մին ասա, չհասկացողին հազար ու մին ասա։

Առանց բայի, ուրիշ տեսակի բառեր, ինչքան ել իրար յետեից շարենք, խոսք կազմել և վորոշ միտք արտահայտել չեն կարող. որ՝ ‘յերեկ առավոտյան դպրոցում մի աշակերտ... բառերի այս շարքը դեռ վորոշ միտք չի արտահայտում, բայց յեթե բառերի այդ շարքին ավելացնենք, որինակ, լնկավ, յերգեց, նվազեց և այն բայերից մեկը, այն ժամանակ վորոշ միտք կստացվի, խոսք կլինի։’

§ 71. Գնաց։ — Վաշիկը գնաց։ — Վաշիկը դպրոց գնաց։ — Վաշիկը յերեկ դպրոց գնաց։ — Մեր Վաշիկը յերեկ դպրոց գնաց։

Պատասխանեցնք հետևյալ հարցերին:

1. Ո՞վ գնաց. 2. Ո՞ւր գնաց. 3. ՅԵՐԵ գնաց. 4. Ի՞նչ Վաշիկ դպրոց գնաց:

ՎԱՐՈՇՈՒԽՄ 73. Բացի բայից, խոսքի մեջ կարող են լինել նայեվ լրացումներ, վորոնք այս կամ այն տեսակետից լրացնում են բայի կամ բայի լրացման իմաստը (Վաշիկ, տերեկ, դպրոց, մեր):

§ 72. Վաշիկը յեվ Սուրիկը միասին դեպի տուն գնացին:—Յես ու դու մնացինք:—Նա պիտի դար, բայց չեկավ:—Մենք գնացինք դեպի տուն:—Յեվ, ու, դեպի բառերը կապում են բառ բառի հետ:

ՎԱՐՈՇՈՒԽՄ 74 ա). Բացի լրացումներից, խոսքի մեջ կարող են լինել յեվ կատակցական բառեր (և, ու, բայց, դեպի):

§ 73. Տո՛, Մինաս, մւր եզիր այսքան ժամանակ:—Վա՛յ, Սահակ, շատ վատ բան ե պատահել:—Տո՛, վա՛յ ձայնարկությունները խոսքից դուրս մնացող և զգացմունք ցուց տվող բառեր են:

ՎԱՐՈՇՈՒԽՄ 74 բ). Խոսքից դուրս, զգացմունք կամ կամք ցուց տվող բառեր կարող են լինել, վորոնք, խոսքը կտրելով, կարող են խոսքի մեջն ընկնել (տես § 62, կանոն 32, բ.):

ՎԱՐԺՈՒԽՄ 88. Արտազրեցնք յեվ բառերի վերեվը նշանակեցնք բառերի տեսակը խոսքերի մեջ՝ կարն ծեփով՝ բ=բայ, լ=լրացական բառ, կ=կապակցական բառ, ձ=ձայնարկություն:

Աշակերտները հավաքվեցին դպրոց: Վաշիկը և Հրանտը բակում խաղում ելին: Զանդը տվին: Յերկուսը դեռ խաղում ելին:—Տհ, Վաշիկ, դանգը տվել ե:—Յերկու ընկերները հեալով ու շնչառապատ վագեղին դասարան:

Բ. Լ ՐԱՑՈՒՄՆԵՐ

Լրացման տեսակները

§ 74. Աշակերտը գիրք և կարդում:—Նուշիկը մատի-
տով նկարում ե:—Աշակերտը, գիրք, նուշիկը, մատիտով
գոյականները (տես գլուխ V Ա) խոսքի մեջ բայի գոյա-
կան լրացումներ են:

§ 75. Աշոտը արագ գնաց տուն:—Միքայելը հիմա
կդա:—Սուրբիկն արդեն յեկել ե:—Արագ, հիմա, արդեն
մակրայները (տես գլուխ V Ե) խոսքի մեջ բայի մակրա-
յական կամ պարագայական լրացումներ են:

§ 76. Կարմիր ու կապույտ մատիտներ գնեցի:—Յես
պատկերազարդ գիրք ունեմ:— Կարմիր, կապույտ, պատ-
կերազարդ ածականները (տես գլուխ V Պ) խոսքի մեջ
լրացումների ածական լրացումներ են (լրացման լրացում-
ներ):

ա. Բայի գոյական լրացումներ. անցողական յեվ
անանցողական բայեր

I. Տ Ե Շ Բ Ա Կ =

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 89. Ստորեվ ըերած խոսքերի մեջ
գտնք, թե ո՞վ կամ ի՞նչն ե մի բան անում կամ լինում,
հետեւալ ձեռվ. որ.՝ Աշակերտը կարդում ե—մվ և կար-
դում:—Այստեղ մի բաժակ կա—ի՞նչ կա:

Գլուղացին արտում բահը ձեռքին աշխատում ե—մվ
ե աշխատում:—Յերեկ Տիգրանը դպրոցի բակում բռնեց
չուսիկին:—Ահա ծագեց պայծառ արեր:—Մենք յեկանք
առուն:

Ինքններդ խոսքեր կազմեցեք և ցույց տվեք անող կամ
յեղող առարկան:

ՎՈՐՈՇՈՒՄ 75. Անող կամ յեղող առարկայի անունը խոսքի մեջ կոչվում ե յենթակա: Յենթական պարզում, բացահայտում ե բայի դեմքը: Որ՝ յերբ ասում ենք՝ գնաց, հասկանում ենք, վոր մի Յ-րդ դեմքի առարկա (նա) գնաց, իսկ յերբ ասում ենք՝ Գուրգենը գնաց, իմանում ենք, վոր այդ Յ-րդ դեմքի առարկան (նա) Գուրգենն ե, վոր գնաւու գործողությունը կատարում ե:

§ 77. **Աշակերտը կարդում ե:** Աշակերտները կարդում են: Յես կարդում եմ, մենք կարդում ենք, դուք կարդում եք.

ՎՈՐՈՇՈՒՄ 76. Բայը յեվ յենթական համաձայնում են թվով ու դեմքով. յեզակի յենթակայի հետ դրվում ե յեզակի բայ, հոգնակի յենթակայի հետ՝ հոգնակի բայ:

§ 78. **Արտաշեսն ու Գրիգորը գնացին:** — Թիֆլիսը, Բագուն, Բաթումը, Յերևանը Անդրկովկասի քաղաքներն են.

ՎՈՐՈՇՈՒՄ 77. Յեթե նույն նախադասության մեջ մեկից ավելի յեզակի յենթականեր կան, բայը հոգնակի յերվում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 90. Ստորեւ բերած խոսքերում ցուց տվեց բայերը յեվ յենթակաները յեվ բացատրեցնե՞ք նրանց համաձայնության շեղումներն ընդհանուր կանոնից:

Հինգ աշակերտ գնացին, տաս աշակերտ մացին: — Կարգ ու կանոնը վերացել ե: — Լացն ու կոծը չի կտրվում:

Ցույց տվեց յենթակա լրացումները.

Ամենի ձայնով յերկաթն ե խոսում,
պղղպատն ե ճշում շաշյունով դողդոջ—
ե բազմաղաղակ որերի լեզուն
հնչում ե այստեղ, վորպես մարտակոչ:
Այս աղմկահույզ կյանքի խենթ բոցում
այբում ե սիրտս սրբազան մի դոդ,

Հուզում ե հոգիս մի վեհ հիացում,
և սարսափելին թվում ե դյութող...

(Կարմիր Արև, «ՎԵՐԱԴԱՐՁ»)

§ 79. Մթնեց.—վորոտում ե.—անձրեվում ե.—լուսացավ.—հետդ չի խոսվում.—այս մատիտով չի գրվում.—ասում են՝ ուռին աղջիկ եր ինձ պես.—այնուեղ եշը փալանով կուտեն։—դուռդ ծածկի՛ր, հարևանիդ գող մի՛ ըռնիր։

ՎՈՐՈՇՈՒՄ 78. ա) Այն խոսքերը, վորոնց բայերի դեմքը անող կամ յեղող առարկայի անունով (յենթակայով) չի բացահայտվում, կոշկում են անենթակա խոսներ, վոր կարող են արտահայտվել՝ յեղակի յերրորդ դեմքով (մթնեց), հոգնակի յերրորդ դեմքով (ասում են), յեղակի յերկրորդ դեմքով յեվ այլն։ Անենթակա խոսքերը կարելի յե փոխել յենթակայով խոսքերի—մթնեց=մութն ընկավ, —հետդ չի խոսվում=հետդ խոսել չի լինում։

II. Կ Ր Ա Պ Լ Ր Ա Գ Ո Ւ Մ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 91. Հետեվյալ խոսքերի մնջ լրացումներ դրե՛ք, վորոնք պատասխանեն ինչ կամ ումը հարցերին։

Սեղիկը կոտրեց... (ի՞նչը):—Հյումնը՝ կտրեց... Արշակն սպանեց... (ում):—Արտուրը վիրավորեց... Հայկը կերավ...

Այդ լրացումները ցուց են տալիս, թե բայի գործողությունը յենթակալից ինչի կամ ում վրա յե անցնում, կամ բայի գործողությունը յենթակալից ինչը կամ ով ե կրում իր վրա։

ՎՈՐՈՇՈՒՄ 78 բ). Այն լրացումները, վորոնք ցուց են տալիս, թե բայի գործողությունը յենթակայից ի՞նչը կամ ո՞վ ե իր վրա կրում, կոշկում են կրող լրացումներ։

Տո՛ւց տվեք կրող լրացումները յեվ յենթակաները։

Մի լար, վերդիս, վոր չես լսում
ել մայրական քաղցր սրոր։

յես մեծ կռվի յերգ եմ հյուսում
որոցքիդ մոտ ամեն որ...

Դու լսեմ ես այնտեղ, դրսում
շաշ ու շառաչ, լաց ու կճծ,—
մեր արյունն ե այնտեղ հոսում,
ներկած և տուն, և փողոց...

(Կարմիր Արե, «ԲԱՆՎՈՐՈՒՀՈՒ ՈՐՈՇԸՆ»)

III. Բայերի սեռը

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 92. Հետեվյալ խոսքերի բայերը կարո՞ղ են կրող լրացում ունենալ.

Աղջակը ուրախ ե:—Գրիգորը քնում ե:—Սերոբը մեծանում ե:

ՎՈՐՈՇՈՒՄ 79. Բոլոր բայերը կրող լրացում չեն կաթող ունենալ:

Այն բայերը, վորոնք կրող լրացում ունեն կամ կարող են ունենալ կոչվում են անցողական բայեր (կոտրել, ջարգել, սպանել):

Անցողական բայերը ցուց են տալիս այնպիսի գործողություն, վոր յենթակալից անցնում ե ուժից առաջկայի վրա:

Այն բայերը, վորոնք կրող լրացում շրմեն յեվ չեն կարող ունենալ, կոչվում են անանցողական բայեր (լինել, քնել, հանգստանալ, նստել):

Անանցողական բայերը ցույց են տալիս այնպիսի գործողություն, վոր յենթակալից չի անցնում ուժից առաջկայի վրա:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 93. Ներթեվ դրած խոսքերում ցո՞չց տվեք անցողական յեվ անանցողական բայերը, նրանց յենթակաները յեվ կրող լրացումները, յեթե կան.

1. Բանվորները սղոցով ծառը կտրեցին:—Սիրաքը պատռեց իր գիրքը:—Աշակերտները վազվացում են գպրոցի բակում:—Զուրը հոսում ե անուշ՝ խոխոջելով:—Տիգ-

քանը կարդացնում և Սիրուշին:—Հայկուշը պատրաստեց
իր դասը:—Նուշիկը պարտեզում վարդ և քաղում:—Ցես
աթոռը մտացրի սեղանին:

2. Ատում ենք թագը բռնակալների,
պաշտում ենք շղթան տառապողների,
մեր արյամբ թրջված գահերը բոլոր
պիտ ներկենք արյամբ մեր վոստիների:

(Կ. Ա.)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 94. Լրացրե՛ք հետեվյալ խոսքերը՝
ներքեվ ըերած որինակի ձեվով.

Ցես թե կարդում եմ և թե կարդացնում:

Ցես թե զբում եմ և թե զբել եմ տալիս:

Ցես թե ուրախանում եմ և թե... թե յերգում եմ
և թե... թե նկարում եմ և թե... թե հանգստանում
եմ և թե... Մեծանում եմ և... կտրում եմ և... Ու-
տում եմ և... Փախչում եմ և... կորչում եմ և... Իմա-
նում եմ և... Հիշում եմ և... Ասում եմ և...

Կարդացնում եմ, ուտեցնում եմ, հազցնում եմ...
բայերը, վորոնք ունեն ացն, եցն, զն միջածանցներ (վար-
ժություն 60, 2) կոչվում են պատճառական սեռի բայեր:

ՎՈՐՈՇՈՒՄ 90. Պատճառական սեռի կոչվում են
այն անցողական բայերը, վորոնք ցուց են տալիս, թե
յենթական ինքը չի կատարում գործողությունը, այլ պատ-
ճառ և լինում, վոր մի ուրիշը կատարի բայի ցուց տված
գործողությունը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 95. Ներքեվ դրած խոսքերը փոխե-
ցեք ստորեվ ցուց տված ձեվով:

Ցես ծեծեցի Մարկոսին—Մարկոսը ծեծվեց ինձնից:

Գրիգորը հաղթեց Մուկուչին—Մուկուչը հաղթվեց
Գրիգորից:

Միլիցիան բռնեց ավաղակներին...

Հրդեհն ալքեց շենքը...

Կարկուտը վնասեց ցանքսերը...

Փոթորիկը կոտրեց ծառերը...

Սեթն սպանեց գողին...

Գողակը ծակեց տախտակը...

Քարը կոտրեց բաժակը...

Այս որինակների մեջ առաջին շարքում գտնվող խոսքերի մեջ յեղած անցողական բայերը ներգործական սեռի բայեր են, իսկ յերկրորդ շարքում գտնվող խոսքերի մեջ յեղած բայերը (վ միջածանցով) — կրավորական սեռի:

ՎՈՐՈՇՈՒՄ 81. Ներգործական սեռի բայերը ցուց են տալիս այնպիսի գործողություն, վոր յենթական ինքն ե կատարում, իսկ կրող առարկան այդ գործողությունը յենթակայից կրում ե իր վրա:

Կրավորական սեռի բայերը, վորոնք ունեն վ միջածանց (ջարդվեք, սպանվել), ցուց են տալիս այնպիսի գործողություն, վոր յենթական մի գորական լրացումից կրում ե իր վրա:

Ներգործական յեվ կրավորական բայերն իմաստով իրար հակառակ են, յեվ մեկով արտահայտված խոսքը կառելի յեւ փոխել մրտառվ, համապատասխան կերպով փոփոխելով բառերը:

Այն բայերը, վորոնք անցողական չեն (վոչ ներգործական են և վոչ ել պատճառական), այլև կրավորական չեն, կոչչում են չեզօք սեռի բայեր (գնում եմ, ուրախանում եմ, նստեցի, կա, ննջիր):

Զեզոք սեռի բայերը ցուց են տալիս այնպիսի գործողություն, վոր վոչ յենթակայից ե անցնում կրող լրացումի վրա յեվ վոչ ել յենթական ե կրում մի ուրիշ լրացումից, այլ յենթական ինքն իրեն լինուած ե մի վիճակի մեջ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 96. Վորոշեցե՞ք բայերի սեռը հետեւյալ խոսքերի մեջ:

Ծառը կտրվեց: — Ծառը կտրեցին: — Ծառը կտրել տվին: — Ցես կարդացի: — Ցես կարդալ տվի: — Քիրքը

կարդացվեց: — Մենք հիանում ենք: — Մենք հիացնում
ենք: — Մայրն արթնացավ և արթնացրեց յերեխալին: —
Յերեխան արթնացավ:

Ամփոփում. — Կրող լրացման նկատմամբ ըայերը ըա-
ժանվում են յերկու խմբի՝ անցողական յեզ անանցողա-
կան: Անցողական քայերը յերկու սեռ ունեն՝ 1) ներգոր-
ծական. 2) պատճառական: Անցողական քայերը նույն-
պես յերկու սեռ ունեն՝ 1. կրավորական. 2. չեզոք:

Յուս տվեց քայերի սեռը.

Հեղիս, վոր այստեղ ձեզ համար այսոր
հրեղեն խոսքեր կոնմ և խնդում,
լսեմ հաղթական մարտի ցնծություն,
տեսնեմ շարքերը ձեր հզորազոր:
Յեզ լուսաբացին, յերբ նոզնած լինեմ,
յերբ բնած լինեմ՝ թշնամուց խարված,
արեածադի ցնծությամբ արբած,
կանչեմ ձեզ, նջամ՝ յեղբայրներ, յելե՛մ...

(Կարմիր Արև, «ՎԵՐԱԴԱՐՁ»)

Բ. Բայի պարագայական լրացումներ

§ 80. Աշակերտները դպրոցից գնում եցին իրենց-
տները: Նրանք անցնում ելին յերկար փողոցով: Փողոցում
կառքեր ելին կանգնած: Շենքերից մեկի կտրին դրոշակ-
եր ծածանվում:

Այս խոսքերում ընդգծված լրացումները ցուց են տա-
լիս այս կամ այն բայի գործողության օեղի պարագան:
Տեղի պարագաները պատասխանում են՝ վո՞րտեղից, ո՞ւ,
վո՞րտեղ հարցերին:

§ 81. Այդ բանը կատարվեց զարնանը: Մայիսին եր-
այդ ժամանակ վարդերը բուրում ելին: Աժմ մանրամասն-
հիշում եմ բոլորը: Արդեն միքանի տարի յեւ անցել ալու-
որվանից:

Այս խոսքերում ընդգծված լրացումները ցուց են տալիս այս կամ այն բայի գործողության ժամանակի պարագան: Ժամանակի պարագան պատասխանում է յե՞րբ, յերբվանի՞ց, մինչեւ յե՞րբ հարցերին:

§ 82. Մեր կողեկտիվը յեռանդով աշխատում երբողորը սիրով գործի ելին կաել: Շտապ չելինք աշխատում: Արեք պայծառ փայլում եր: Մենք ուրախ յերգում ելինք:

Այս խոսքերում ընդգծված լրացումները ցուց են տալիս այս կամ այն բայի գործողության ձեվի կամ վորակի պարագան, վոր պատասխանում ե՝ ի՞նչպես, ի՞նչ կերպ հարցերին:

§ 83. Մենք յերեք կիլոմետր գնացել ելինք արդեն: Յուրաքանչյուրիս բեռը հինգ կիլոզրամ եր կշռում: Յեւ ճանապարհին միջանի անգամ բեռս վայր դրի: Հանգստանալու համար: Հետզհետե հոգնածությունս ավելի սաստկանում եր:

Այս խոսքերում ընդգծված լրացումները ցուց են տալիս այս կամ այն բայի գործողության չափ ու հանակի պարագան, վոր պատասխանում ե՝ վո՞րքան, ի՞նչքան, քանի՞ անգամ հարցերին:

§ 84. Զմեռը Գուրգենը մըսելուց հիվանդացավ: Հիվանդության պատճառով բացակայում եր դասից: Ամեն որդեպեր եր ընդունում՝ ըժշկվելու համար: Այսպիս անելով միան կարող եր առողջանալ: Հիվանդ լինելով հանդերձ ուզում եր կարդալ: Մալլն արգելում եր: Թերեւս վորդու հիվանդությունն ավելի սաստկանար:

Այս խոսքերում ընդգծված լրացումները ցուց են տալիս այս կամ այն բայի գործողության նիմունի պարագան, այսինքն՝ գործողության պատճառի, նպատակի, պայմանի, հակառակ հիմունքի յեվ յեղանակի (խոսողի վերաբերմունքի) պարագաները:

Յո՛ւց տվեր պարագայական լրացումները հետեւյալ
հատվածում.

Բայց խուլ ու խավար ոդում այս գիշեր
մենակ և Սաքոն ու չունի ընկեր.

բուխարու կողքին լուռ թինկը տված՝
մտածում և նա... Ու մին ել, հանկարծ,

վորտեղից վորտեղ, են ձորի միջին,
միտն եկան տատի զրույցները հին...

Միտն եկան, ու մեր Սաքոն ակամա
սկսավ մտածել չարքերի վրա,

թե ինչպես ուրախ խմրով, միասին,
ծուռը զոտներով, գիշերվան կիսին,

թուրքերի կանանց կերպարանք առած,
յերեռմ են միշտ միայնակ մարդկանց...

(Կարմիր Արև, «ԼՈՌԵՑԻ ՍԱՔՈՆ»)

գ. Լրացման լրացումներ

§ 85. Ընդարձակ բակում աշակերտները խաղում ե-
լին: Պայծառ արեն աշխուզժ եր ներշնչում նրանց: Ուրախ
ու զվարնալի խաղն զբաղեցրել եր ամենքին:

Այս խոսքերում ընդգծված բառերը բայերի լրացում-
ներ չեն, այլ լրացումների լրացումներ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ (97 ա). Յո՛ւց տվեր, թե ընդգծված
բառերից վո՞ր բայի վո՞ր լրացման լրացումներ: — Ի՞նչ տե-
սակի բառեր են այդ լրացումները:

§ 86. Աշոտի մալրը հիվանդ եր: Հարեվանի վորդին
բժիշկ հրավիրեց: Բժշկի դեղատոմսը Առժողկոմատի դե-
ղատուն տարափ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ (97 բ). Ի՞նչ տեսակի բառեր են վերեվ
բերած խոսքերում ընդգծված լրացման լրացումները: Ինչներու
խոսքեր կազմեցե՞ր, վորոնց մեջ լրացման լրացում լինեն՝

1. Յուցական դերանուններ (Վ բ).

2. Հարցական դերանուններ (Վ բ).

3. Ստացական դերանուններ (Վ բ).
4. Անորոշ դերանուններ (Վ բ).
5. Հարաբերական դերանուններ (Վ բ).
6. Վորակական ածականներ (Վ գ).
7. Քանակական ածականներ (Վ գ).
8. Դասական ածականներ (Վ գ).
9. Ցուցական ածականներ (Վ գ).
10. Հարցական ածականներ (Վ գ).
11. Անորոշ ածականներ (Վ գ).
12. Բայածականներ կամ դերբայներ (§ 63, վորոշում 64, գ, դ, ե):

§ 87. Աղութը, Միհրանը, Վարդանը, Սիրուշն ու Շողիկը աշխորհրդի անդամներ ընտրվեցին: — Առաջին, յերկրորդ և յերրորդ խմբերն եքսկուրսիա գնացին: — Պետհրատի գրախանութից գնեցի՝ թուղթ, տետրակ, մատիտ, պրիչ ու թանաք:

ԿԱՆՈՆ 36. Խոսքի մեջ հարանման իմաստով լրացումները կամ լրացման լրացումներն իրարից բաժանվում են ստորակետերով. վերջին յերկուսը, յեթե միանում են ու կամ յեկ շաղկապով, ստորակետով չեն բաժանվում:

Գ. ՀՈԼՈՎՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԽՈՍՔԻ ՄԵՋ

ա. Ուղղական նօլով

I. Թում ուզգական նօլով

1. Հարցեր տալով դիտեցե՞ք բուն ուղղական հոլովի կիրառումը հետեւյալ խոսքերի մեջ յեկ թղթակացրե՞ց ի՞նչ ե ցուց տալիս ուղղական հոլովը.

1. Պողոսը յեկավ (մվ յեկավ): — Զմեռն անցավ (լնչն անցավ): — Սեղանի վրա գիրը կա:

2. Սահակն աշակերտե: — Խոձորենին ծառ ե: — Զուրը գոլորշի կրառնա:

3. Արեվը մտնելուց հետո գնացինք: — Սիրտն ուրախ,
զլուխը տաք մարդ ե նա:

4. Սիմոնը քար սիրտ ունի: — Նա աղվես մարդ ե:

Փոխեցե՞ք հետեւյալ արտահայտությունները ցույց
տված ճեղով.

1. Խելքը պակաս մարդ — պակասամիտ մարդ.
2. Թլուխը տաք — տաքազլուխ.
3. Վոտքը կաղ — կաղոտն.
4. Գլուխը հաստ — ...
5. Գլուխը պինդ — ...
6. Կաշին հաստ — ...
7. Սիրտը մեծ — ...
8. Գլուխը բաց — ...
9. Զեռքը դատարկ — ...
10. Սիրտը սև — ...
11. Կողքը հաստ — ...
12. Տունը քանդված — ...
13. Սիրտը մեռած — ...
14. Ճլուղերը կոտրած — ...

ՎՈՐՈՇՈՒՄ 82. Բայց ուղղական հոլովը խոսքի մեջ կարող ե ցուց տալ՝ անող կամ թեղող առարկան (թենթակա — աշակերտը կարդում ե), այն հատկանիշը, վոր վերագրվում ե թենթակային (աշակերտը մարդ ե), կարող ե լինել վերադիր մի անվան (քար սիրտ):

II. Հայցական-ուղղական

2. Դիտեցեք ուղղական հոլովի այն տեսակը, վոր պատասխանում ե ո՞ւր, վո՞րտեղ, մինչեվ թե՞րք, վո՞րքան ժամանակ, ինչքա՞ն, վո՞րքան հարցերին:

Ծանօթություն. — Քերականներից վոմանք այս տեսակի ուղղականը հայցական հոլով են կոչում:

1. Աշակերտը գնաց դպրոց: — Քարն ընկավ գետին: — Գնացի աղբյուրը: — Դրեց զրապանը: — Ձեռքը տարավ քերանը: — Գլխարկը դրեց զլուխը: — Նա Թիֆլիս ե ապրում:

2. Նա ամբողջ որն աշխատում ե: — Յերկու ժամ անձրւ յեկավ: — Յերեսուն տարի ապրեց:

3. Այդ յերկու ոռորմի արժեք: — Բեռը հինգ փութ կը շեց: — Նա մի վերստ գնաց:

4. «Խուժանները» զողովրդյուն գնացին: — Յես հարսանիք չգնացի: — Չորքը կոխվ գնաց:

ՎՐՈՇՈՒՄ 83. Հայցական-ու դդականը քուն ուղղականից ծելով չի զանազանվում, այլ իր կատարած պաշտոնով՝ խոսքի մեջ կարող ե ցոյց տալ զործողության տեղը (գնաց դպրոց), ժամանակը (յերկու ժամ նոտեց), քանակի պարագան (հինգ վերստ գնաց), նպատակը (զողովրդյուն գնացին), կրող լրացում (տես ներքեւ նայցական նոլով):

III. Կոչական-ուղղական

3. Դիտեցեք ուղղական հոլովի հետևյալ տեսակը, վորցուց ե տալիս այն առարկան, վորին դիմում ենք մի բան ասելու կամ հարցնելու համար:

Ծանօթություն. — Քերականներից վոմանք այս տեսակի ուղղականը կոչական հոլով են անվանում:

- ա. 1. Աշուտ, յերբեք չի մոռանա քեզ քո ընկերը:
- 2. Քո ընկերը, Աշուտ, յերբեք չի մոռանա քեզ:
- 3. Յերբեք չի մոռանա քեզ քո ընկերը, Աշուտ:
- 4. Այժմարդ, ուր գնացիր: — Տհ, ԱՌշակ, ինչո՞ւ չեկար:
- 5. Սիրելի վորդիս, լավ աշխատիր:

բ. Մնաք բարով, արե՛վ, զարուն
և խնկարնեյր ծաղիկներ,
կարկաչանոս վտա՛կ սիրուն,
կանաչազգեստ բլուրներ...
Մնաք բարով, համբույր և սեր,
դեմքով հրեշտակ կօ՛յս շքնազ,
վայելչության պայծառ ժամեր,
քաղցր ժայիտ, կյա՛նք մատաղ...

(Բանասատ. Հովհ. Հովհ.)

ԿԱՅՆՈՆ 37. Կոչական բառը խոսքից բաժանվում ե ստորակետով, յեթե սկիզբը կամ վերջն ե ընկնում. իսկ յեթե խօսքի մեջտեղն ե ընկնում, յերկու կողմից առնը-վում ե ստորակետերի մեջ: Կոչականի շեշտված վանկի վրա շեշտ ե դրվում: Յեթե կոչականի վրա ածական կամ ձախարկություն ե դրվում, շեշտն անցնում ե վերջին-ներիս:

ՎՐԱՐԱՌՈՒՄ 84. Կոչական-օւղղականը ցույց ե տալիս այն անճը կամ առարկան, վորին դիմում ենք՝ մը բան ասելու կամ հարցնելու համար:

ՎՐԱՐԺՈՒԹՅՈՒՆ 98. Խոսքեր կազմնցե՞ք, վորոնց մեջ ուղղականը ցույց տա.

1. ՅԵՆԹԱԿԱ (մի բան անող կամ լինող).—կողմնակի յենթակա.

2. Առարկայի վորակը կամ հատկանիշը.

3. Գործողության ժամանակը (ժամանակի հայցական).

4. Գործողության տեղը (տեղի հայցական).

5. Գործողության չափը ու քանակը (չափը ու քանա-կի հայցական).

6. Գործողության նպատակը (նպատակի հայցական).

7. Առարկան, վորին դիմում ենք (կոչական):

Բ. ՏՐԱԿԱՆ ԻՆԼՈՎ

I. ՍԻՇԱԿԱՆ-ՏՐԱԿԱՆ

4. Համապատասխան հարցեր տալով դիտեցեք տրա-կան հոլովի այն տեսակը, վոր դրվում ե մի գոյականի վրա իրքե նրա լրացում:

Ծանոթություն.—Քերականներից վուժանք այս տե-սակի տրականը սեռական հոլով են կոչում:

1. Ամասիկի (սւմ) գիրքը կորավ:—Սեղանի (ինչի) վոտը կոտրվեց:—Դրքի կազմը պոկված ե:

2. Վարդանի տեսածն ալդ եւ: — Ազուավի կռուալն ա-
խորժելի չեւ: — Արեվի ծագումը հիանալի յեւ:

3. Բանվորների ազատարարը նա յեւ: — Հիվանդի խնամ-
քը ծանը եւ: — Մեռելի թաղումը վաղն եւ:

4. Շաքարի կիլոն ութսուն կոպեկ եւ: — Ցորենի փու-
թը լերկու ոռուբի յեւ: — Զվի հատը լերեք կոպեկ եւ:

5. Խոտի դեզը բարձր եր: — Ցորենի հացը զարու հա-
ցից լավ եւ: — Բընծի՞ քաշովին ե լավ, թե՞ ծավարի քաշովին:

6. Գլխի մազերը, մատի մատանին, մեջթի գոտին,
գյուղի բնակիչները, կարասի գինին:

7. Այսորվա դասը, ամառվա միրգը, նոր տարվա
ցուրտը, մայիսի վարդը:

8. Մի ոռուբլու չիթ, քսան կոպեկի խաղող:

9. Առաջին աստիճանի դալրոց, լավ խելթի մարդ, նոր
ձեվի հագուստ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 99. Խոսքեր կազմեցէք, վորոնց մեջ
այս տեսակի տրականը (սեռականը) ցուց տա՝

1. Պատկանելություն, առարկա, վոր տեր ե մի ու-
րիշ առարկայի (ստացական սեռական).

2. Ամբողջը, վորի մասն ե վերցվում (մասնական
սեռական).

3. Նյութը, վորից կազմված ե առարկան (նյութի
սեռական).

4. Տեղը, ուր կա կամ լինում ե մի բան (տեղի սե-
ռական).

5. Ժամանակը, ուր կա կամ լինում ե մի բան (ժա-
մանակի սեռական).

6. Գինը կամ արժեքը (գնի կամ արժեքի սեռական).

7. Վրակը կամ տեսակը (վրակական սեռական):

ՎՈՐՈՇՈՒՄ 85. Սեռական նոլովը տրականից տար-
բերվում ե վոչ թե ճեվով, այլ խոսքի մեջ. իր կատարած
ալաշտոնվ. սեռականը դրվում ե անվան վրա՝ իբրեւ նրա
վերադիր (ժառի ճյուղը). բուն տրականը բայի կամ ածա-

կանի լրացում եւ լինում (գիրքը տվի Արշակին... մարդու հաճելի): Մեռական հոլովը վորոշող հողով չի գործածվում, մինչեռ տրականը կարող եւ թե անհող յեվ թե հողով գործածվել (մարդու տվի, մարդուն տվի): Մշքանի դերանունների սեռականը տրականից զանազանվում եւ (իմ—ինձ, քո—քեզ, նրա—նրան և այլն):

II. Խայցական (ուղղական յեվ օրական) հոլով

5. Դիտեցե՛ք ուղղական և օրական հոլովերի այն տեսակները, վորոնք կրող լրացում են լինում՝ դրվելով անցողական բայերի մոտ:

Ն ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն .—Այս տեսակի ուղղականը և արականը քերականներից վուանք խայցական հոլով են անվանում:

1. Յես մի մարդ տեսա:—Մարդ մարդու ցեխը չի պցի:—Յես այն մարդուն տեսա:

2. Այնտեղ մի մարդ սպանեցին:—Այնտեղ այն մարդուն սպանեցին:

3. Նա ընկեր եւ փնտռում:—Նա կորցրեց իր ընկերոջ:

4. Նա հայր ու մայր չունի:—Նա կորցրել եւ իր հորն ու մորը:

5. Ալսոր շատ շուն ծեծեցի:—Նա շանը ծեծեց:

6. Մի կով մորթեցին, մի յեզ:—Մեր կովն ու յեզը մորթեցին:

7. Նա խեղճ ծիուն շատ եւ ծեծում:—Մեր ծին դուզան:

8. Դու հավ մորթեցիր:—Դու հավը մորթեցիր:

9. Բանվորը փայտ եւ կոտորում:—Բանվորը փայտը կոտորեց:

10. Արամին սպանեց:—Գրիգորին բռնեց:—Մանուշին թակեց:

11. Մարդ բռնել, մարդու բռնել, մարդուն բռնել.—յերեխա ծեծել, յերեխայի ծեծել, յերեխային ծեծել.—

ընկեր սիրել, ընկերոջ սիրել, ընկերին սիրել.—մարդ լացացնել, մարդու լացացնել, մարդուն լացացնել, սարնըին ու թարերին լացացնել, սարեր ու քարեր լացացնել:—Հայր, մայր, քոյր, յեղբայր ճանաչել,—նորը, մորը, քրոջն ու յեղբորը ճանաչել:—Նա աղջիկ ունի, —նա աղջկան նշանեց:—Ամեն մի դպրոց իր վարիչը, իր գործավարը և տեխնիկական աշխատավորն ունի:—Բժիշկ հրավիրել.—քժշկին հրավիրել:—Զի թամբել, —ծին թամբել:

ՀԱՐՑԵՐ.— 1. Պարզեցնք այդ որինակներից—կրող լրացումը լեռը և ուղղական ձևով հայցական դրվում և լեռը՝ տրականի ձևով հայցական:

2. Կարելի՞ յե ասել—

1. Կովին մորթել, հավին մորթել, ձիուն սպանել, կատվին սպանել:

2. Եղին ցեխից հանել:— Գալլ վոչխարին կուտիւ կովին քշել:

3. Արամն սպանեց Սահակը:— Վաչիկը բռնեց Սիւրուշը:

4. Դուանը ծեծել:—ապակին ծեծել:—մեկի կարիքին բավարել:

Յեթե սխալ են, ապա ասացե՛ք ուղիղ ծեվերը:

ՎՈՐՈՇՈՒՄ 86. Յերք կրող լրացումը (լինի շնչավոր թե անշունչ) մտածվում է իբրեւ իր, պատասխանելով ինչ հարցին, այդ դեպքում դրվում Փ ուղղականակերպ հայցական կամ իրի հայցական. իսկ լեթե կրող լրացումը մտածվում է իբրեւ անձ, պատասխանելով ում հարցին, այս դեպքում դրվում է Տականակերպ հայցական (քար ջարդեց, —մարդ սպանեց—լնչ. —Սահակին սպանեց, —սարերին վողբացրեց—մւմ):

III. Թուն տրական հոլով

6. Դիտեցնք բուն տրական հոլովի կիրառումը ստորև բերված խոսքերի և որինակների մեջ.

1. Այս նամակը տուր Հայկին:—Այս գիրքը նվիրիր Սիրուշին:—Մենք պատահեցինք աշակերտներին:— Մենք մասնակցեցինք աշխատանքին:—Դու ցըտի սովոր ես:— Խղճացնք նրան:— Նա յեղաթը դաս ե տալիս — Հեռվից սելին ու սպիտակին ե տալիս, կարմրին ե տալիս:—Գլուխը տվեց պատին:

2. Կուշտը թաղցածին մանր կբրդի:—Վոտքին տեղ արավ, զլխին ել ուզեց:

3. Նա գիրքը մեկ ոութու ծախեց:— Նա մեկին հինգ ե աշխատում:

4. Զանգի օայնին աշակերտները գուրս թափվեցին:— Մեկի խոսքին խարվեց:

5. Մենք հավաքվեցինք ժողովի:— Դու գնացիր ջրի:— Նա գնաց ջնելու:

6. Նրա զլխարկ չկա:— Մատին մատանի չկա:— Մեջքին, ծեռքին, ճակատին:— Դու շատ ես ապրել նրա տանը:— Նա նստել ե բարձր բլրին, սարին, քարին, կտրին, ծառին, յեղերքին...

7. Ճանապարհորդը տեղ հասավ կեսորին:— Դու զար-նանն ես յեկել:— Փետրվարին ձյուն յեկավ:— Նա ծնվել է 1905 թվին:— Այս շոգին մեր ես գնում:— Նրա հար-սանիքին, ծննդին, տոնին, թաղմանը...

8. Դու ել նրա որին ես:— Մի խելքի մարդ եք:— Ես քո կարծիքին չեմ:— Քո պատկերին, կերպարանքին, ընդու-նակության, շնորհքին...

ՎՈՐՈՇՈՒՄ 87. Բան տրական հոլովը ցույց ե տա-լիս՝ այն առարկան, վորին մի քան տրվում ե, ուղղվում ե մի քան, վորի ոգտին կամ վնասին մի քան լինում ե, տեղն ու ժամանակը, ուր կա կամ լինում ե մի քան

ընկեր սիրել, ընկերոջ սիրել, ընկերին սիրել.—մարդ լացացնել, մարդու լացացնել, մարդուն լացացնել, սարերինու թարերին լացացնել, սարեր ու քարեր լացացնել:—Հայր, մայր, քոյր, յեղբայր ճանաչել,—նորը, մորը, քրոջն ու յեղբորը ճանաչել:—Նա աղջիկ ունի, —նա աղջկան նշանեց:—Ամեն մի դպրոց իր վածիշը, իր գործավարը և տեխնիկական աշխատավորն ունի:—Բժիշկ հրավիրել.—քժշկին հրավիրել:—Զի թամբել, —ձին թամբել:

ՀԱՐՑԵՐ. — 1. Պարզեցնք այդ որինակներից—կրոյ լրացումը յերբ ե ուղղական ձևով հայցական դրվում և յերբ՝ տրականի ձևով հայցական:

2. Կարելի՞ յե ասել—

1. Կովին մորթել, հավին մորթել, ձիուն սպանել, կատվին սպանել:

2. Եղին ցեխից հանել:— Գալլ վոչխարին կուտիւ կովին քշել:

3. Արամն սպանեց Սահակը:— Վաչիկը բռնեց Սիրուշը:

4. Դուանը ծեծել.—ապակին ծեծել.—մեկի կարիքին բավարել:

Յեթե սիալ են, ապա ասացե՛ք ուղիղ ձեվերը:

ՎՈՐՈՇՈՒՄ 86. Յերք կրող լրացումը (լինի շնչավորթե անշունչ) մտածվում է իջրեվ իր, պատասխանելով ինչ հարցին, այդ դեպքում դրվում Փ ուղղականակերպ հայցական կամ իրի հայցական. իսկ լեթե կրող լրացումը մտածվում է իջրեվ անձ, պատասխանելով ում հարցին, այս դեպքում դրվում է ՏՐԱԿԱՆԻԿԵՐՎ հայցական (քար ջարդեց, —մարդ սպանեց—բնչ. —Սահակին սպանեց, —սարերին վողբացրեց—մւմ):

III. Թուն տրական հոլով

6. Դիտեցնք բուն տրական հոլովի կիրառումը ստորև քերպած խոսքերի և որինակների մեջ.

1. Այս նամակը տուր չայկին:—Այս գիրքը նվիրիր Սիրուշին:—Մենք պատահեցինք աշակերտներին:— Մենք մասնակցեցինք աշխատանքին:—Դու ցըտի սովոր ես:— Խզացնք նրան:— Նա յեղարձը դաս ե տալիս — Հեռվից սելին ու սպիտակին ե տալիս, կարմրին ե տալիս:—Գլուխը տվեց պատին:

2. Կուշտը թաղցածին մանր կը դի:—Վոտքին տեղ արավ, զլիխին ել ուզեց:

3. Նա գիրքը մեկ ոուզլու ծախեց:— Նա մեկին հինգ և աշխատում:

4. Զանգի ծայնին աշակերտները գուրս թափվեցին:— Մեկի խոսքին խաբվեց:

5. Մենք հավաքվեցինք ժողովի:— Դու գնացիր ջրի:— Նա գնաց ընելու:

6. Նրա զլիխին զլսարկ չկա:— Մատին մատանի չկա:— Մեջքին, ծեռքին, ճակատին:— Դու շատ ես ապրել նրա տանը:— Նա նստել ե բարձր բլրին, սարին, քարին, կտրին, ծառին, յեղերքին...

7. Ճանապարհորդը տեղ հասավ կեսորին:— Դու գարնանն ես յեկել:— Փետրվարին ձյուն յեկավ:— Նա ծնվել է 1905 թվին:— Այս շողին մեր ես գնում:— Նրա հարսանիքին, ծննդին, տոնին, թաղմանը...

8. Դու ել նրա որին ես:— Մի խելքի մարդ եք:— Ես քո կարծիքին չեմ:— Քո պատկերին, կերպարանքին, ընդունակության, շնորհքին...

ՎՈՐՈՇՈՒՄ 87. Բօւն տրական հոլովը ցույց ե տալիս՝ այն առարկան, վորին մի քան տրվում ե, ուղղվում է մի քան, վորի ոգտին կամ վնասին մի քան լինում ե, տեղն ու ժամանակը, ուր կամ կամ լինում ե մի քան

(գիրքը տվեց Աշոտին, մոտեցավ Աշոտին, Աշոտին հա-
գուստ կարեցին, յես լեկա ապրիլին):

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 100. Խոսքեր կազմեցեք, վորոնց
մեջ տրականը ցուց տա:

- | | |
|--|------------------|
| 1. Այն առարկան, վորին մի բան տրվում է. | |
| 2. Գին կամ արժեք. | 5. Տեղ. |
| 3. Պատճառ. | 6. Ժամանակ. |
| 4. Նպատակ. | 7. Զեկ կամ կերպ. |

գ. Բացառական հոլով

7. Դիտեցեք բացառական հոլովի կիրառումը հետե-
մյալ որինակներում.

1. Ճանապարհորդը դուրս լեկավ զյուղից:—Նա լեկավ
այգուց, քաղաքից, սարից... Բոնեց նըտ զլխից, մազերից,
ձեռքից... Կապեց ծառից, պունից...

2. Անցյալ տարվանից այստեղ եմ:— Մի ամսից
կդամ:—Առավոտից իրիկուն, գյուղից քաղաք...

3. Մեկի աշքից ընկնել, խելքից հանել, հալից ընկնել...

4. Լավ-լավ քաներից խոսել ու պատմել:—Դեսից-
դենից խոսել:—Աշխարհից անտեղակ, ցավից գանգատվել:

5. Խելքից պակաս մարդ.—զրսից՝ քահանա, ներսից՝
սատանա.—հայերենից թուլ:—ուժերից վեր:

6. Նա խելովներից խելոք ե:—Նա ըուլորից լավ ե:

7. Սովից մեռավ:—վշտից մաշվեց:—ծայնից ճանա-
չեց:—համից, հոտից, գովնից իմացավ:

8. Դուք հաղթվեցիք մեզնից:—Ծառը կոտրվեց քամուց:

9. Այս հացից մի կիլո տներ, այս գինուց՝ լերկու-
շի:—միզնից լերկուսը գնացին, ծեզնից՝ չորսը:

10. Այս մեկը վոսկուց ե, այն մեկը՝ յերկաթից:—
փայտից պատրաստիր:

11. Նա հրաժարվեց պաշտոնից:—այս եմ պահանջում
նրանից:

ՎՈՐՈՇՈՒՄ 88. Բացառական հոլովը ցույց ե տալիս գործողության սկզբնակետը, այն առարկան կամ տեղն ու ժամանակը, վորից առնվում, բաժանվում, հեռանում կամ ծագում, առաջ ե գալիս մի բան:

ՎՈՐԾՈՒԹՅՈՒՆ 101. Կազմեցնք խոսքեր, վորոնց բացառականը ցույց տա՝

1. Տեղ.

2. Ժամանակ.

3. Նյութ.

4. Առարկան, վորից գործողությունն անցնում ե յենթակալի վրա.

5. Պատճառ.

6. Համեմատություն կամ բաղդատություն.

7. Առարկան, վորի մասին պատմում են:

դ. Գործիտկան նօլով

8. Դիտեցնք գործիական հոլովի կիրառումը ստորև բերած որինակներում.

1. Սղոցով կորեցի, ուրագով տաշեցի:—Մատիտով գրեցի, ուստինով ջնջեցի:

2. Մենք անցանք բլրի ստորոտով, բարձրացանք լանջով:—Զուրը հոսում ե առվով:—Ցերկնքով ամպեր են անցնում: Քո զլխով շատ բաներ անցան:

3. Դուք զիշերով աշխատում եք:—Որը ցերեկով ծեծեց նրան:—Ցերկու ժամով բացակացեց:

4. Նա շնորհքով տղա լե:—Համով, հոտով կերակուր:—Կաթնով վոչխար:—Ուժով մարդ:—Մրտով տղա:—Շեկ մազերով, ծով աշքերով:

5. Այդ գյուղը հինգ վերստով հեռու լե:

6. Նա ծագումով գյուղացի լե:—Լեզվով ճարտար ե:—Վոտքով կաղ ե:

7. Շաքարի կիլոն ութսուն կոպեկով գնեցի:—Մենյակն ամսական վեց ոուբլով վարձեցի:

8. Մարդիկ իրարով անցան: — Մտքովս անցավ: — Աղովը վիաթաթվել:

9. Գետինը ծածկվեց ծյունով: — Գետը ծածկվեց սառոցով:

10. Դու նրա խոսքով արիր: — Նրա սրտով լեղավ: — Բանն որենքով կանեն:

11. Մենք հնգով ել գնացինք զբոսանքի: — Դուք շորսով ել բացակա ելիք: — Յերեք հնգով գնացինք: — Ամբողջ խմբով, ամբողջ ընտանիքով, բոլոր ընկերներով...

12. Մենք մսով կերակուր ունենք: — Դուք բընձով քաշովի կերաք: — Յուղով փլավ, ծեթով փլավ, նավթով ճրագ, տախտակով տուն...

13. Մենք նրա հրավերով լեկանք: — Վերջին տեղեկություններով՝ նա հիվանդ եւ:

ՎՈՐՈՇՈՒՄ 89. Գործիական հոլովը ցույց եւ տալիս այն առարկան, վորով կամ վորի միջոցով, իրթեվ գործիքով, կամ միասնությամբ կատարվում եւ մի բան:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 102. Կազմեցեք խոսքեր, վորոնց մեջ գործիականը ցույց տա:

1. Գործիք, վորով մի բան անում են.

2. Տեղ.

3. Ժամանակ.

4. Վորակ.

5. Քանակ.

6. Գին և արժեք.

7. Միասնություն, միասին մի բան անելը.

8. Նյութ, վորից կազմված և մի առարկա.

9. Հիմունք:

Ե. Ներգոյական նօլով

9. Դիտեցեք ներգոյական հոլովի կիրառումը ստորև բերած որինակներում.

1. Մենք պարապում ենք դպրոցում: — Մենյակում աշխատում եմ: — Նրա զլիսում խելք չկա, աշքում լույս

Հլաւ: — Դաշտում բուսած ծաղիկ: — Քաղաքում ու գյուղում,
Ամերիկայում... ներքեսում, վերեսում...

2. Հինգ ժամում տեղ հասանք: — Մի տարում կվեր-
ջացնեմ:

3. Այդ լեզել ե անցյալ դարերում: — Մեր որերում
չեղափ:

4. Այս բանում դու հանցավոր ես: — Նկարելում լավ
ես: — Ուտելում, խմելում, յերգելում, աշխատելում...

(Նկարելու մեջ, յերգելու մեջ...):

ՎԱՐԺՈՇՈՒՄ 90. Ներգոյական հոլովը ցույց ե տալիս
այն առարկան, տեղը կամ ժամանակը, վորի մեջ մի բան
կամ լինում ե:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 103. Կազմեցնք խոսքեր, վորոնց
մեջ ներգոյականը ցույց տա՝

1. Տեղ. 2. Ժամանակ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 104. Ցույց տվեք՝ 1. բուն ուղղա-
կանը. 2. կոչական-ուղղականը և 3. հայցական-ուղղա-
կանը ստորև բերած որինակների ընդգծված բառերի մեջ.

1. Յեկ ինչու միայն նա յերգի, միայն նա,

Հովակիմը, Կարօն, Սաղամոնը, Մարգարը,

Կամ մի բիթլիսցի, վանեցի Պողոս.

իսկ նվաճը, Խուսա՞ւթը, Չունկ-Ֆո՞ւն,

վոր իրար ճանաչում են վաղուց...

... Կարող ե այսոր Տիբեթից

Թռչիլ Ռայուս, Պետրագրանդ, Բիրլիս...

... Բիթլիսից՝ Մարտի, Յերեվան,

Պեկին, Գանիբե, Չիկագո:

Ո՛, վաղուց ե աօխարհը դարձել

մի փոքրիկ-փոքրիկ փողոց...

2. Կանչեց աշխառով հրձիք.

— Բանվորներ ամբողջ աշխարհի, միացնք:

(Կարմիր Արև, «ԱՄԵՆԱՓՈԵՄ»)

3. Պրոլետարներ բոլոր աշխարհի, միացնք:

Գ. Գիշերն անցավ:— Գիշերն անձրեվ լեկավ:—
Մնաց մինչև գիշեր:— Շուտ անցիք, գիշեր:—
Աշոտը գրում ե:— Գնաց դեպի Աշոտը:—
Աշոտ, լեկ ալստեղ:— Նրա անունը Աշոտ ե:— Նրան
Աշոտ են կանչում:

Լոյսը հանգավ:— Յես լոյսը հանգցըի:— Լոյսը բաց-
վելուց հետո վեր կացանք:— Թուավ դեպի լոյսը:— Բաց-
վիք, ով լոյս:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 105. Ծովաց տվյալ՝ 1. քուն-տրակա-
նը, 2. սեռական-տրականը և 3. նայցական-տրականը
ստորեվ բերված որինակներում:

1. Անլոելի վշտում ե պղտոր ջուրը՝ իերեղի,
նրա ալիքն կանաչում ե մենակ շիրիմն իզիքի:
2. Յեվ միքանի ընկեր տղերք
ձորում, գետի յեզերէին,
փոս փորեցին ու սրտարեկ
նողին տվին հովվի դին:
3. Դու ինձ չես սիրում, չես սիրում ինձ պես...
զազուց, վաղուց ես դու ինձ մոռացել...
Ասում են՝ ուռին աղջիկ եր ինձ պես,
մում եր յարին, ու չեկավ նա տես:
4. Բազմած լուսնի նուրբ ողերին,
հովվի թեխն թռչելով,
փերիները սարի զիսին
հավաքվեցին գիշերով:
5. Ափսոս իգիթ քո յարին...
ափսոս եղ ծով աջերին...
6. Յեվ մութ այրերից մամոռու ժայռերի,
թավուտ ծմակի լոին խորքերից,
մանուկ հասակիս հնչուն ծիծաղի
արձագանզն ահա լսում եմ նորից:
Թնդում ե զգարթ աղմուկը բինի,
բարձրանում ե ծուխն իմ ծանոթ ուրթից...

(Կարմիր Արև, «ԱՆՑԻՇ»)

7. Բանվորի տղան յեկավ:—Պատահեցի մի բանվորի:—Հանձնեցի մի բանվորի:—Հանձնեցի այն բանվորին:—Կողոպտեցին մի բանվորի:—Կողոպտեցին այն բանվորին:—Բանվորի հագուստը... բանվորի անունը... բանվորի պես.... բանվորի մոտ...

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 106. Արտագրեցե՞թ, ամեն մի զոյականի (անվան և դերանվան) վրա նշանակելով իր հոլովն՝ ըստ ձեվի և ըստ նշանակության (բուն ուղղական=ը. ու.՝ կոչական=ուղղական=կ. ու.՝ հայցական=ուղղական=հ. ու.՝ բուն տրական=ը. ու.՝ սեռական=տրական=ս. ու.՝ հայցական=հ. ու.՝ բացառական=ը. գործիական=զ. ներգոյական=ն.).:

1. Երծաղախիտ Վանա ծովի
փոքրիկ զյաւղից առափնյա
ծովն և մանում գաղտագողի
ամեն զիօնը մի տղա:
Ծովն և մանում առանք նավակ,
բազուկներով առնացի
զուրբ ճողփում, լող և տալի
դեպի կղզին դիմացի:

Սիրուն թամարն ամեն զիօնը՝
այնպես կրակ և անում
և ըսպասում և անհամբեր
այնտեղ՝ մոտիկ դարանում,
Ծփում և ծովն ալեծածան,
ծփում և սիրուց տղի,
գոռում և ծովն ահեղաձայն,
նա կովում և կատաղի:

(Կարմիր Արև, «ԱԽԹԱՄԱՐ»)

2. Նայիր, դատրի՛կ իշխանագուն,
այս բազերին լայնալանջ,
այժմ պիրուի հանդես դուրս գան,
պայքար մանեն բո առաջ՝
մեկը իրեն ուժը ցույց տա,
մյուսը օնորնեն իր բազիի,
վորը ճարպիկ ծիառավիք,
վորն ել բափր իր բազիի:
Իսկ յերբ կորիվն առնի դադար,
հայտնի լինեն բազն ու վատ,
ու յերբ անցնեն մեր առջեվից
կտրինները պայտատ,
ընտրիր, զարկիր ձեռքիդ խնձորն

անհաղթներից անհաղթին,
վոր վողջ աշխարհ մայիլ մնա
անզուգական բա բախտին.

(Կարմիր Արև, «ՓԱՐԱՆԱՆԱ»)

Դ. ԿԱՊԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

(Նախադրություն յեվ նետադրություն)

§ 88. Դիտեցե՛ք կապերը (իսկական յեվ անխակական) յեվ ասացե՛ք՝ վո՞ր կապից հետո կամ առաջ ի՞նչ հոլով ե դրվում այն բառը, վոր կապի միջոցով իբրև ինուիլ կապվում ե մի ուրիշ բառի, գլխավորապես բայի հետ:

1. Թռչում ե հոգիս, թռչում դեպի տուն:
2. Հանգիստ կաց, Անուշ, դու հասած աղջիկ՝
Բնչ ունիս ջահել չորանների մոտ:
3. Դուրս յեկավ թեթև ամպերի տակից
Անուշը՝ փախած յեղնիկի նման:
4. ծաղիկ են քաղում,
ծաղկի նետ խաղում ինչպես թիթեռներ:
5. Դե հանիր, աղջիք, վիճակն ի բարին:
6. Սիրտդ մի կոտրի սուտ բանի համար:
7. Աչքերի առջեվ մլարը պատեց:
8. Խնդրում եր՝ լալով յեղբոր առաջին
անզոր ու դալուկ իր քույրը չոքած:
9. Մինչեվ դաստակը սիրտդ եմ խրելու:
10. Տղերքը դեպի քարափն են վազում:
11. Սարեր ու ձորեր վոտնատակ տվեց՝
չորան Սարոյին գտնելու համար:
12. Քաղվոր կանանց մեջ, մթան նետ, թագուն...
Անուշը ձորից յեկավ հորանց տուն:
13. Դուք ել ինձ նետ ձեն տվեք:
14. Խնջպես փոթորիկ սաստիկ սրընթաց
գյուղից սլացան մի խումբ կտրիներ:

15. Առանց նայելու մարդկանց յերեսին,
առանց խոսելու, սեակնած, դաժան,
մոտեցավ սրահին, կախ տվավ սնին
և հրացանը՝ սև ոձի նման:

16. Վողբացին անշունչ դիակի վրա,
անտեր մնացած վոչխարի մասին:
Յել նրա մասին, վոր ընկերները
հանդը գնալիս Սարո կկանչեն...

17. Ծառս յեղավ դուշման յերկնքի դիմաց:

(Կարմիր Աբե, «ԱՆՌԻՇ»)

18. Ի գիտություն հայտնել.—ի պատիվ քո.—ցտե-
սություն, որեցոր, ցնոր կարգադրություն.—դեմ առ դեմ,
տող առ տող.—առալժմ.—դեպի տուն, —դեպի նա, —դեպի
քեզ, —դեպի ինձ, —դեպի վորդին.—մինչեվ այսոր, —մինչեվ
դուզ, —մինչեվ այգին.—ըստ որենքի, —ըստ Արամի, —
ըստ լրադրի.—ընտանիքով հանդերձ, —այս անելով հան-
դերձ.—այն որից իվեր.—ինձ համար, քեզ համար, զուր
բանի համար.—առանց ինձ, —առանց քեզ, —առանց Ջրի.—
բացի ինձնից, —բացի քեզնից, —բացի Ջրից, —բացի այս, —
բացի այդ. —ավելի լավ բան այդ:

19. Ինձ պես, —քեզ պես, —մարդու պես, —թրի պես.—
ինձ շափ, —քեզ շափ, —մարդու շափ, —յերկու հազարի
շափ. —աչքը շինելու տեղ, —նրա տեղ. —ինձ հետ, —քեզ
հետ, —հոր հետ, —լուսը բացվելու հետ, —յես ծանոթ եմ
նրա հետ, —յես ծանոթ եմ Թրիգորի հետ (փոխադարձ ծա-
նոթություն—նա ել ինձ ե ծանոթ). —յես ծանոթ եմ նրան,
յես ծանոթ եմ Թրիգորին, յես ծանոթ եմ պատության,
դրականության (վոչ փոխադարձաբար). —հետս, հետդ, հե-
տինս, հետինդ. —սրա դեմ, —զբքի դեմ, —յերեկոյան դեմ.—
ինձ մոտ, —քեզ մոտ, —գյուղի մոտ, —լուսանալու մոտ.—
ինձ վրա, քեզ վրա, սեղանի վրա, այս խոսքի վրա, ծի-
ծաղել մեկի վրա, —խոսք խոսքի վրա, —վրա յերկրորդ
որը:

Ե. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

§ 89. 1. Կարունը յեկավ, հավիերը յեկան,
սարեր ու ձօրեր ծաղիկներ հազան.
մի աղջիկ յեկավ, մի մենակ քաղվոր,
գետի յեղերքին օրդում և մոլոր...

(Կարմիր Արև, «ԱՆՌԻՇ»)

2. Կոմմունա, կոմմունա Պարիզյան,
հոծ բանվորների յերգն և զողանջում.
ծաղկած մարտ ամսին՝ Մոն Մարտրի զրանիտ
դուրս պրծած մեջքին օանք և սլանում
ու վորոտ լովում.
Յեկ ցածրում ներքեւ ալ դրոշակների
խթա անտառ. ծլեց գարնան բոցերով:

(Կարմիր Արև, «ԿՈՐՄՄՈՒՆԱՅԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ»)

ՎՈՐՈՇՈՒՄ 91. Յենթական յեկ քայը թվով ու դեմ-
քով համաճայում են. յեզակի յենթակայի հետ յեզակի
քայ և դրվում, հոգնակի յենթակայի հետ՝ հոգնակի քայ
(որ՝ գարունը յեկավ, հավքերը յեկան):

§ 90 ա) 1. Ու դրդացին արձակ կրկեսում սփոր ու գօսւնջ,
հազիվ լսելի խառնակ աղաղակ ու դժգոհ տրտունջ...

(Կարմիր Արև, «ԴԵՑԻՄ ԼԱՅԵՐԻՈՍ»)

2. Ու իբր բռնած Սարս ու Մասին՝
բառում են, ընկնում խողապառկուկի.
ընկնում են գետին, յելնում միասին,
դժվար և իբր հաղթել մեկ-մեկի:

(Կարմիր Արև, «ԱՆՌԻՇ»)

ՎՈՐՈՇՈՒՄ 92. Յեթե միյեվնույն նախաղասովմյան
մեջ մեկից ավելի (բազմակի) յեզակի յենթակա կա, այդ
դեպքում քայը հոգնակի յե դրվում (որ՝ Մարտն ու Մո-
սին քաշում են):

§ 90 բ). Նրանց լավն ու վատը չի իմացվում, մեծ
ու փոքրը չի ճանաչվում:—Լացն ու կոծն անվերջ լսվում ե:
Ուշըն ու միտքը վրան չի, չափ ու սահման չկա...

ՎՈՐՈՇՈՒՄ 93. Յեթե միեվնույն նախադասության մեկից ավելի յեզակի յենթակաները հոմանիշ բառեր են (լազն ու կոծը), կամ վորեվե առօնչությամբ միասին են գործածվում իջրեվ մի բառ, այդ ղեպքում բայց սովորաբար յեզակի յե դրվում (չափ ու սահման չկա):

§ 91. Աշակերտությունը դուքս յեկավ դպրոցի բակից: Բազմությունը խոնվել եր փողոցներում: Ժողովուրդն ուրախ բացականչություններ եր անում: Տոնակատար հանձնաժողովն ամեն ինչ ծրագրել եր...

ՎՈՐՈՇՈՒՄ 94 ա). Հավաքական իմաստ ունեցող յեզակի յենթակայի բայց յեզակի յե դրվում (աշակերտությունը դուքս յեկավ):

§ 92. Այս դպրոցում տասներկու դասարան կա: ամեն մի դասարանում քսան նստարան կա: Այստեղ չըսս հարյուր ութսուն աշակերտ ե սովորում:

ՎՈՐՈՇՈՒՄ 94 բ). Յեթե յեզակի յենթական մեկից ավելի թիվ ցուց տվող ածական ունի, բայց մեծ մասամբ յեզակի յե զրվում (քսան նստարան կա):

§ 93. Յեզ մուք այրերից մամոռու ժայռերի,
բավուտ ժմակի լոին խորքերից
մանուկ հասակիս նեղուն ծիծաղի
արձագանգն ահա լսում եմ նորից:
Թնդում ե զվարք աղմուկը բինի,
բարձրանում ե ծուխն իմ ծանոթ ուրթից,
ու բոլորն ահա, նորից կենդանի,
յելնում են աշխույժ վաղօրդյան մութից,
ու բարմ, ցողապատ լեռների լանջում...
Սուս... ականջ արա,—հովիմն ե կանչում...

(Կարմիր Արև, «ԱՆՌԻՇ»)

ՎՈՐՈՇՈՒՄ 95. Գոյական անունն ու իր առջեվից դրված ածական կամ գոյական լրացումները թվով ու հո-

լովով չեն համածայնուա (մութ ալը, մութ ալըի, մութ ալըից... մութ ալըեր, մութ ալըերի, մութ ալըերից...քար սիրտ, քար սրտի... քար սրտեր, քար սրտերի...)։

§ 94. Քառութեան կույս աղջիկ բերեք արժադան,
Քառութեան կարճ կեիկ, վոր յերկանք աղան...
Հազար հազար մարդ նորելուկ մանուկ,
հազար հազար մարդ անքեղ, անմորուք,
հազար հազար մարդ բեղը նոր ծլած,
հազար հազար մարդ թախտից նոր յելած...
(Կարմիր Արև, «ՍԱՍՈՒՑԻՑԻ ԴԱՎԻԹԸ»)

ՎՈՐՈՇՈՒՄ 96. Մեկից ավելի թիվ ցուց տվող լրացումների գոյականները սովորաբար յեզակի յեն դրվուա (հազար հազար մարդ, յերկու գիրք, հարյուր մանեթ, քսան մարդ, հինգ պետություն)։

§ 95. Հինգ յերկար ու ձիգ տարիներ են անցել ալրից, հազար ու մի դժբախտություններ յեկել են ու անցել։

ՎՈՐՈՇՈՒՄ 97. Եեթե լրացումն առանձնապես շեշտում ե շատության զաղափարը, կամ թե անվան ու թվական բառի միջնվ ուրիշ բառեր կան, անոնց կազող ե հոգնակի դրվել։

Զ. ՎՈՐՈՇՈՒՄ ՀՈԴԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

§ 96. 1. Յեվ ինչու միայն նա յերգի, միայն նա.—
Հովակիմը, Կարոն, Սողոմոնը, Մարգարը...
Իսկ իվանը, Յուսուֆը, Զունկ-Ֆունեն...
(Կարմիր Արև, «ԱՄԵՆԱՊՈԵՄ»)

2. Արշակն ու Տիգրանն առաջից ելին գնում, իսկ Զավենը, Սիսակն ու Վաչիկը՝ յետեից;—Հեռվից յերեսում ելին Յերևանն ու Քանաքեռը;—Շուտով ճանապարհորդները տեսան իրենց մյուս ընկերներին՝ Մկրտչին ու Միքայելին։

ՎՈՐՈՇՈՒՄ 98. Հատուկ անունները, նույնիսկ առանց վորոշող վերադրի, ըստ ինքյան վորոշ են, ուստի յեվ վորոշող հողով են գործածվում:

§ 97. Կովը, ձին, վոչխարը, գոմեշն ընտանի կենդանիներ են: — Առյուծը, վաղրը, բորենին գազաններ են: — Ցերկաթը, պղինձը, արծաթը, վոսկին մետաղներ են: — Այս տարի դորենն առատ ե, բրինձը՝ սակավ:

ՎՈՐՈՇՈՒՄ 99. Առարկայի սեռ կամ տեսակ ցուց տվող հասարակ անունները, առանց վորոշող վերադրի, գործ են ածվում վորոշող հողով:

§ 98. Մի անգամ հեռվից մի ոտարական յեկավ ալդտեղ: Ոտարականը տարորինակ բաներ եր պատմում իր ահսած յերկրի մասին: —

Որը մթնեց: — Գիշերը վրա հասավ: — Ցերկինքն ամպեց:

ՎՈՐՈՇՈՒՄ 100. Խոսողին առաջոց ծանոթ կամ խոսքի մեջ մի անգամ արդեն հիշված առարկայի անունը վորոշող հողով ե գործածվում, յեթե նույնիսկ վորոշող վերադրի շունի:

§ 99. 1. Ես վոր պատահեց, մեր Դավիթ հսկան
մի մանուկ եր գեռ յոթ-ութ տարեկան...

2. Սասմա սարերից շատ ու շատ հեռու
թնդում եր նրա հոչակն ահարկու...

3. Բայց հիմի, յերբ վոր յեկալ ծերացավ,
են անահ սիրտը ներս սողաց մի ցավ...

4. Մի ժառանգ չունեմ՝ իմ անցման յետե
իմ թուրք կապի, Սասուն պահպանի...

ՎՈՐՈՇՈՒՄ 101. Վորոշող վերադրի ունեցող անունները վորոշող հողով են գործ ածվում:

Վորոշող վերադրի լինում են՝

ա) հատուկ անունները յեվ սեռի իմաստով գործածված հասարակ անունները (Դավիթ հսկան, Դավիթ թագավորը, Աշուղ Զիվանին, մարտ ամիսը).

բ) ցուցական ածական դերանունները (են անահ սիրտը, ալս գիրքը, այդ գիրքը, այն գիրքը).

գ) ստացական ածական դերանունները (իմ թուրը, քո թուրը, նրա թուրը, մեր, ձեր, նոցա, իրենց):

§ 100. Ծերունի Ոհանը յերկու վորդի ուներ. մեծը (մեծ վորդին) արհեստով եր պարապում, իսկ փոքրը (փոքր վորդին)¹ յերկրագործությամբ:

Իմ մատիտը տամ, քոնը (քո մատիտը) տուր:—Սպիտակ բլուզը հանեց, սեղ (սև բլուզը) հագավ:

ՎՈՐՈՇՈՒՄ 102. Յերբ վորեվե գոյական անոն խոսքից դուրս ե ընկնում կամ զեղչվում ե, կրկնություն շանելու համար, այդ դեպքում անվան ածական կամ ստացական վերադիրը ը կամ ն հոդով ե գործածվում:

Յեթե ստացական վերադիրը ճայնավորով ե վերջանում, կրկնակի հոդով ե վերջանում (քոնը, նրանը, Արշակինը):

§ 101. Յերեվան քաղաքը գտնվում ե Հրազդան գետի ափին:—Գիտես, Ա'րշակ, թե Պողոսն ուր ե:—Լսիր, հո՛րեղայր, քեզ ե կամչում նա:—Այսոր մենք Թիֆլիս հասանք:—Գնանք մեր տուն:—Այս շաբաթ այստեղ կլինի:—Ճանապարհորդները հինգ կիլոմետր գնացին:—Սոխակի դալլալը լսվում ե հեռվից:—Վահանի գրվածքը լույս ե տեսել:—Յես գրում եմ քո մատիտով:—Քո գրքից... քո գրքում... Մենք տանօ ու խնօրը գնեցինք:—Ծղա, աղջիկ, մեծ ու փոքր, բոլորն եցսկուրսիա գնացին...

ՎՈՐՈՇՈՒՄ 103. Նշանակությամբ վորոշ գոյականները վորոշող հոդ չեն առնում, յերբ գործ են ածվում՝ իջրեվուղղական վերադիր (Յերեվան քաղաք), կոչական (գիտես, Ա'րշակ), տեղի հայցական (Թիֆլիս հասանք), ժամանակի հայցական (այս շաբաթ այստեղ կլինի), շափ ու քանակի հայցական (հինգ կիլոմետր գնացին), սեռական վերադիր (սոխակի դալլալը, Վահանի գրվածքը), բացառական,

գործիական ու ներգոյական հոլովներով (իմ գրքով(ը), գրից(ը), գրքում(ը)):

Խոսքին ուժ տալու համար թվարկվող բառերը նույնպես անհող են գործածվում (տղա, աղջիկ, մեծ ու փոքր... զնացին):

Ե. ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

§ 102. Դիտեցե՞ք բառերի դասավորությունը խոսքի մեջ յեվ որենքներ հանեցե՞ք.

1. Յերեկ առավոտյան մեր պարտիզում Գրիգորենց Արամը մեր բարձր խնձորենու ճյուղը կոտրել ե (սովորական շարադասություն):

2. Յերեկ առավոտյան ե մեր պարտիզում Գրիգորենց Արամը մեր բարձր խնձորենու ճյուղը կոտրել (և վոչ թե, որինակ, յերեկոյան):

3. Մեր պարտիզում ե Գրիգորենց Արամը յերեկ առավոտյան մեր բարձր խնձորենու ճյուղը կոտրել (և վոչ թե, որինակ, ձեր պարտիզում):

4. Գրիգորենց Արամն ե յերեկ առավոտյան մեր պարտիզում մեր բարձր խնձորենու ճյուղը կոտրել (և վոչ թե, որինակ, Մկրտիչը):

5. Մեր բարձր խնձորենու նյուղն ե յերեկ առավոտյան մեր պարտիզում Գրիգորենց Արամը կոտրել (և վոչ թե տանձի) և այն:

ՎՈՐՈՇՈՒԻՄ 104. Սովորական շարադասության ժամանակ խոսքի մեջ բայն ամենից վերջն ե դրվում, իսկ բայի լրացումները բայից առաջ են դրվում. ամեն մի լրացման լրացում առաջից դրվում ե այն բառի վրա, վորի իմաստն ինքը լրացնում ե: Յուրաքանչյուր խոսք ունի իմաստի շեշտ, վորի փոփոխութից կախում ունի բառերի այս կամ այն տեսակի դասավորությունը խոսքի մեջ (ինչպես յերեվում ե վերը բերած որինակից):

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 107. Խնջներդ խոսքեր կազմեցե՛ք յեվ իմաստի շեշտի համապատասխան փոփոխեցե՛ք բառերի շարադասությունը:

Սովորակա՞ն ե, արդյոք, բառերի դասավորությունը հետեւյալ խոսքերի մեջ. յեթե սովորական չի, ինքներդ սովորական ծեվով դասավորեցե՛ք.

- | | |
|---------------------------|--|
| 1. Մփում ե ծովմ ալեծածան, | 2. Միայն ալիքը Վանա ծովի
ծփում ե սիրաը տըղի. |
| գոռում ե ծովմ ահեղաձայն, | մեղմ դիպչում են ափերին,
ոտ կովում ե կատաղի... |
| | հրհերով հեռանում են
շըշունջներով անմեկին. |

(Կարմիր Արև, «ԱՂԹԱՄԱՐ»)

ՎՈՐՈՇՈՒՄ 105. Բառերի սովորական շարադասության փոփոխած, շուտ տված ծեվը ցըզում ե կոշվում (ալիքը Վանա ծովի=Վանա ծովի ալիքը):

Ուղղեցե՛ք հետեւյալ խոսքերի մեջ շնչումները.

1. Զեր լավում այնտեղ սուլոցը շոգեմեքենալի և վոչ ել արշալուսվող առավոտի հետ՝ կանչերը գործարանների... Անծանոթ եր նրանց աղմուկն ու ժխորը մեր հսկաքաղների:

(Կարմիր Արև, «ԱՆՀԱՎԱՍԱՐ ԿՈՒՎԱՅ»)

2. Այնտեղ այսոր կանգնել են քաղաքները վիթխարի, գործարանները հսկա, ծխնելուզները յերկնաձիգ, մեքենաներն աղմկոտ... Մեքենաները հսկա, ճշտապահ, սրտերում շոգի ու կրակ, առած ծանրությունն աշխարհի, անցնում են ծովեր ու ցամաքներ, անցնում են լեռներ ու անդունդներ վիթխարի... Մեքենաներն ամեհի, վոր ցանցել են յերկրի գունդը հնամի...

(Կարմիր Արև, «ՄԵՔԵՆԱՆԵՐՆ ՈՒ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՐԴԱՅ»)

VII. ԱՍԱՑՎԱԾ ՅԵՎ ԽՈՍՔԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ. ԼՐԱՑԱԿԱՆ ԽՈՍՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ԱՍԱՑՎԱԾ ՅԵՎ ԽՈՍՔԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԲԱՐԴ ԱՍԱՑՎԱԾԻ ՄԵԶ

§ 103. Աշակերտը գնաց տուն՝ իր դասը պատրաստելու համար:

Աշակերտը գնաց տուն, վոր իր դասը պատրաստի:
Այս յերկուսը ասացվածներ են. ամեն մեկը մի լրիվ,
ամբողջական միտք ե հայտնում:

Ասացվածի վերջը վերջակետ ե դրվում:

ՎՈՐՈՇՈՒՄ 106. Լրիվ արտահայտված միտքը կոշվում ե ասացված: Յեթե ասացվածը կազմված ե մի խոսքից, կոչվում ե պարզ ասացված (ինչպես առաջին որինակը, վորի մեջ մի բայ կա— գնաց): Խոկ յեթե ասացվածը կազմված ե յերկու կամ ավելի խոսքերից, կոչվում ե բարդ ասացված (ինչպես յերկրորդ որինակը, վորի մեջ յերկու խոսք կա և յերկու բայ— գնաց, պատրաստի):

Վորպեսզի իմանանք, թե բարդ ասացվածի մեջ քանի խոսք կամ նախաղասություն կա, պիտի հաշվենք դիմավոր քայերը:

Չպիտի մոռանալ, վոր բայը կարող ե դրված Աինել (զեղզվել), բայց զորությամբ հասկացվել. այդ բայերն ել պետք ե հաշվել:

ԿԱՆՈՆ 38. Ամեն մի ասացվածի վերջը վերջակետ ե դրվում: Դրելիս ամեն մի ասացված մեծատառով ե սկսվում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 108. Հաշվեցեք, թե ստորեվ քերած ասացվածներից յուրաքանչյուրի մեջ քանի խոսք կա յեվ, արտազրելիս, ամեն մի ասացվածի դիմացը նշանակեցի՞ք.

Ընթերցաբանը բաց եր. հաճախորդները նստած կարգում ելին (2):— Սուրբիկն առավոտան վաղ վեր կացավ, շտապ նախաճաշ արավ, գրքերը վերցրեց ու դպրոց

գնաց: — Աշխորհուրդն ալսոր նիստ ունի. որակարգում միքանի հարցեր կան, վորոնցից ամենազլիսավորը դպրոցական կոռպերատիվ կազմակերպելու հարցն ե: — Լուսը նորեր բացվել, յերբ Աշոտը վեր կացավ, զգեստները հագավ, լվացվեց, նախաճաշելուց հետո քաղերն ուղղեց դեպի դպրոց, ուր հավաքվելու յեր ամբողջ աշակերտությունը՝ դպրոցական եքսկուրսիալի համար. յեղանակը բավականին նպաստավոր եր՝ յերկինքը պարզ եր, արևի ջերմությունն՝ ախորժելի:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 109. Պարզեցե՞թ, թե ստորեվ ըերածքարդ ասացվածների մեջ խոսքերն ի՞նչ հարաբերություն ունեն իրար հետ. արդյոք, նրանք քերականորեն իրարից անկա՞խ են, թե՞ խոսքերից մեկը մյուսի լրացումն ե դառնում:

1. **Մենք** գնացինք տուն և մեր դասերը պատրաստեցինք: — Տիգրանն ալսոր հիվանդ եր, ուստի նա դասի չեկավ: — **Մենք** ալստեղ կարդում ենք, իսկ դուք այդտեղ գրում եք: — Ահա յեկավ Վազգենը. նա գյուղ եր գնացել:

2. **Մենք** գնացինք տուն, վոր մեր դասերը պատրաստենք: — Վորովինետև Տիգրանն ալսոր հիվանդ եր, ուստի նա դասի չեկավ: — Եերբ մենք ալստեղ կարդում ենք, այն ժամանակ դուք այդտեղ գրում եք:

ՎՈՐՈՇՈՒՄ 107. ա) Բարդ ասացվածի մասերը կազմող խոսքերը կարող են քերականորեն իրարից անկախ լինել այսինքն, մեկը մյուսի յենթական կամ այլ տեսակի լրացումը չլինել յեվ առանձին վերցրած՝ որույն միտք արտահայտել (ինչպես վերեկ առաջին չորս խոսքերը). Բարդ ասացվածի մեջ խոսքերի այդ տեսակ կապակցությունը կոչվում ե նսիմաղասական կապակցություն:

բ) Բարդ ասացվածի մասերը կազմող խոսքերը կարող են քերականորեն իրարից անկախ չլինել, նրանցից այս կամ այն կարող ե ծառայել մի որիշ խոսքի համար իրերեվ լրացում (որ՝ յենթակա, կրող լրացում, տեղի պա-

բագա և ալին) յեվ, այդպիսով, ուրույն միտք չարտահայտել, այլ ստորադասվել մի ուրիշ՝ ուրույն կամ անկախ միտք արտահայտող խոսքի (ինչպես վերենի յերկրորդ չորս որինակները). բարդ ասացվածի մեջ խոսքերի այդ տեսակ կապակցությունը կոչվում է ստորադասական կապակցության մեջ ուրույն կամ անկախ միտք արտահայտող խոսքը կոչվում է զիխավոր խոսք կամ նախադասություն, իսկ սրա միտքը լրացնող, իբրև լրացում ծառայող խոսքը կոչվում է յերկրորդական կամ լրացական խոսք:

1. Համադասական կապակցություն

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 110. Կազմեցեք բարդ ասացվածներ, վորոնց խոսքերը կապված լինեն՝

1. յեվ շաղկապով (որ.՝ յես գնացի և վերադարձա).
2. ու » (տեղ հասանք ու յետ դարձանք).
3. ել » (յես ել գնացի, դու ել գնացի՛՛).
4. մանավանդ շաղկապով (յես սոված եմ, մանավանդ սաստիկ հոգնած եմ).
5. վոչ միայն--այլեվ շաղկապով (վոչ միայն մութե, այլև ցուրտ ե).
6. թե—թե շաղկապով (թե կերել եմ և թե խմել).
7. յե՛վ—յե՛վ » (և կերել եմ, և խմել).
8. վորը—վորը » (վորը տանն ենստած, վորը՝ պարտիզում).

9. կա վոր—կա վոր շաղկապով (կա վոր քաղցր. ե, կա վոր՝ թթվաշ).

10. նախ—ապա—վերջապես շաղկապով (նախ, հայինել ես, ապա, ծեծել ես), վերջապես՝ նրա դանակը թռցրել ես).

11. այսինքն, այն ե շաղկապով (գյուղում յերեք շերտավորում ե առաջացել, այն ե՝ չքավորների, միջակների և կուլակների).

12. ուստի, հետեվաբար շաղկապով (դու չես աշխատում, ուստի չես առաջադիմում)։

13. վոչ թե—այլ շաղկապով (վոչ թե պիտի խաղաս, այլ պիտի պարապես)։

14. կամ—կամ շաղկապով (կամ պիտի խաղաս, կամ պիտի պարապես)։

15. թե շաղկապով (որ՝ դու պիտի կարդաս, թե գրես)։

16. սակայն, այնուամենայնիվ, բայց յեվ այնպես շաղկապով (հիվանդ եմ, բայց և այնպես կկատարեմ)։

17. բայց, բայց յեվ այնպես շաղկապով (նա պիտի գար, բայց չեղավ)։

18. իսկ շաղկապով (յես կարդում եմ, իսկ դու գրում ես)։

19. մինչդեռ շաղկապով (դու նոր ես վեր կենում, մինչդեռ այժմ դպրոցում պիտի լինելիք)։

20. թե վոչ շաղկապով (պետք ե գնանք, թե վոչ կուշանանք)։

Այս տեսակի կապակցությունները նամադասական են. այդ ասացվածների մեջ խոսքերը քերականորեն իրարից անկախ են, մեկը մյուսի լրացում չեն դառնում:

ԿԱՆՈՆ 39. Համադաս, մոտքերով միմյանց մոտիկ խոսքերը իրարից բաժանվում են ստորակետերով։ Համադասական յեվ, ու շաղկապներից առաջ ստորակետ չի դրվում, յեթե նրանցով կապվող խոսքերի յենթական նույնն ե (որ՝ յես գնացի և նրան տեսա կամ յես գնացի ու նրան տեսա)։ Յենթակաները տարբեր լինելու դեպքում, ստորակետ դրվում ե (որ., յես գնացի, և դու յեկար— նստած ես, ու քո միտքն ուրիշ տեղ ե)։

ԿԱՆՈՆ 40. Յեթե յեվ, թե շաղկապները կրկնվում են բոլոր համադաս խոսքերի կամ խոսքի հարանման իւմաստով լրացումների սկզբում, այս շաղկապներից առաջ դրվում ե ստորակետ, իսկ շաղկապների վրա կարող ե

շեշտ դրվել (որ՝ և յես, և դու, և նա հանցավոր ենք:— ՅԵԳ հուզվում եմ, և լալիս):

ԿԱՆՈՆ 41. ՅԵՐԲ կամ շաղկապը բացադրական նշանակություն ունի, առաջից ստորակետը չի դրվում (որ՝ Մասիսը կամ Արարատը բարձր սար ե):

ԿԱՆՈՆ 42. ՅԵՐԲ համակաս խոսքերից յերկրորդի մեջ բայց զեղջվում ե, բութ ե դրվում (որ՝ Աշոտը ՅԵՐԵՒԱՆ ե գնում, իսկ Հուսիկը՝ Քանաքեռ):

2. ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԿԱՊԱԿցՈՒԹՅՈՒՆ

§ 104. 1. Աշակերտը մտավ գրախանութ, վոր գիրք գնի:

2. Աշխորհդի անդամները հավաքվեցին, վոր ժողով անեն:

3. Գյուղացին արտը գնաց, վոր ցորենը հնձի:

Պատասխանեցե՛ք հետեւյալ հարցերին.

1. Ինչու աշակերտը գրախանութ մտավ:

2. Աշխորհդի անդամներն ինչու հավաքվեցին:

3. Գյուղացին ինչու գնաց արտը:

Ցույց տվե՛ք, թե առաջին ասացվածի մեջ վնր նախադասությունն ե ուրույն միտք արտահայտում և վնրը իբրեւ լրացում ծառացում:

Կարելի՞ յե միայն այսքանն ասել՝ աշակերտը մտավ գրախանութ:

ԿՈՐՈՇՈՒՄ 108. Լրացական խոսքերն, առանձին վերցըրած, թերի յեն, ուրույն միտք շունեն. նրանք մի ուրիշ խոսքի համար ծառայում են իբրեւ լրացում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 110. Կազմեցե՛ք բարդ ասացվածներ՝ վերեւ ըերված 3 ասացվածների որինակով: Ծնկց տվեք

ձեր կազմած ասացվածների գլխավոր (ուրույն միտք արտահայտող) և յերկրորդական (լրացական) մասերը:

Ի՞նչ շաղկապով են կապվում այդ խոսքերը:

§ 105. Աշակերտը մտավ գրախանության գիրք գնիչ Գլուղացին արտը գնաց՝ ցորենը հնձի:

ԿԱՆՈՆ 42. Յեթե ստորադասական կապակցության վոր շաղկապը (չշփոթեք վոր հարաբերական կամ շաղկապական դերանվան հետ) զեղջվում ե, այդ դեպքում զեղջված շաղկապի փոխարեն բութ ե դրվում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 111. Ինքներդ կազմեցեք նման ասացվածներ յեվ վոր ստորադասական շաղկապը զեղջեցնեք ու գրի՝ առեք:

Պարզեցեք, թե այդ կապակցության լրացական խոսքը պիսավոր նախադասության վոր բառի իմաստն ե լրացնում կամ վոր բառի լրացումն ե դառնում և ինչպիսի լրացում. նրա ի՞նչ թերին ե լրացնում:

Յեթե միայն ասենք՝ աշակերտը մտավ գրախանությունը, — արդյոք, կիմանմանք, թե աշակերտն ինչու մտավ գրախանությունը:

ՎՈՐՈՇՈՒՄ 109. Այն լրացում խոսքը, վոր լրացնում ե զինավոր նախադասության բայի գործողության նպատակի պարագան, կոչվում ե՝ յերկրորդական նպատակի պարագայական նախադասություն:

Ցուց տվեք նպատակի պարագայական խոսքը.

- Կարծես հրաշունչ վիշտապի նման,
ուզում են շնչել ու իրենց քարշել
անհուն բարձունքից փայլուն աստղերը,
վոր նրանց թաղեն մշուշ ծիլ մեջ.

(Կարմիր Արև, «ԳՈՐԾԱՐԱՆ»)

- Վերջը տեսավ, վոր ճար չելավ,
թեր առավ, ինքն ել փախավ,
փախավ, կորավ, վոր ել ենպես

գատարկ, սնանկ ու սերես
վոչ պատահի պարտքատերին,
վոչ յերես լույս աշխարհին:

(Հովհ. Թում., «ԱՆԲԱԽՏ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ»)

§ 105. Աշակերտը մտավ գրախանութ, վոր գիրք
գնի—աշակերտը մտավ գրախանութ՝ գիրք գնելու հառ
մար:—Դյուղացին արտը գնաց, վոր ցորենը հնձի—գյու-
ղացին արտը գնաց՝ ցորենը հնձելու համար:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 112. Ի՞նչ տարբերություն կա նա-
խորդ Ծում անջատման գծից (—) այս կողմ և այն կողմ
դանվող ասացվածների մեջ՝ 1. իմաստի տեսակետից,
2. ձեի տեսակետից:

ՎՈՐՈՇՈՒԹՅՈՒՆ 110. Ստորադասական կապակցություն
ունեցող բարդ ասացվածը կարելի յե պարզել այսինքն՝
այնպես արտահայտել, վոր այլեվս բարդ ասացված ըլինի,
այլ՝ պարզ ասացված, յերկու դիմավոր բայերի փոխարեն՝
մի դիմավոր բայ լինի: Բարդ ասացվածը պարզելով, մենք
նրա իմաստը չենք փոխում:

ԿԱՆՈՆ 43. Բարդ ասացվածը պարզելիս ստորադա-
սական շաղկապն այլեվս չենք դնում, լրացական խոսքը
բայը փոխարինում ենք դերբայով (գնելու, ժողով անելու,
հնձելու—ապառնի դերբայ) կամ վորեվե այլ կերպ, վոր
կտեսնենք հետազայում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 113. Պարզեցե՛ք նպատակի պարագա-
յական խոսքերը հետեվյալ հատվածի մեջ ու գրի առե՛ք:—

ՈՐ.՝ Սերոբը գնաց, վոր ջուր բերի—Սերոբը գնաց
ջուր բերելու կամ Սերոբը գնաց ջրի:

Ուսուցիչը մտավ դասարան, վոր դաս պարապի: Ա-
շակերտը վեր կացավ, վոր դասը պատասխանի: Նա մոտե-
ցավ գրատախտակին, վոր ուսուցչի ասածը գրի: Զնջիւը
վերցրեց, վոր սխալ գրածը ջնջի և ուղիղը գրի: Աշա-
կերտաները տետրակները հանեցին, վոր ուղղածը գրի առ-

նեն։ Ուսուցիչը մեկ-մեկ մոտենում եր աշակերտներին, վոր սխալ գրածները բացատրի և ուղղել տա։

§ 83. Աշակերտը քնից վերկացավ, լեռը լույսը բացվում եր։ — Մենք տուն հասանք, յերբ արևը մտնում եր։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 114. Կազմեցե՛ք նման ասացվածներ։ Գտեք գլխավոր յեվ յերկրորդական մասերը։ Պարզեցե՛ք, թե յերկրորդական խոսքը գլխավորի համար իջնել ի՞նչ լրացում ե ծառայում։

Պարզեցե՛ք վերոհիշյալ յերկու յեվ ձեր կազմած բարդ ասացվածները։

Կանոն հանեցեք, թե լրացական ժամանակի պարագայական խոսքեր, վորոնք գլխավոր խոսքի հետ կապված լինեն հետեւյալ շաղկապներով։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 115. Կազմեցե՛ք ժամանակի պարագայական խոսքեր, վորոնք գլխավոր խոսքի հետ կապված լինեն հետեւյալ շաղկապներով։

1. հենց վոր, թե չե շե շաղկապներով։ — որ։՝ հենց վոր դու յեկար, իես գնացի։

2. քանի, քանի դեռ շաղկապներով։ — որ։՝ քանի դեռ դու ալստեղ ես, նա չի գա։

3. մինչ, մինչեռ, այն ինչ շաղկապներով։ — որ։՝ մինչդեռ յես կարդում եիի, դու խաղ ելիր անում։

4. մինչեվ, մինչեվ վոր շաղկապներով։ — մինչև սենյակը տաքանա, հիվանդի հոգին դուքս կդա։

5. վոր շաղկապով։ — վոր լսեցի, վեր թռա կամ՝ այս վոր լսեցի, վեր թռա։

Այս ասացվածներում լրացական խոսքը նախադաս է (գլխավորից առաջ), թե հետադաս (գլխավորից հետո)։

ՎՈՐՈՇՈՒՄ 111. Լրացում խոսքը, տեղին նայելով, կարող ե նախադաս լինել։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 116. Ուղիշ տեսակի լրացական խոսքը դիտելու համար, կազմեցե՛ք բարդ ասացվածներ՝ ստորեվ մատնանշած շաղկապներով յեվ որինակներով։ — ձեր

կազմած բարդ ասացվածները պարզեցե՛ք ցուց տված կամ
այլ ծեվով.

Ա.) 1. այնպես—ինչպես—որ՝ գիրքդ այնպես պահիք,
ինչպես քո աչքն ես պահում կամ՝ գիրքդ պահիք, ինչպես
քո աչքը՝ գիրքդ պահիք քո աչքի պես:

2. այնպես—կարծես թե, վոնց վոր.—որ՝ այնպես ես
դարձանում, կարծես յերբեք չես տեսել.

3. նոյնչափ—վորշափ.—նա նույնչափ իրավունք ու-
նի, վորչափ դու.

4. քանի—այնքան.—քանի մեծանում ե, այնքան խե-
լոքանում ե.

5. ավելի—քան.—Վաշիկն ավելի յե աշխատում, քան
վարսիկը.

6. այնպես—վոր.—այնպես բարկացավ, վոր իրեն կոր-
դըրեց:

Պարզեցե՛ք, թե այս ասացվածների մեջ յերկրողա-
կան խոսքերը գլխավոր խոսքի վոր քառն ինչպես են
լրացնում, ինչ են ցուց տալիս:

Խոքներդ կազմեցե՛ք ծեվի կամ վորակի յեվ չափ ու
քանակի լրացական պարագալական խոսքեր, պարզեցե՛ք
այդ խոսքերն ու գորի առեք:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 117. Բ.) 1. Վորովնետեվ, ուստի, այդ
պատճառով, ուրեմն.—վորովինետև չեկար, այդ պատճառով
չկարողացար տեսնել=չգալու պատճառով չկարողացար
տեսնել։ Վորովինետև հիվանդ ելիք, դասի չեկար—հիվանդ
լինելու պատճառով դասի չեկար—հիվանդ լինելով, դասի
չեկար։

2. վոր.—յես գնացի Արամի մոտ, վոր գիրքս բերեմ։

3. թե.—մարդ ել չեն ուղարկում, թե մի պատաս-
խան բերի.

4. թե, թե վոր, յեթե, այն ժամանակ, ուզեմն, ապա.—
յեթե յեղանակը լավ լինի, ուրեմն եքսկուրսիա կդնանք.

5. թեյեվ, թեպետ, չնայած վոր, քայց, սակայն, քայց
յեվ այնպես, դարձյալ, այնուամենայնիվ.—թեև շատ ցուքտ

Եր, բայց գնացինք: — Աշուան ալսոր իրեն վատ եր զգում,
ախուամենայնիվ դպրոց լեկավ.

6. ով, ինչ, վորքան, ուր, կուզես, կուզի: — ինչ կուզես
արա, նրան բան չի լինի:

7. թեկուզ, մինչեվ անգամ յեթե, նույնիսկ յեթե, դաշ-
ճյալ, ելի: — թեկուզ կրակ դառնաս, նրան վոչինչ չես անի:

Պարզեցնք ալս ասացվածներում գլխավոր և լրացա-
կան խոսքերի հարաբերությունը, ցուց տվեք, թե վորն
և գլխավոր, վերը լրացական: Ինչ անուն կտաք այդ լրա-
ցական խոսքերին:

Ինքներդ կազմեցեք նիմունի (պատճառի, նպատակի,
ալայմանի, հակառակ հիմունքի) պարագայական խոսքեր,
սլարզեցնք այդ խոսքերն ու զրի առեք:

Ցուց տվեք ասացվածները, խոսքերը, նրանց կապա-
կցությունը, գլխավոր յեվ լրացական մասերը.

1. Գլխատության մոայլ բեմին դու գլուխդ վայր կրերես,
և զանգերը կղողանջեն, և դաշույնը կփողփողի,
ու մկանունք կաղաղակեն, և կլինի շքեղ հանգես,
մեծապայծառ տոն ու հանդես կարմիր արյան ու մետաղի:
Յեվ արեւ ծիրանավառ, և յերեկոն ծծմբաշունչ,
յերեկոն ու արեգակը արնափրփուր, հրդեհավառ
կտեսնեն, թե ինչպես ես դու կրում պատիժը անտրառունչ,
թե ինչպես լուռ կանչնչանան քո աշքերն ու զեմքը պայժառ:

(Կարմիր Արև, «Գլուխել»)

2. Կարմիր ու կարմիր ձմռան որերում,
նույնպես գարնանը — որմբը զովարար.
յերը ծիծեռնակը իր բունս և հյուսում
գարնան վերադարձ առնելու համար,
իսկ ձագուկները կուշտ ու ապահով՝
միշտ ճռվողում են իրանց սորը հետ,
կարծես ուզում են՝ ուրախ յերգերով
ինձ ծաղրի բռնել ու հեգնել հավետ:

(Կարմիր Արև, «ՇԱՊԿԻ ՅԵՐԴԼ»)

3. Սահում ե մաքոքը, զնգում մեքենան,
անդուլ աշխատում ու յերգում են նրանք.
— «Հին Գերմանիա, պատան ենք գործում քեզ համար,
նրան մենք հյուսում ենք մեր անեծքը վառ—
գործում ենք անվերջ, անդադար»:
(Կարսիր Արև, «ԶՈՒԼՀԱԿՆԵՐԸ»)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ. 118. Կազմեցե՛ք ասացվածներ՝ ստորեւ
բերված ասացվածների նմանությամբ յեվ պարզեցե՛ք
ցույց տված ճեղով.

Ա. 1. Ովքեր հիվանդ են, նրանք կարող են գնալ—
հիվանդները կարող են գնալ:

2. Ով խելք ունի, թող իր զլուխն ազատի— խելք
ունեցողը թող իր զլուխն ազատի:

3. Ով ալդ գիտե, նա չի զարմանա—ալդ իմացողը չի
զարմանա:

4. Ինձ հայտնի լե, վոր Արամն այստեղ ե—ինձ հայտնի
յե Արամի այստեղ լինելը:

5. Բանն այն չի, վոր միայն ուտես, այլ վոր նաև
աշխատես—բանը միայն ուտելը չե, այլ նաև աշխատելը:

6. Ժամանակ ե, վոր մենք գնանք—ժամանակ ե մեղ
գնալու:

ՀԱՐՑ.—Այս լրացական խոսքերը գլխավոր խոսքի
վեր բառի համար ինչ լրացում են:

Ինքներդ կազմեցե՛ք ասացվածներ՝ լրացական յենքա-
կա խոսքերով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ. 119. Բ. 1. Ով վոր փող ունի, նրա-
նից առ—փող ունեցողից առ:

2. Վորը հավանեմ, այն կվերցնեմ—հավանածու կվեր-
ցընեմ:

3. Նա հայտնեց, վոր Արշակը յեկել ե—նա հայտնեց
Արշակի գալը:

4. Վախենում եմ, վոր նա բարկանա—նրա բարկա-
նալուց եմ վախենում:

5. Զեմ իմանում, թե յեկողն ով ե—յեկողի ով լինելը չեմ իմանում:

Ինքներդ կազմեցեք լրացական խնդիր խոսքերը:
ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 120. Կազմեցե՛ք ասացվածներ՝ ստորեվ բերված ասացվածների նման յեվ պարզեցե՛ք ցուց տված ծեվով.

1. Տնւր ինձ այն գիրքը, վոր դու կարդացել ես—քո կարդացած գիրքն ինձ տնւր:

2. Կատարիր այն խոսքը, վոր քեզ ասել եմ—քեզ ասածս խոսքը կատարիր:

3. Պարտաճանաչ չե այն աշակերտը, վոր իր դասը չի պատրաստում—իր դասը չպատրաստող աշակերտը պարտաճանաչ չե:

Այս ասացվածներում լրացական խոսքերը դիմավոր խոսքի վհր բառի իմաստն են լրացնում:

Կանոն դուրս բերեք, թե լրացման լրացում խոսքերն ի՞նչպես կարելի յե պարզել:

Պարզեցե՛ք հետեւյալ ասացվածները.

1. Այն տղան, վոր խաղում եր, յեկավ:

2. Այն գիրքը, վոր քեզ եմ տվել, տնւր:

3. Այն քաղաքը, ուր դու յես ապրում, գեղեցիկ եւ:

4. Այն գիշերը, յերբ դու մըսեցիր, ցուրտ եր:

Այս ասացվածներում լրացական խոսքերն ի՞նչպես են դասավորված:

ՎՈՐՈՇՈՒՄ 112. Լրացական խոսքերը, նայելով տեղին, կարող են լինել նայեվ միջադաս։ Ուժեմն, լրացական խոսքերը գլխավոր խոսքի նկատմամբ, նայելով տեղին, կարող են լինել նախադաս, միջադաս յեվ վերջադաս։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 121. Կազմեցե՛ք ասացվածներ, վորոնց մեջ լինեն ուղղակի խոսքեր (ուրիշի ասած խոսքեր) յեվ ուղղակի խոսքերն անուղղակի դարձրե՛ք ստորեվ բարած որինակների ծեվով.

1. Աղատն ասաց. «Յես ալսոր հիվանդ եմ, դասի չեմ կարող գալ»—Աղատն ասաց, վոր ինքն ալսոր հիվանդ ե, դասի գալ չի կարող:

2. Միսակն ասաց. «Քրիգնը, յես ուժեղ եմ, իսկ դու թուլ են»—Միսակն ասաց գրիգորին, թե ինքն ուժեղ ե, իսկ Գրիգորը՝ թուլ:

3. Մինասն ասաց. «Բազրատին տեսա, իսկ Ոննիկին տեսնել չկարողացաւ»—Մինասն ասաց, վոր Բազրատին տեսնել ե, իսկ Ոննիկին չի կարողացել տեսնել:

ՎՈՐՈՇՈՒՄ 113. Խոսքն աւղակի յի կոշվում, յերք ուրիշի խոսքերն անփոփոխ, ինչպես ուրիշն ասել ե, մեջ են ըերվում: Ուղղակի խոսքն անուղղակի դարձնելու համար առաջին ու յերկրորդ դեմքերը փոխվում են յերրորդ դեմքի, հրամայական յեղանակի բայց փոխվում ե ըղծականի, իսկ կոշականը դառնում ե անուղղակի խոսքի յենթակա կամ զլիավոր խոսքի բայի ինդիք լրացում:

ՎՈՐԺՈՒԹՅՈՒՆ 122. Դիտեցե՞ք փակագծերում առնվագած խոսքերը:

1. Սմբատ Աղասյանը (այդ ե նրա անուն-ազգանունը) աշխորհրդի նախագահ ե ընտրված:

2. Սարգսիսը (միթե չես հիշում) այնուեղ եք:

3. Շուկայում (հենց նոր իմացա) միսն աֆանացել ե:

ՎՈՐՈՇՈՒՄ 114. Ան խոսքերը, վորոնք մօնում են որից խոսքերի մնջ, բայց քերականորեն չեն կապակցվուանքանց հետ, կամ շատ յերկրորդաբար են պարզում նրանց իմաստը, կոշվում են միջանկյալ խոսքեր:

ԿԱՆՈՆ 44. Միջանկյալ խոսքերն առնվում են փակագծերի կամ ստորակետերի մեջ:

Ցո՛յց տվեք զլիավոր ու լրացական խոսքերը ու վերջիններիս տեսակները.

1. Յեթե տեղիցը վեր կացավ հանկարծ զլուխը մեխած մահակը ձեռին՝ ձեն արավ, կանչեց դաշում շներին:

ու թիրտ, վայրենի կանգնեց ինչպես ուսր,—
այնժամ կիսանաք, թե ինչի՞ համար
թե զող, թե գաղան, հենց դատարկ վախից,
հեռու յեն փախչում նրա փարախից:

(Կարմիր Արև, «ՀՈՌԵՑԻ ՍԱՐՈՆ»)

2. Ու մինչդեռ Մոսին ընկերախաղի,

կատակի տալով թողած եր իրեն,
ուժ արագ Սարոն, ծընկեց կատաղի,
գետնեց ընկերին ու չոքեց վըրեն:

3. Յեզ յերբ յերեկոն հանդարտիկ ու լուռ

սարերից իջնում, խավարն ե պատում,
նրա բայաթին վողբում ե տխուր,
ընկեր սարերին խոսում, գանգատվում:

(Կարմիր Արև, «ԱՆՈՒՆ»)

4. Յեզք վոր, ծերունի, մեռնելու լինեմ,—

և գիտեմ՝ յերկար չպիսի ապրեմ,—
դու հրամայիր գիտկս տանելու
մեր կանաչ այգին, այնտեղ, ուր յերկու
ճերմակ հակակի թփեր են աճում...

(Հովհ. Թոռմ. Թարգմ. «ՄԾԻՄԻ»)

ՎԱՐԺՈՒԽԹՅՈՒՆ 123. Վերլուծեցէք ստորև բերված
բարդ ասացվածը, ցուց տալով, թե վոր խոսքը վորի հետ
ինչ յեղանակով ե կապված, վորն ե ուրուն իմաստ ար-
տահայտում, վորն ե լրացական խոսք և թե լրացական
խոսքը այս կամ այն խոսքի իմաստն ինչպես ե լրաց-
նում...—

Յերբ Սուրբիկը գործն ավարտեց, վեր կացավ, զգեստ-
ները հագավ, գնաց քաղաքի մոտով հոսող գետը, ուր
հաճախ լողացել եր, զգեստները հանեց, նետվեց սառնո-
րակ ալիքների մեջ և, վորովհետև գիտեր, թե արևի ջեր-
մությունը վորքան ոգտակար ե (ուսուցչից եր լսել), մեկ-
մեկ դուրս եր գալիս, զիսարկից գլուխը զնում, մերկ պատ-
կում ջինջ յերկնքի տակ, արևի վաննա ընդունում (մարդկի

չկային մոտերքը), նորից ջուրը նետվում, և ալսալես՝ մի-
քանի անգամ, վորից հետո զգեստները հազավ, շտապեց
դպրոց, վոր չուշանա աշխորհրդի ժողովի նիստից (նախա-
զան ինքն եր):

Դիտեցեք այս բարդ ասացվածի կետադրությունը:

VIII. ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(Ամփոփում ճավելու մներով)

— Սոռակես —

§ 106. Դիտեցեք սոռակետը (,).

Ա. Յերևանը, Թիֆլիսը, Բագում և Բաթումը քաղաք-
ներ են: Յես, դու, նա Արամին տեսել ենք:

Դու սիրում ես կանաչ, կարմիր, կապույտ և մանու-
շակագույն գույները:

Բ. Բոլոր կողմերից հավաքված յելան՝ թուրք, իտա-
լացի, հնդիկ, վրացի, ոռու, շոտլանդացի, հայ, խունխուզ,
թաթար, կիրդիզ, չինացի:

(Կարմիր Արև, «ԱՄԵՆԱԳՈՒՄ»)

ԿԱՆԱՆ 45. Խոսքի մեջ ճարանման իմաստով լրացում-
ները կամ խոսքերի բազմակի մասերն իրարից բաժանվում
են ստորակետով, յեթե յեվ, ու շաղկապներով միացած շեն:

Գ. Մերնք, յեկ այստեղ:—Տիգրան, գնա տուն:—Իմ
իոքրիկ կատուն, Վաչիկ, չգիտե՞ս ուր ե:—Գիրքդ տան,
Սեդիկ:

ԿԱՆԱՆ 46. Կոշական բառերը խոսքից բաժանվում են
ստորակետով, յեթե նախադաս են կամ վերջադաս, իսկ
յեթե միջադաս են, յիրկու կողմից առնվում են ստորակե-
տերի մնջ:

Դ. 1. Մեր Արշակը, կարծեմ, շուկա գնաց:

2. Արամը, հենց նոր իմացա, գնացել ե Յերևան:

3. Տները, ինչպես առացի, Նալիբոյան այդ քաղաքում ցածրիկ են:

ԿԱՆՈՆ 47. Միջանկյալ բառերն ու միջանկյալ նախադասություններն առնվում են ստորագետերի միջ:

Ե. Գարունը յեկավ, վարդը փթթեց, սոխակն սկսեց դալլացիլ:—Գնացի, տեսա, վերադարձա ու պատմեցի:

ԿԱՆՈՆ 48. Համադաս, մոքերով միմյանց մոտիկ կարծ նախադասությունները բաժանվում են ստորագետով. վերջին յերկուսը, յեթե միացած են յեվ, ու շաղկապներով, ստորագետով շեն բաժանվում:

Զ. Յեվ գնացի, և տեսա, և վերադարձա:—Յե գնացի, թե տեսա, թե վերադարձա:—Յես գնացի, և դու յեկար:

ԿԱՆՈՆ 49. Յերը միյելնոյն յենթակայով համադաս խոսքերը կապված են յեվ, թե շաղկապներով, վոր կրկնվում են համադաս խոսքերից ամեն մնկի վրա, այդ դեպքում համադաս խոսքերը բաժանվում են ստորագետերով: Յեթե համադաս խոսքերը կապվում են յեվ, ու շաղկապներով, բայց տարբեր յենթականեր ունեն, բաժանվում են ստորագետով:

Է. Յես յեկա, նաև դու յեկար:—Բոլորը յեկել եցին, մինչև անգամ Դրիգորն ել եր յեկել:—Վոչ միայն յես եցի յեկել, այլև դու:—Մերթ նստում եցինք, մերթ կանգնում:—Յերբեմն տանն եմ լինում, յերբեմն դպրոցում:—Նա ապուշ ե, այսինքն՝ բան չի հասկանում:—Դու մըսել ես, ուստի հիվանդ ես:—Կամ պիտի պարապես, կամ պիտի խաղաս:—Պիտի դար, բայց չեկավ:—Յես կարգում եմ, իսկ դու զըսում ես:

ԿԱՆՈՆ 50. Համադաս կարծ ու պարզ խոսքերը, վորոնք միացած են համադասական շաղկապներով, բաժանվում են ստորագետով: Կամ շաղկապից առաջ ստորագետ չի դրվում, յեթե բացատրական նշանակությամբ ե գործ ածվում կամ նույնություն ե ցույց տալիս (Մասիս կամ Արարատ):

Ը. Գնացի, վոր նրան տեսնեմ: — Յես լեկա, լերբ լուգ-
ըլ բացվում եր: — Տեսա այն տղալին, վոր հիվանդ եր: —
Այն տղան, վոր հիվանդ եր, առողջացավ:

ԿԱՆԱՆ 51. Բարդ ասացվածի զիխավոր յեվ լրացա-
կան մասերը միացնող ստորադասական շաղկապներից ա-
ռաջ ստորակետ ե դրվում: Միջադաս լրացական խոսքը
յերկու կողմից ստորակետերի մեջ ե առնվում:

Թ. Յերբ վոր գարունը գալիս ե... Ուր վոր գնաս...
Ինչ վոր ասես... Ով վոր տեսնի... Թե վոր գաս...
Ճիշտ վոր... Իսկապես վոր...

ԿԱՆԱՆ 52. Յերբ վոր շաղկապն ավելորդ կերպով
իջրեվ բարմատար գործ ե ածվում ով, ինչ, ուր... յեվ այլ
բառերից հետո, այդ բառերից ստորակետով չի բաժանվում:

Դիտեցե՞ք ստորակետը յեվ բացատրեցե՞ք.

Զիղջը մնաց, տնպահ գարձավ,
ճալը բոլոր փողերն առավ,
առավ, նստեց նավի սիջին,
հասավ Մըսըր, Զինումաչին,
մարս, Հընդստան,
Արարբստան...
Ել թանգագին քիրմանի շալ,
ել մարգարիտ, զմրուխտ ու լալ,
հնդու խուրմա, փըստա, բաղամ,
և... զիր մեկի անունը տամ.
Ինչ վոր տեսավ, աչքը սիրեց,
բոլ բոլ առավ, նավը լցըեց:

(Հովհ. Թում., «ԱՆԲԱԽՏ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ»)

Բ. Բ Ա Լ Բ

§ 107. Դիտեցե՞ք բութը (').

Ա. 1. Արա այն, ինչ վոր կուզես—Արա՝ ինչ վոր
կուզես:

2. Լսիր, թե ինչ եմ ասում—Լսիր՝ ինչ եմ ասում:

3. Յես Յերեան եմ գնում, իսկ դու Քանաքեռ եւ գնում:— Յես Յերեան եմ գնում, իսկ դու՝ Քանաքեռ:

4. Իմ ընկերներն են՝ Արամը, Սիսակը, Մուկուչն ու Շուշիկը:

5. Նախ՝ դու չար ես, յերկրորդ՝ ծուզ ես, յերրորդ՝ անբարեխիղճ ես:

6. Յերեանը՝ Հայաստանի մալրաքաղաքը՝ դտնվում ե Հրազդանի ափին:

7. Յես Արամին զգուշացրի՝ առանց նրան վիրավորելու:

8. Հողժողկոմատի՝ դպրոցին նվիրած հողամասը մեծ ե:

Բ. 1. Ասում են՝ ուռին աղջիկ եր ինձ պես:

2. Այս, իմ բախտը կանչում ե ինձ, չեմ հասկանում՝ դեպի ուր ..

3. Դարերի մշուշի վրա գրում եր՝ «Վեց վիլայեթ...»:

4. Սողոն հուսահատ հարցնում եր՝ «Ինչու, ինչու...»: ԿԱՆԱՐԻ 53. Բութ դրվում ե.

1. Գլխավոր յեզ լրացական խոսքերի մեջ, յերբ նրանց միացնող ստորագասական շաղկավը զեղջված ե (որ՝ գնաց՝ նրան տեսնի, փոխանակ՝ գնաց, վոր նրան տեսնի):

2. Համադաս խոսքերից յերկրորդի մեջ, յերբ մի բառ (որ՝ ըայը) զեղջված ե (որ՝ յես գնում եմ տուն, իսկ դու շուկա = ... դու գնում ես շուկա):

3. Թվարկությունից առաջ (որ՝ իմ ընկերներն են՝ Արամը, Սիսակը...):

4. Թվարկություն ցուց տվող բառերի վրա (որ՝ նախապա, առաջին, յերկրորդ և այն):

5. Դերբայ լրացումների յնվ խոսքի մեջ, յերբ դերբայ լրացումներն իրենց հերթին լրացումներ ունեն:

6. Կարճ ուղղակի խոսքից առաջ (որ՝ ասաց՝ լավ կդամ.՝ կամ թե՝ ասաց՝ «լավ, կդամ»):

գ. Մ ի շ ա կ ե ս

§ 86. Դիտեցեք միջակետը (.)։

Ա. 1. Ցեղեկոյան ժամի վեցին լեռ հասա դրուդ. այդ ժամանակ արևն արդեն մայր եր մտնում։

2. Կամաց մի գնա, վոր ուշանաս. արագ գնա, վոր համես։

3. Պետրոսն ասաց. «Այսոր լերեկոյան մեր տանը կլինեմ։»

Բ. 1. Ամպերը դանդաղ ուղարկի նման՝
նոր են ջուր խմած՝ ձորից բարձրանում.
բարոտ թիկունքից Զաթինդաղ լեռան
նոր և արել պոռւնդը հանում։

(Կարմիր Արև, «ԱնՌԻՇ»)

2. Պատասխանը կարճ և ազդու յեւ. վրկության միշտը՝ մեկ. բավական չի ստեղծել մեքենաներ ու գործիքներ, բավական չեւ աքնել ու չարչարվել գործարանների մրի մեջ. պետք է տեր գառնալ այդ մեքենաներին, այդ թևավոր հզոր գործիքներին, պետք է նրանց ծառայեցնել հանուրի, ամբողջի ոգտին։

(Կարմիր Արև, «ՄԵՐԵՆԱԽՆԵՐՆ ՈՒ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՐԴՆ»)

ԿԱՆԹՆ 54. Միջակետով ըաժանվում են.

1. Համադաս յերկար խոսքերը, վորոնք վրուշ ինքնուրույնություն ունեն։

2. Բարդ համադաս խոսքերը, վորոնք յերկրորդական խոսքեր ունեն։

3. Ռողակի խոսքերից առաջ, այսինքն՝ յերք որիշի խոսքերն անփոփոխ, ինչպես որիշն և ասել, շակերտների մեջ են քերզում, ուղղակի խոսքի սկզբում, շակերտներից առաջ միջակետ և դրվում։

4. Վերնազրեցից հետո:

Ե. Տես, հարցական յեվ յերկար

§ 87. Դիտեցե՞ք վերշակետը (։).

1. Յես գնացի, վոր նրան տեսնեմ. բայց, վորովհետեւ տանը չեր, չկարողացա տեսնել:

ԿԱՆՈՆ 55. Վերջակետ դրվում ե լրիվ արտահայտված մոռի կամ ասացվածի վերջը:

Ե. Տես, հարցական յեվ յերկար

§ 88. Դիտեցե՞ք տետը (՝), հարցականը (՝) յեվ յերկար նշանը (՝).

1. Ե՛յ, դուք, Բոկֆելեր, Ստիննես, Մորդան...
Հսում եք, մենք դեռ կգանք...

2. Գիտե՞ք, թե աշխարհի արգանդից
ինչքան հանճարեղ մարդիկ,
ինչքան, ինչքան կրոմվել....
յեղել են, կան դեռ
ու կգան:

3. Արի, ջան իդիթ, արի, անիրանդ....
ել թի ուշացնի, յես շատ եմ կացել
ել մի լացացնի, յես շատ եմ լացել....

ԿԱՆՈՆ 56. ա. Կոշականների, հրամայական բայերի
յեվ կարծ արտասանվող ծայնարկությունների վրա տես
ե դրվում: Եեթե կոշականն ածական ունի, շեշտն անցնում
ե ածականին:

բ. Հարց արտահայտող բառերի վրա հարցական և
դրվում:

գ. Եերկար արտասանվող բառերի, ծայնարկությունների վրա յերկար կամ բացազանշական նշան ե դրվում:

զ. Զակերեաներ

§ 89. Դիտեցեք շակերեաները («», «»).

1. Ասաց. «Խեղճ տղա, շատ ես չարչարվում»:

2. Դաշտերում անթաղ մնաց Պողոսը — «քաջ շանթեղար»:

Ո՞ւր և այդ «քաջը», թող մի դուրս գա:

3. Մենք Հ. Թումանյանի «Անուշ» պոեմն ենք կարդում: — Յես, «Խորհրդային Հայաստան» եմ ստանում: — Մենք «Կինո պրոլետար» դնացինք:

ԿԱՆՈՆ 53. ա. Ուրիշի խոսքերն առնվում են շակերտների մեջ, յեթե ուղղակի յեն ըերվում, ինչպես ուրիշն ե ասել, առանց փոփոխելու:

բ. Եերբ բառը հակառակ իմաստով կամ հեզնական մտքով ե գործ ածվում, առնվում ե շակերտների մեջ:

գ. Դրվածքների, լրագրերի, հանդեսների անունները նույնպես շակերտների մեջ են առնվում:

Է. Կախման կետեր

§ 107. Դիտեցե՞ք կախման կետերը (...).

ա. 1. Հանկարծ մի պայմանն... ահոելի խուճապ... չորս կողմ դիակներ... աշ ու ձախ փախուստ...

2. Ուզեցի մեկ... բայց չե, դեռ թող մնա, չեմ ասի:

բ. Ի՞նչ են հառաջում... են սկ եր, մի տես, վոր դուքսը հանկարծ աղմկեց եսպես... Ո՞վ ե սպանել... Մոսին... սւմ... սւր... — Անուշ, հեր, անուշ... ջնուր հասցըրեք, ջնուր...

ԿԱՆՈՆ 57. Կախման կետեր (յերեք կետ) դրվում են.

1. Այն ժամանակ, յերբ խոսքերը, զեղչված քայերով, իրար են հաջորդում, տպավորություն թողնելու կամ զգացմունք արտահայտելու համար:

2. Եերբ խոսքն առկախ, կիսատ ե թողնվում՝ ինչ-ինչ պատճառներով, յերեմն այնպես, վոր ընթերցողը կարող ե գուշակելով հասկանալ:

բ. Բազմակետ

§ 108. Դիտեցեք բազմակետը (...).

Մեր առջև ձգված եր դարավոր խիտ անտառք.....
Բանվորներն ու մեքենաները ճանապարհն անց ելին կաց-
նում այդ անտառի միջով և այս:

ԿԱՆՈՆ 58. Բազմակետ (առնվազն չորս կետ) դըլ-
վում ե այն ժամանակ, յերբ այս կամ այն գրվածքից
վորեվե հատված ընթաց վորոշ կտորներ բաց ենք թող-
նում:

բ. Դ կ ծ

§ 109. Դիտեցեք զիծը (—).

1. — Սահակ, ուր ելիր.

— Վահ, չգիտես. քաղաք ելի զնացել:

— Խնչմա:

— Բանման առնելու,

2. — Թող, կանչում են ինձ... մերս կիմանա...

— Զե, Աննաշ, քիչ եւ, միքիչ եւ մնա...

— Զե, թող յես գնամ... միս, ինչ խենթ եմ յես...

(Կարմիր Արև, «ԱՆՌԻՇ»)

3. Անառիկ ե այդ բերդը—ամենքը գիտեն—և զավա-
ճանությունն ե, նենդ, ստոր նալիքյան դավաճանությունն
ե այդ բերդը հանձնել լեկվոր որիկաներին:

(Կարմիր Արև, «ՅԵՐԿԻՐ ՆԱՅԻՐԻ»)

ԿԱՆՈՆ 59. Յերբ խոսակցություն ե տեղի ունենամ
յերկու անօի մեջ, յուրաքանչյուրի խոսքը պետք ե նոր
տողից սկսել յեվ սկիզբը զիծ դնել: Այդ ձեվքը ոիւալոգի
կամ տրամախոսական ձեվ ե կոչվում: Միշանկյալ խոսքե-
րը քոն խոսքից կարող են զծերով բաժանվել կամ զիծ
ու ստորակետով:

Ճ Գծիկ կամ միուրան գիծ

§ 110. Դիտեցե՞ք զծիկը կամ միուրյան գիծը (-):

- ա. 1. Յերկինքը կանաչ-կարմիր և կապել:
2. Դրանք մանր-մուռք բաներ են:
3. Մենք ծուռ-մուռ ճանապարհներով դնացինք:
4. Կլոր-մլոր, սեխիկ-մեխիկ, աման-չաման, տղարասլ-սարապ:

բ. 1. Շալակած կարոտ-բաղձանք,
վորպես մի թափառ բեղվին,
բյուրաբյուր ճամպեք անցա,
աչք հառած գալիք հեռվին:

(Կարմիր Արև, «ՆՈՐ ՈՐԵՐԻ ՃԱՄՊԻՆ»)

2. Վուշ-վուշ, Անուշ, վուշ-վուշ, քուրիկ....

3. Դե-Ալ, Դե-Գետ. և այլ հսկաներ, խոլ-խոլ հսկա-ներ հնոց աշխարհի....

4. Բեղը ծիլ-ծիլ, բոյը թիլ-թիլ են լարի....

ԿԱՆԱՆ 60. Միության զիծ դրվում ե.

1. Յերկու բառի մեջ, վորոնք մի իմաստ են արտա-հայտում:

2. Փոփոխությամբ կրկնվող բարդ բառերի մեջ:

3. Յերբեմն, նոյնությամբ կրկնվող (մեծ մասամբ միա-վանկ) բառերի մեջ:

Խնքնեղդ ասացե՞ք.

1. ՅԵՐԾ են փակագծեր դրվում:

2. ՅԵՐԾ և տողադարձի նշան դրվում:

Բացատրեցե՞ք ստորեվ բերած հատվածների կետա-շբությունը.

Քաջքերն եւ այրից դուռնա-դհուլով
ճշում են, կանչում ծանոթ ձայներով.

1. — Սաքո, Սաքո, մեզ մնատ արի,
արի մեզ մոտ հարսանիք,

տե՛ս՝ ինչ ուրախ պար հնք գալի՝
սիրուն, ջահել հարսն-աղջիկ:

- Ինձ մոտ արի՝ ձվածեղ անեմ...
ինձ մոտ արի՝ ըլիթ տամ...
յես քո հոքիրն... յես քո նանն եմ,
յես ել՝ ազիդ բարեկամ...

- Սաքո՞ւ, Սաքո՞ւ, մեղ մատ արի.
ես աղջիկը, տես, ինչ լավն ա...
տե՛ս՝ ինչ ուրախ պար հնք գալի.
տարանի-նամ... տարանա-նամ...

- Այն ինչ Դերետից ալքեր են թռչում,
ալիքներ յելնում, ալիքներ ուռչում,
խալարի միջին ծփում են կայտառ՝
Բռնեցնք, փախավ Սաքոն խելագար...

(Կարմիր Արև, «ԼՈՌԵՑԻ ՍԱՐԱՆ»)

2. — Լավ ես ասում դու, ծերունի, —
ասավ Դավիթն ալևորին, —
բայց թագավորն ուր ե հիմի,
վոր սև կապես նրա որին:

- Մեծ վրանում քնած ե նա,
են, վոր միջից ծուխը կելնի.
են ծուխն ել հո ծուխ չի, վոր կա,
գոլորշին ե իր բերանի.

Ասին, դեպի Մեծ վրանը
ասպանդակեց Դավիթ իր ձին,
քշեց, զնաց ու դռանը
դռաց կանգնած արաբներին.

- Ուր ե, ասավ, ինչ ե կորել,
դուրս կանչեցնք՝ դա ասպարեղ,
թե մահ չունի՝ մահ եմ բերել,
գըրող չունի՝ դրողն եմ յես...

- Մելիքն, ասին, քուն ե մտել,
ոխաը որով պետք ե քնի.
յերեք որն ե դեռ անցկացել,
չորս որ ել կա՞ քունը առնի.

— Ի՞նչ, բերել և աղքատ ու խեղճ
խալիսին լցրել ծովը արյունի,
ինքը մտել վրանի մեջ
ոխտը որով հանգիստ քընի...

Թընել մընել չեմ հասկանում.
Վեր կացրեք շուտ՝ դուրս դա մեյդան,
Ենպես դըրան քընացնեմ,
Վոր չզարթնի ել հավիտյան:

(Կարմիր Արև, «ՍԱՍՈՒՆԾԻ ԴԱՎԻԹԸ»)


ՎՈՐՈՇՈՒՄ 114. Կետադրության նշանները բաժանվում են յերեք խմբի.


Ա) 1. Վերջակետ, 2. միջակետ, 3. ստորակետ, 4. ըութ.—
այս չորսը ՏՐՈՒԹՅԱՆ նշաններ են կոչվում, վորոնցով արտահայտվում են բառերի տրոհությունը կամ բաժանումը, բառերն իրար հետ շշկոթելու համար անհրաժեշտ դադարը:


Բ) 1. Շեշտ, 2. բացազանշական կամ յերկար, 3. հարցական.—այս լերեքը առօգանության նշաններ են կոչվում, վորոնցով արտահայտվում են խոսողի ձայնի առողջանությունը կամ յեղանակավորումը:


Գ) 1. Զակերտներ, 2. փակազծեր, 3. կախման կետեր կամ յերեք կետ, 4. բազմակետ, 5. անջատման զիծ, 6. միության զիծ, 7. տողադարձի նշան.—այս լոթը բացահայտության նշաններ են կոչվում, վորոնք գրվածքի միտքը պլոտավորապես տեսողությամբ են պարզում, բացահայտում:











108

10-180

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0027423

A ⁱⁱ
2880